

**ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐՍ - ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ
ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ
(1920 թ. հունիս – 1920 թ. նոյեմբեր)**

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՍՊԱՅԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

*ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ՝
ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ*

**БОЕВЫЕ ДЕЙСТВИЯ НА
КАРС - АЛЕКСАНДРОПОЛЬСКОМ
НАПРАВЛЕНИИ
(ИЮНЬ – НОЯБРЬ 1920 г.)**

**В ВОСПОМИНАНИЯХ ОФИЦЕРА
АРМЯНСКОЙ АРМИИ**

СОСТАВИЛ ВЛАДИМИР АРУТЮНЯН

**FIGHTING ON THE DIRECTION
KARS - ALEXANDROPOL
(JUNE - NOVEMBER 1920)**

**IN THE MEMORIES OF
ARMENIAN ARMY OFFICER**

MADE BY VLADIMIR HARUTYUNYAN

ԵՐԵՎԱՆ 2019

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

Հ 422

Հարությունյան Վլադիմիր

Հ 422 Մարտական գործողությունները Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ (1920թ. հունիս-1920թ. նոյեմբեր): Հայկական բանակի սպայի հուշերում/
Վ. Հարությունյան.- Եր.: Հեղ. հրատ., 2019.- 240 էջ:

Գրքում բերված են Հայաստանի Առաջին Հանրապետության բանակի սպայի հուշերը, որտեղ հեղինակը ներկայացնում է բոլոր հայ – թուրքական պատերազմի Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ բոլոր մարտական գործողությունների ժամանակագրությունն ու ընթացքը՝ 1920թ. հունիսից մինչև 1920 թ. նոյեմբեր:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-0-3016-6

©Հարությունյան Վլադիմիր, 2019

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՈԼՈՐ ԱՅՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ,
ՈՎՔԵՐ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ ԿԱՏԱՐԵՅԻՆ
ԻՐԵՆՑ ՊԱՐՏՔՆ ԱՅԴ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԿԱՏՄԱՄԲ

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Ներածական այս բաժնում մենք ցանկանում ենք ընթերցողին աստիճանաբար ներգրավել և, նույնիսկ, ներքաշել այն դեպքերի և իրադարձությունների մեջ, որոնց մասին խոսվում է նրա ուշադրությանը ներկայացվող արխիվային այս նյութում: Հորդորում ենք ընթերցողին չշտապել և միանգամից չանցնել բուն նյութի ուսումնասիրմանը, այլ համբերատար և ուշադիր ընթերցել ամբողջ նախաբանը: Դա, նախ, առավել դյուրին կդարձնի շարադրված նյութի իմաստային-խորքային ընկալումը և, միաժամանակ, կհեշտացնի հենց նյութի ընթերցումը, քանզի նման տիպի շարադրանքներում անխուսափելի են մի շարք զուտ տեխնիկական բնույթի հարցեր, որոնց վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումները մենք բերում ենք տվյալ բաժնում:

Եվ այսպես.

1. Ինչի մասին է ներկայացվող արխիվային նյութը

Ներկայացվող արխիվային նյութը Հայաստանի Առաջին Հանրապետության (հետայսու, եթե հատուկ շեշտելու անհրաժեշտություն չկա՝ պարզապես Հայաստանի Հանրապետություն, ՀՀ) բանակի սպայի հիշողութ-

յամբ վերականգնված գրառումներն են¹, որտեղ հուշերի հեղինակը ներկայացնում է այն բոլոր մարտական գործողություններն ու նրանց ընթացքը, որոնք տեղի են ունեցել 1920 թ. հունիսի կեսերից մինչև 1920թ. նոյեմբերի կեսերը հայ-թուրքական պատերազմի Կարս-Ալեքսանդրապոլ ռազմավարական ուղղությամբ²:

Շարադրանքը սկսվում է հայկական զինուժի կողմից Օլթիի շրջանը գրավելով³ և ավարտվում հայ-թուրքական զինադադարի կնքումով, որով արձանագրվեց այդ պատերազմում Հայաստանի Հանրապետության կրած ծանր պարտությունը, ինչի արդյունքում էլ դադարեց նաև անկախ հայկական պետության գոյությունը:

¹ Արխիվային նյութի («Համագային» հայ կրթական և մշակութային միության կենտրոնական արխիվ, Սիմոն Վրացյանի ֆոնդ, գործ 373) թվայնացված տարբերակը մեզ տրամադրել է Մայրլ Բաբայանը:

² Հենց այս ռազմավարական ուղղությամբ զարգացած ռազմական գործողությունների արդյունքով կանխորոշվեց Հայաստանի Առաջին Հանրապետության ճակատագիրը:

³ Օլթի – քաղաք, գյուղաքաղաք Կարսի մարզում: Տե՛ս Թ.Խ. Հակոբյան, Մտ.Տ.Մելիք-Բախշյան, Հ.Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (հետայսու՝ ՀՀՇՏԲ), հատոր (հ.) 5, Երևան, 2001, էջ 462: Նկարագրվող դեպքերի ժամանակ Օլթի քաղաքը և շրջանը գտնվում էին քեմալական ուժերի փաստացի վերահսկողության տակ: Օլթիի ռազմական օպերացիան իրականացնելու արդյունքում հայկական զորքն առաջացավ և կանգ առավ Օլթի քաղաքից և նախապատերազմյան ռուս-թուրքական սահմանից շատ կարճ հեռավորության վրա: Տե՛ս Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.3, Երևան, 2015, էջ 367:

Ձեռագիրը խիստ հազեցված է տարբեր բնակավայրերի, այլևայլ տեղանունների հիշատակումներով և անհրաժեշտություն կա այդ առումով բերել որոշ պարզաբանումներ ու բացատրություններ: Քանի որ դեպքերի ընթացքի ամենակարևոր հատվածը կապված է Կարսի տարածքի հետ, նախ տանք որոշ պարզաբանումներ այդ տարածաշրջանի վերաբերյալ: Մեզանում ընդունված է գրեթե համարժեքորեն գործածել Կարսի մարզ և Կարսի նահանգ եզրույթները: Մինչդեռ, ճշգրիտ ձևով Կարսի մարզ ասելով պետք է հասկանալ այն տարածքները, որոնք անցել են Ռուսական կայսրությանը 1878 թվականին՝ ռուս-թուրքական 1877-1878 թթ. պատերազմից հետո ու նրան են պատկանել մինչև 1917թ. հոկտեմբերյան հեղաշրջումը և կովկասյան բանակի քայքայումը: Այդ տարածքը Կարսի մարզ անվանումով օգտագործվել է նաև հետագայում՝ խորհրդա-թուրքական հարաբերություններին առնչվող փաստաթղթերում, ինչպես նաև՝ Անդրկովկասին ու Հայաստանին վերաբերող մի շարք այլ փաստաթղթերում և տարբեր բանակցություններում:

Երբ ասում ենք, թե 1919թ. սկզբներին Կարսի մարզը, անգլիացիների որոշմամբ, միացվեց Հայաստանի Հանրապետությանը, անհրաժեշտ է ճշգրտել, որ այդօրվա Հայաստանին միացվեց ամենևին էլ ոչ այն ամբողջ տարածքը, որն ընդգրկված էր Ռուսական կայսրության կազմում որպես Կարսի մարզ: Այդ տարածքից Արդահանի⁴ շրջանի (օկրուգի) հյուսիսային մասը հանձն-

⁴ Արդահան – քաղաք, նույնանուն գավառի, շրջանի կենտրոն ՀՀ Վանանդի նահանգում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.1, Երևան, 1986, էջ 409-411:

վեց Վրաստանին, իսկ մարզի արևմտյան մասը՝ Օլթիի շրջանն (օկրուգը) ամբողջությամբ, որպես Բաթումի մարզին սահմանակից տարածք, անգլիացիները հայտարարեցին իրենց կողմից վերահսկվող վարչական միավոր: Այնպես որ, ռուսաստանյան նախկին Կարսի մարզի տարածքից այդ օրերին Հայաստանի Հանրապետությանը, ըստ էության, բաժին հասան միայն Կարսի և Կաղզվանի (Կաղզվանի) շրջանները (օկրուգները)⁵: Հայաստանի Հանրապետության այդ օրերի վարչա-տարածքային բաժանման քարտեզում նոր միացված այդ տարածքն ուներ նահանգի կարգավիճակ և կոչվում էր ՀՀ Կարսի նահանգ⁶: 1920 թ. մայիսի 25-ի ՀՀ Կառավարության թիվ 272 նիստում որոշում է կայացվել երկրում անցնել նահանգային սկզբունքով վարչատարածքային բաժանմանը, ըստ որի, այդօրվա Հայաստանի Հանրապետությունը բաժանվում էր 4 նահանգի (Արարատյան, Սյունյաց, Շիրակի և Վանանդի)⁷: Կարսի նահանգը

նկարագրվող ժամանակաշրջանում հայկական բնակչությունն այդ շրջանում բացակայում էր:

⁵ Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.1, Երևան, 2005, էջ 232; Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պեյրութ, 1968, էջ 156; Վ. Հարությունյան, 1918թ. հայ-վրացական պատերազմը: Նյութեր և փաստաթղթեր, Երևան, 2014, էջ 118-120:

⁶ Կարսի մարզը Հայաստանի Առաջին Հանրապետության կազմում (ապրիլ 1919թ.-հոկտեմբեր 1920թ.): Նյութեր և փաստաթղթեր, աշխատասիրությամբ՝ Վլադիմիր Հարությունյանի, Երևան, 2016, 436 էջ (հետայսու՝ Վ.Հարությունյան, Կարսի մարզը ՀՀ կազմում): Տե՛ս գրքում բերված համապատասխան պաշտոնաթերթերը:

⁷ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրությունները (1918-1920 թթ.), Երևան, 2014թ., էջ 468:

սկսեց կոչվել Վանանդի նահանգ: Քանի որ ձեռագրում նկարագրվող բոլոր դեպքերը ժամանակագրորեն համապատասխանում են 1920 թ. հունիսի 17-ից հետո ընկած ժամանակահատվածին, ապա մենք, հարգելով մեր Առաջին Հանրապետության օրենքները, տեքստում հանդիպող տեղանուններին վերաբերող բոլոր ծանոթագրությունները, այն է՝ այս կամ այն բնակավայրի կամ տեղանքի տարածքային պատկանելությունը, ներկայացնում ենք երկրում այդ ժամանակ արդեն գործող նահանգային բաժանմանը համապատասխան:

Ինչ վերաբերում է ձեռագրում բավականին հանգուցային տեղ գրավող Օլթիի շրջանին, ապա, նախ նշենք, որ այդ ժամանակ այն բնակեցված էր, ըստ էության, գուտ մահմեդականներով: Այդտեղից միանգամայն պարզ է, որ, թեև թուրքերը Մուղրոսի զինադադարի 11-րդ կետի պահանջներին համապատասխան, ձևականորեն հետ էին քաշվել մինչև 1914թ. ռուս-թուրքական սահմանը⁸, այսինքն Օլթիի շրջանից դեպի արևմուտք, սակայն, օգտագործելով բնակչության էթնիկ կազմը, նրանք «գնացել էին՝ մնալով»»: Ինչը դրսևորվում էր, նախևառաջ, այդ շրջաններում թուրքական բանակի զինվորականների, երիտթուրքական ու քեմալական, ադրբեջանական հատուկ հրահանգիչների և այլ տեսակի գործակալների առատ ներկայությունով, ինչպես նաև տեղի մահմեդականությանը անհրաժեշտ քանակի զենքն ու զինամթերքը մշտապես ու ժամանակին հասցնելով ու տրամադրելով: Այնպես որ, այդ օրերին և,

⁸ Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.1, Երևան, 2005, էջ 217-226; Վ.Հարությունյան, Կարսի մարզը ՀՀ կազմում, էջ 68:

հատկապես, Կարսի տարածաշրջանից անգլիացիների հեռանալուց հետո, Օլթիի շրջանը գտնվում էր թեև ոչ պաշտոնական, բայց փաստացի՝ թուրքական-քեմալական կողմի իրական վերահսկողության տակ⁹:

Հուշերում ներկայացվող դեպքերի սկզբին՝ 1920 թ. հունիսի կեսերին, իրավիճակը տարածաշրջանում այնպիսին էր, երբ քաղաքականության շարունակությունը սկսվում է իրականացվել արդեն միանգամայն այլ՝ պատերազմական միջոցներով: Ընդ որում՝ սահմանի երկու կողմերի վարած քաղաքականությունն էլ բերում էր հենց դրան:

Հայաստանի պարագայում, թեև հաղթող տերությունները Սան-Ռեմոյում վերջապես հաջողությամբ ձերբագատվել էին Հայաստանից և պատրաստվում էին ստորագրել իրագործման առումով իր հետևում որևիցե պարտադրող գործողություն չենթադրող ու չունեցող Սևրի պայմանագիրը¹⁰, միևնույնն է, Հայաստանի Հանրապետության այդօրվա քաղաքական ղեկավարությունը, չգտնելով որևիցե այլ ճանապարհ և փաստորեն չունենալով որևիցե այլ ելք, այդ պահին տեր էր կանգնել այդ ամենին և, բնականաբար, փորձելու էր թուրքական կողմին պարտադրել կատարելու Սևրի պայմանագրի հայկական կողմին վերաբերող պահանջները: Նման տրամաբանական ծիրի մեջ Օլթիի շրջանի վրա վերահսկողություն հաստատելն այդ դեպքում կլիներ դեպի Արևմտյան Հայաստան շարժվելու առաջին քայլը: Երկրի ներքին ի-

⁹ Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.3, Երևան, 2015, էջ 150, 362-364:

¹⁰ Նույն աշխ., էջ 87-138:

րադրության առումով էլ չմոռանանք, որ փոխվել էր կառավարությունը, և այդ նոր՝ Բյուրո-կառավարությունը բավականին վճռականորեն ճնշել էր հայ բոլշևիկների մայիսյան հակապետական խռովությունը: Ու թեև այդ խռովության կործանարար բնույթն ու նրա ավերիչ արձագանքը հայությունը կտեսնի շատ կարճ ժամանակ անց, սակայն 1920 թ. հունիսի արտաքին և ներքին քաղաքական իրողությունների ֆոնի վրա ոչ մեծ ծավալի հաջող իրականացրած նվաճողական ակցիան բավականին կբարձրացներ նոր իշխանության հեղինակությունը երկրի ներսում: Առավելևս, որ արդեն խորհրդայնացված Ադրբեջանը օրեց օր լուրջ խնդիրներ էր հարուցում Հայաստանի համար վառելիքի մատակարարման հարցում, իսկ Օլթին հայտնի էր իր ածխահանքերով: Հաշվի առնենք նաև, որ Օլթիի շրջանի գրավումը միանգամայն տեղավորվում էր երկրի այդօրվա կառավարությունում մեծ ազդեցություն ունեցող ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի¹¹՝ մահմեդականներին ուժային եղանակով հնազանդեցնելու և վնասազերծելու որդեգրած հայեցակարգի շրջանակներում: Եվ, ի վերջո, ինչպես ասում են՝ «գուտ մարդկայնորեն», հետպատերազմյան երկու տարիների ընթացքն ու ստեղծված մթնոլորտն այնպիսին էին, որ մեծ հաշվով, հայկական հավակնությունները Օլթիի նկատմամբ «աշխարհի կողմից», կարծես թե

¹¹ Խոսքն այստեղ Համազասպ (Համո, Մհեր) Օհանջանյանի (1873թ., Ախալքալաք – 1947թ., Կահիրե) գլխավորած Բյուրո-կառավարության (5 մայիսի 1920 թ. – 23 նոյեմբերի 1920թ.) մասին է, որի կազմում **Ռուբեն Տեր-Մինասյանը** (1882թ., Ախալքալաք – 1951թ., Փարիզ) Ռազմական և Ներքին գործերի նախարար էր:

բավականին հասկանալի պետք է լինեին և ըմբռնելի: Բացառությամբ, իհարկե, քեմալական և բոլշևիկյան կողմերի:

Սահմանից այն կողմ նույնպես պատրաստվում էին պատերազմի: Ճիշտ է, բոլշևիկյան ոսկին և անհրաժեշտ զենքն ու հանդերձանքը դեռևս տեղ չէին հասել, և Քյազիմ Կարաբեքիրի հրամանատարության տակ գտնվող զորախումբը դեռևս պատրաստ չէր հաղթական ելքի սպասումով ներխուժմանը, բայց քեմալա-բոլշևիկյան դաշինքն իր ակտիվում արդեն գրանցել էր հաջողությամբ պսակված համատեղ իրականացրած կարևոր մի նախագիծ՝ Ադրբեջանի խորհրդայնացումը: Հայաստանի պարագայում քեմալականների դոկտրինն այն էր, որ թուրքական պետականության վերականգնումն ու կայացումը հնարավոր կլինի միայն հայկական պետությունը և հայկական բանակը ոչնչացնելու դեպքում¹²:

Այսպիսին է եղել իրավիճակը, երբ հայկական կողմը որոշել է սկսել Օլթիի օպերացիան: Օպերացիայի հաջող ընթացքն ու դրան հետևած հաջորդ ամիսների, մեր համար խիստ անհաջող մարտական գործողությունները, որոնք, ի վերջո, հանգեցրին Հայաստանի Հանրապետության կործանմանը, ամենայն մանրամասնությամբ ներկայացված են ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն արխիվային փաստաթղթում:

Տեքստում հիշատակվող տեղանունների <<խսկությունն>> ու գտնվելու վայրը ճշգրտելու համար մենք դիմել ենք տեղանունների բառարանի հայտնի 5-հատորյակի (Թ.Խ. Հակոբյան, Ստ.Տ. Մելիք-Բախշյան, Հ.Խ.

¹² Վ.Հարությունյան, Կարսի մարզը ՀՀ կազմում, էջ 112, 126:

Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.1-5, Երևան, 1986, 1988, 1991, 1998, 2001թթ.) օգնությանը: Հնարավորության դեպքում մենք նշել ենք նաև այդ տեղանունների՝ այսօրվա Թուրքական Հանրապետությունում պաշտոնապես ընդունված անվանումները: Հուշերի տեքստին մենք կցել ենք նաև հայալեզու երկու քարտեզ: Առաջինում (*Հավելված 1*) պատկերված են կողմերի գորքերի դասավորությունը Օլթիի օպերացիան սկսելու նախօրեին, իսկ երկրորդը (*Հավելված 2*)՝ Կարսի մարզի չափազանց մանրամասն քարտեզն է¹³: Գրքի էջաշարում տեղադրելու պարագայում, տառաչափերի չափազանց մանր լինելու պատճառով, այս երկու քարտեզները գրքում ներկայացված են առդիր ծրարով:

Բացի այս երկու քարտեզներից, ինչպես ասում են՝ <<ծրագրից դուրս>>, ընթերցողին խորհուրդ կտայինք ծանոթանալ ևս երկու այլ՝ շատ ընտիր քարտեզների. <<Кавказъ (карта). Составлена и литографирована въ военно-топографическомъ отдѣлѣ Кавказскаго военнаго округа 1903 года, Тифлисъ (масштабъ 20 верстъ въ дюймѣ)>> և <<Կարսի մարզ: <<ԳԵՈՔԱՐՏ>> ՊՈԱԿ, Երևան, 2015 թ., (մասշտաբ 1: 320 000)>>:

Ռուսերեն բնագրի աննշան հատվածներ, որոնք, կամ անընթեռնելի են եղել, կամ էլ իրենցից ներկայացրել են բովանդակային առումով տեքստից դուրս՝ զուտ տեխնիկական բնույթի նշումներ, հայերեն չեն թարգմանվել:

¹³ Երկու քարտեզների թվայնացված տարբերակներն էլ մեզ է տրամադրել Մայրլ Բաբայանը: Բնօրինակները պահվում են <<Համազգային>>-ի կենտրոնական արխիվում:

Բաց թողած այդ հատվածները հայերեն տեքստում, համապատասխանաբար, նշված են բազմակետով: Գրքում բերված է նաև փաստաթղթի ռուսերեն բնագիրը (*Հավելված 3*): Թարգմանությունն իրականացրել է տողերիս հեղինակը: Ռուսերեն տեքստը մուտքագրվել է, պահպանելով այն ուղղագրությունը, որն առկա է ձեռագիր բնագրում:

Ընթերցելով ներկայացվող գրառումները և զուգահեռաբար ուսումնասիրելով նշված քարտեզները, ընթերցողը կարող է հետևել և միանգամայն սպառնիչ պատկերացում կազմել 1920թ. հունիսի կեսերից մինչև նոյեմբերի կեսերը տևած Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ ծավալված մարտական գործողությունների մասին: Քանի որ հայկական բանակի կրած այդ ծանր պարտության ճանապարհի տրամաբանական ավարտը հանդիսացավ Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքումը, մենք գրքում ներկայացնում ենք ևս մեկ հավելված (*Հավելված 4*): Այդ փաստաթուղթը, որը վերցված է այսօրվա Թուրքիայի արտաքին գործերի նախարարության կայքից, Ալեքսանդրապոլի դաշնագրի ֆրանսերենով բնագրի թվայնացված տարբերակն է¹⁴, որտեղ պարզ երևում են տպագիր տեքստի վրա ձեռագրով արված լրացումներն ու ճշտումները¹⁵, ինչպես նաև բոլոր ստորագրողների

¹⁴ http://www.mfa.gov.tr/data/Kutuphane/Kurucu_Anlasmlar/gu_mru-anlasmasi-fransizca.pdf.

¹⁵ Ալեքսանդրապոլի պայմանագրի տեքստի թարգմանությունը տե՛ս Ս.Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 536-537; Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն) Փաստաթղթ-

(Հայաստանի Հանրապետության անունից՝ Ալեքսանդր Խատիայան, Աբրահամ Գյուլխանդանյան, Ստեփան Ղորղանյան, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի անունից՝ Քյազիմ Կարաբեքիր փաշա, Համիդ Բեյ, Սուլեյման Նեջադի Բեյ) ինքնագրերը:

Հայկական գորքի հետ՝ Օլթիից մինչև Ալեքսանդրապոլ նահանջի այդ ծանր ճանապարհին անցնելու համար կցանկանանք ընթերցողին կամք, համբերություն և ոգու տոկունություն...

Անդրադառնանք այժմ հաջորդ կարևոր հարցին:

2. Ով է հուշերի հեղինակը

Նախ նշենք, որ նյութի ամբողջ շարադրանքից զգացվում է, որ գրառումների հեղինակը ազգությամբ հայ չէ: Բայց, ինչպես ասում են, Հայաստանի համար ցավող անձնավորություն է:

Թեև հեղինակի անունը հուշերում ոչ մի տեղ չի նշվում, բայց իր անձի բացահայտմանը մեզ մեծապես օգնեց հենց ինքը՝ հուշերի հեղինակը: Հուշագրության մի հատվածում, որտեղ խոսքը հայկական զինուժի առանձին հեծյալ դիվիզիոնի (կամ գնդի) մասին է, հեղինակը գրում է հետևյալը. <<Ես, որպես այդ գորամասի նախկին հրամանատար, չեմ ցանկանում առանձնապես ծավալվել...>>: ՀՀ վերջին վարչապետ Սիմոն Վրացյա-

թերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000թ., էջ 391-394; Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.4, Երևան, 2016թ., էջ 467:

նի <<Հայաստանի Հանրապետություն>> աշխատությունում՝ 1917թ. վերջերին հայկական գործառնաբան կազմակերպելու ծավալված գործընթացի կապակցությամբ կարդում ենք <<...*Արամն ու Դրոն անհրաժեշտ գտան ստեղծել առողջ զինվորական մի կորիզ, որի վրա հենված կարողանային երկրի մաքրագործման ու խաղաղության գործը դնել իրական հիմքերի վրա... Գնդապետ Զալինյանին հանձնարարվեց՝ ընդունելով 2-րդ սահմանապահ գնդի Քանաքեռում թողած գույքը, ձեռն ու ռուս սպաների մի մասին՝ կազմակերպել մի ձիավոր գունդ: Այդ ռուս սպաների մեջ էր և գնդ. Կորոլկովը¹⁶, որը նշանակվեց պարտիզանական գնդի ձիավոր դիվիզիոնի հրամանատար>>¹⁷ իսկ Հայկական կորպուսի հրամանատար Թովմաս Նազարբեկյանի (*Ֆոմա Նազարբեկով*)¹⁸ և Երևանյան գործախմբի հրամանատար Մովսես*

¹⁶ Այդ ժամանակ Կորոլկովն ուներ դեռևս փոխգնդապետի զինվորական աստիճան:

¹⁷ Մ.Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 128:

¹⁸ **Նազարբեկյան Թովմաս Հովհաննեսի** (Նազարբեկով Ֆոմա Իվանովիչ) (1855թ., Թիֆլիս – 1931թ., Թիֆլիս), ցարական բանակի գեներալ-մայոր, հայկական բանակի գեներալ-լեյտենանտ, ՀՀ զինված ուժերի հրամանատար, սպարապետ, անկուսակցական: Հայաստանի խորհրդայնացումից շատ քիչ ժամանակ անց հայկական բանակի մոտ 1500 սպաների հետ ձերբակալվել է և թշվել Ռյազանի համակենտրոնացման ճամբար: Տե՛ս Ա.Ա. Григоров, А.И. Григоров, *Заключенные Рязанского губернского концлагеря РСФСР 1919-1923 гг.*, Москва, 2013, 483с. (հետախու՝ Ա.Ա. Григоров, А.И. Григоров, *Заклученные...*), էջ 389: Ազատվելուց հետո բնակվել է Թիֆլիսում: Մոսկվայի զինվորական Օկրուգի դատախազության որոշմամբ՝ հետմահու արդարացվել է:

Միլիկյանի (*Մոխսեյ Միլիկով*)¹⁹ այդ ժամանակաշրջանի հաղորդումներից տեղեկանում ենք, որ 1918թ. փետրվար-մարտ ամիսներին նշված զորախմբի կազմում առկա է եղել առանձին պարտիզանական հեծյալ գունդ, որի հրամանատարն էր փոխգնդապետ Ալեքսանդր Կորոլկովը²⁰:

Այս ազգանունը հայ ընթերցողների բավականին լայն շրջանակներին հաստատ քաջաձանոթ է Սարդարապատից ու Բաշ-Ապարանից, իսկ ավելի նեղ շրջանակին՝ նաև հայ-վրացական պատերազմի քրոնիկոնից: Հայկական անկախ պետությանը մատուցած իր անուրանալի ծառայությունների համար հայկական բանակի ռուսազգի բարձրաստիճան այդ սպան, անկասկած, արժանի է, որպեսզի հայ ընթերցողը նրա մասին հնարավորինս շատ տեղեկություն իմանա և կարողանա կազմել այդ անձի վերաբերյալ ամբողջական, հիմնավոր ու

¹⁹ **Միլիկյան Մովսես Բաբայի** (Միլիկով Մոխսեյ Բաբայեվիչ) (1862թ., գ.Վարդաշեն, Նուխիի շրջան – 1937թ., Երևան), ազգությամբ՝ ուդի է, ցարական բանակի գեներալ-մայոր, հայկական բանակի գեներալ-լեյտենանտ, անկուսակցական, ՀՀ զինված ուժերում վարել է մի շարք բարձր հրամանատարական պաշտոններ, նկարագրվող ժամանակահատվածում եղել է Կարս-Ալեքսանդրապոլ ուղղության ռազմաճակատի հրամանատարը: Հայաստանի խորհրդայնացումից հետո, տարբեր պատճառաբանություններով չորս անգամ ձերբակալվել է և, ի վերջո, բոլշևիկյան արդարադատության համակարգում հայտնի Եռյակի որոշմամբ 1937-ին գնդակահարվել է: Հետմահու արդարացվել է 1987թ.:

²⁰ Ա.Հ. Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 136,183:

օբյեկտիվ կարծիք²¹: Քանզի, ինչպես կտեսնենք, Ալեքսանդր Կորոլկովը այն օտարազգի սպաներից մեկն էր, ով գործուն մասնակցություն է ցուցաբերել հայկական զինուժի կազմավորման ու ձևավորման հարցերում, ով իր ճակատագիրը անվերապահորեն կապել էր հայկական բանակի և հայկական պետության հետ ու մինչև վերջ մարտնչել է հանուն այդ պետության գոյության և հանուն հայ ազգի ազատության: Եվ Հայաստանն էլ լքել է Առաջին Հանրապետության նվիրյալների հետ՝ նույն շարասյունով:

Ասվածի հետ մեկտեղ, միանգամայն հասկանալի է նաև, որ ցանկացած հուշագրության արժեքը բազմապատիկ աճում է, եթե նրա հեղինակի անվան հայտնի լինելու հետ մեկտեղ, ընթերցողը տեղեկանում է նաև հեղինակի ինչպիսին լինելուն՝ որպես անձ, որպես գործիչ, ի վերջո՝ որպես մարդ: Ուստիև, ներկայացնենք ընթերցողին այն տեղեկությունները, որոնք մենք կարողացանք ստանալ Ալեքսանդր Կորոլկովի վերաբերյալ մեզ համար մատչելի և հասանելի տարբեր աղբյուրներից:

Ալեքսանդր Անտոնի Կորոլկովը, տոհմիկ Կուբանի կազակ, ծնվել է 1869 թ. փետրվարի 23-ին: Ծագումով Կուբանի կազակական գործի բարձրաստիճան սպայակազմից է: Մենք փորձեցինք պարզել նաև նրա ծննդավայրը, սակայն Կրասնոդարի երկրամասային արխիվից մեզ պատասխանեցին, որ իրենց ֆոնդերում համապատասխան փաստաթղթերը բացակայում են և այդ հարցի

²¹ Ձուգաղիպություն էր, թե՞ նախախնամություն, բայց այս տողերը գրելու օրերին լրացավ գնդապետ Ալեքսանդր Կորոլկովի 150-ամյակը:

վերաբերյալ դրական պատասխանելը իրենց հնարավորություններից դուրս է:

Կորոլկովն ավարտել է ռեալական ուսումնարանը, որից հետո՝ Ստավրոպոլի կազակական յունկերական ռազմական ուսումնարանը (երկրորդ տարակարգով): Զինվորական ծառայությունը սկսել է Կուրանի կազակական զորքում²²: Հետագայում ծառայել է կայսերական սահմանապահ զորքերում՝ սկզբից Ելիզավետպոլի (*Գանձակի*) 28-րդ սահմանապահ բրիգադում, իսկ 1910-ից՝ Էրիվանի 27-րդ սահմանապահ բրիգադում²³: Ծառայության ընթացքում նախ անցել է կազակական զինվորականի հետևյալ սպայական աստիճանները. 1890թ. խորունժիյ (*պոդպորուշիկ*), 1894թ. – հարյուրապետ (*պորուշիկ*): Ծառայության տեղափոխվելով սահմանապահ զորքեր, 1902թ. ստացել է այդ զորատեսակում սահմանված շտաբ-ռոտմիստրի (*շտաբ-կապիտան, ավագ լեյտենանտ*), իսկ 1906թ.՝ ռոտմիստրի (*կապիտան*) զինվորական աստիճանները²⁴: Էրիվանյան այդ զորամիավորման կազմում՝ ռոտմիստրի աստիճանով,

²² 1-й Таманский полк Кубанского казачьего войска, Кубанская справочная книжка на 1894г., Екатеринодар, 1894; Послужной список обер-офицеров 3-го Кубанского пластунского батальона за 1902 г. <https://gigabaza.ru/doc/120381.html>.

²³ Кавказский календарь на 1912 г., Тифлиς, 1911, Раздел: учреждения министерства финансов, с.337-338; Кавказский календарь на 1915 г., Тифлиς, 1914, Раздел: учреждения министерства финансов, с.387-388.

²⁴ Личный состав чиновъ отдельнаго корпуса пограничной стражи по старшинству. Составлен по 6 декабря 1913г. включительно, С.-Петербургъ, 1914, с.202; Кавказский календарь на 1914 г., Тифлиς, 1913, Раздел: учреждения министерства финансов, с.379-380.

Կորուկովը ծառայել է մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը²⁵: 1915 թ. սկզբներին Բայազետի շրջանում Կովկասյան բանակի կազմում ձևավորվեց Արարատյան ջոկատ անվամբ մի զորախումբ (հրամանատար՝ գեներալ-լեյտենանտ Նիկոլան), որը նախատեսված էր Թուրքիայի խորքերում ռազմական գործողություններ իրականացնելու համար, իսկ ավելի ճշգրիտ՝ Վանի գրավման համար: Դրոյի 2-րդ, Համազասպի (*Համազասպ Արվանձտյան*) 3-րդ և Քեռու (*Արշակ Գավաֆյան*) 4-րդ հայկական կամավորական ջոկատների հետ միասին Արարատյան ջոկատի կազմում ընդգրկված էր նաև ռուսաբար Գորուկովի սահմանապահ հեծյալ հարյուրյակը²⁶: Կարելի է ասել, որ փաստացի այդ պահից սկսած, Կուբանի կազակ Ալեքսանդր Կորուկովը իր հետագա կյանքն ու ճակատագիրը կապեց հայության հետ և հենց նրա հետ միասին լինելու մեջ տեսավ իր ամբողջ գալիք լավն ու վատը: Նա հատկապես մտերմացավ Դրոյի հետ, կովեց նրա հետ կողք կողքի, նրա հետ միասին մտավ Վան: Երբ Վանը վերցնելուց հետո ռուսական բանակը ոչ միայն չջարժվեց դեպի թուրքերի ու քրդերի կողմից ասպատակվող Սասուն, այլ նույնիսկ սկսեց իրականացնել <<անհասկանալի>> հետշարժեր, Դրոն, մեծ ջանքեր գործադրելով, կարողացավ հասնել նրան, որ իրեն թույլ տրվի իր զորաջոկատով շարժվել դեպի Ալադաղ և սանձել Սասունի հայությանը կոտո-

²⁵ Кавказский календарь на 1916 г., Тифлиς, 1915, Раздел: учреждение министерства финансовъ, с.405-406.

²⁶ Ф.И.Елисеев, Казаки на кавказском фронте (1914 – 1917), Москва, 2001, с.85.

րող թուրք-քրդական ջոկատներին ու գոնե ապահովել փախստականների պաշտպանությունը և անվտանգ արտագաղթը դեպի Արևելյան Հայաստան:

Ալադադի արշավանքը, իրավամբ, կարելի է համարել հայ կամավորական զորախմբերի իրականացրած ամենահաջողված ու արդյունավետ գործողությունները մեկը: Դրոյի ընդհանուր հրամանատարությամբ, հայերի հետ միասին՝ ու հանուն հայերի փրկության մղվող այդ կռիվներին մասնակցում էր նաև Դրոյի ջոկատին կամավոր միացած փոխգնդապետ Կորոլկովի հեծյալ զորամասը, որը, որպես վերջապահ ուժ ապահովեց նաև Վասպուրականի բնակչության համեմատաբար անվտանգ գաղթը. *<<Փախստականներին պաշտպանում էին Դրոյի խումբը եւ նրան կամաւոր միացած սահմանապահների հեծելավաշտը՝ հեծելավաշտի հրամանատար Կորոլկովի հրամանատարութեամբ²⁷>>*:

Կովկասյան ռազմաճակատի քայքայումից և Կովկասից, մասնավորապես, նաև Հայաստանից ռուսական բանակի հեռանալուց հետո, Կորոլկովը մնում է Հայաստանում՝ <<նրա սիրտը լեռներում էր>> և ակտիվորեն մասնակցում է նոր ստեղծվող հայկական զինուժի հեծ-

²⁷ Հ. Գևորգյան, Դրո, Երևան, 2014. (հետայսու՝ Հ. Գևորգյան, Դրո) էջ 177-203; Ռ. Սահակեան, Զորավար Թովմաս Նազարբեկեանի անտիպ յուշերը Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական (կովկասեան) ռազմաճակատի մարտական գործողությունների մասին (1914 յուլիս-1916 ապրիլ), Հայկազեան հայագիտական հանդես, հ. ԼԶ, Պեյրութ, 2016, էջ 236; Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆոնդ (ֆ.) 45, ցուցակ (ց.) է, գործ (գ.) 5, թերթ (թ.) 27-ի շրջերես (շրջ.):

յալ գորամասերի կազմավորմանը²⁸: Իր հրամանատարության տակ գտնվող հեծյալ գնդով մասնակցում է 1918թ. Մայիսյան հերոսամարտերին²⁹: Մազաչափ անգամ կասկածի տակ չդնելով Բաշ-Ապարանի ճակատամարտում մեր ամեն մի սպայի և զինվորի, հիրավի, հերոսական ներդրումը, համենայնդեպս անհրաժեշտ է շեշտել, որ մեր համար այդ ճակատամարտի հաղթական ընթացքն ու ավարտը մեծապես կանխորոշվել է նաև փոխգնդապետ Կորոլկովի ղեկավարած հեծելազորի անձնագրի և գրագետ գործողություններով: Բերենք այդ կապակցությամբ ասված հենց անձամբ Ապարանի ռազմաճակատի հրամանատար Դրոյի խոսքերը. <<Էստեղ էր, որ Կորոլկովն իր պատմական դերն³⁰ արեց: Ասի՝ կավալերիան մեռցնելու եմ ուղարկում... Ամբողջը ատակի շպրտեցի: Բայց կավալերիայի պատմության մեջ քիչ ա պատահել... 700 հոգի կավալերիայից 160-ը թափեցին: Բայց ճղեց...Ճղեց, պատռեց ու անցավ դրանց թիկունքը³¹...>>:

Հայ – վրացական պատերազմի ընթացքում փոխգնդապետ Ալեքսանդր Կորոլկովն իր հեծյալ գորաջոկատով մասնակցել է բոլոր գործողություններին, իսկ պա-

²⁸ ՀԱԱ, ֆ.45, ց.1, գ.15, թ.7-ի շրջ.: ՀԱԱ, ֆ.45, ց.1, գ.15, թ.11:

²⁹ 1918 թվականի մայիսյան հերոսամարտերը մասնակիցների հուշերում: Աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Արիստակեսյանի, Ս. Ն. Պողոսյանի և Ս. Բ. Մելիքյանի, Երևան, 2014, էջ 141-142, 152; ՀԱԱ, ֆ.204, ց.1, գ.43, թ.8 և շրջ., 9-10:

³⁰ Որոշ աղբյուրներում <<դեր>>-ի փոխարեն օգտագործված է <<ճար>> բառը:

³¹ Ն. Գևորգյան, Դրո, էջ 343:

տերազմի ավարտին մոտ եղել է հայկական զորքի Շուլավերի գորաջոկատի հրամանատարը³²:

Հայաստանի Հանրապետության Ռազմական նախարարի 1919թ. ապրիլի 16 - ի հրամանով 2-րդ հայկական հեծյալ գնդի հրամանատար Ալեքսանդր Կորոլկովին շնորհվել է գնդապետի կոչում, իսկ 1919-ի հուլիսին գնդապետ Կորոլկովն իր հեծելագործ մասնակցել է Շիրազլու - Ղամարլուի թաթարական խռովության ճնշմանը³³: Նույն թվականի օգոստոսից առնվազն մինչև 1920թ. սեպտեմբերը Ա.Կորոլկովը վարել է Ղարաքիլիսայի սահմանապահ բրիգադի հրամանատարի պաշտոնը³⁴:

Հայաստանի խորհրդայնացումից հետո բոլշևիկյան խորշակն ասես ինչպե՞ց Կուբանի կազակ Ալեքսանդր Կորոլկովին, և նա չկիսե՞ց Հայաստանի Հանրապետության բանակի իր հարյուրավոր ծառայակիցների ճակատագիրը: Բարեբախտաբար, նա ոչ կացնահարվեց, ոչ գնդակահարվեց և ոչ էլ քշվեց Բաքու, կամ էլ Ռյազանի համակենտրոնացման ճամբարները: Բայց Կորոլկովը նաև չհեռացավ Հայաստանից, այլ մնաց իր պաշտպանած ու իրեն հարազատ դարձած այդ հողի վրա: 1921 թ. փետրվարին Հայաստանի Հանրապետության հավատարիմ ռուսազգի այդ զինվորականը, մի շարք պետա-

³² ՀԱԱ, ֆ.204, ց.1, գ.68 մաս 1, թ.108; Ս.Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 237-341:

³³ ՀԱԱ, ֆ.204, ց.1, գ.132, թ.383, ֆ.199, ց.1, գ.89, թ. 26, ֆ.200, ց.1, գ.212, թ.118:

³⁴ ՀԱԱ, ֆ.204, ց.1, գ.113 մաս1, թ.67, ֆ.201, ց.1, գ.98, թ. 81, ֆ. 275, ց.5, գ.154, թ.224:

կանամետ հայորդիների հետ միասին, կազմակերպեց հակաբոլշևիկյան ապստամբությունը և դարձավ դրա զինվորական ղեկավարներից մեկը³⁵։ Ընթերցենք մի հատված այդ ապստամբության առաջնորդներից մեկի՝ Կարո Սասունու հուշերից. <<Փետրվարի 18-ի յեղաշրջման օրերուն Ելենովկան³⁶ գրաւած էր, սակայն ժողովրդական ուժերը թողած էին Ելենովկան ու կեդրոնացած էին Ախտայի շրջանը, ուր ճակատի հրամանատար նշանակուած էր Արամ Դաւոյեանը։ Այնտեղ ուղարկված էր գնդապետ Կարակոպը, որպէս շտաբի պետ... Ամեն հույս դրված էր գնդապետ Կարակոպի վրայ, որ արդեն նշանավոր դարձած էր Հանրապետութեան կազմութեան օրեն՝իր հավատարիմ եւ խիզախ կռիւներով³⁷...>>։ 1921թ. ապրիլի 2-ին բոլշևիկյան զորքերի կողմից Երևանը գրավելուց հետո Կորոլկովը, մյուս ապստամբների հետ, նահանջում է դեպի Զանգեզուր։ Այստեղ նա ղեկավարում է Բազարչայի³⁸ շրջանի պաշտպանությունը։ Զանգեզուրը Խորհրդային Հայաստանին միացնելուց հետո Ալեքսանդր Կորոլկովը անցել է Պարսկաստան³⁹։ Հայկական բանակի գնդապետ Կորոլկովի կյանքի հետագա տարիների վերաբերյալ որևիցե տեղեկություններ գտնել մեզ դեռևս չհաջողվեց։

³⁵ Կ.Սասունի, Փետրուարեան ապստամբութիւնը (1921), Պէյրոս, 1970, էջ 182-202։

³⁶ Այժմյան Սևան քաղաքն է։

³⁷ Կ.Սասունի, նույն աշխ., էջ 185։

³⁸ Այդ գյուղի պատմական տարածքն այժմ Սպանդարյանի ջրամբարի ջրերի տակ է։ Ավելի բարձր վայրում կառուցված նոր գյուղը այսօր կոչվում է Գոռհայկ։ Տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 1, Երևան, 1986, էջ 542։

³⁹ ՀԱԱ, ֆ.114, ց.թ, գ.172, թ.193։

Բայց նույնիսկ այսչափ սեղմ ու ոչ լրիվ կենսագրականը մեզ հուշում է, որ բացի մեծագույն հարգանքից և ակնածանքից, մեկ այլ կարծիք չի կարող կազմվել մի անձնավորության մասին, որը հասուն տարիքում՝ 50-ին մոտ և ավելի, քաջ գիտակցելով, թե միանգամայն օտար ազգին առնչվող ինչպիսի ծանր դեպքերի ու իրադարձությունների հորձանուտի մեջ է ինքն իրեն մղում, միանգամայն գիտակցաբար, ընդունեք առանց ավելորդ պաթոսի,- իր հետագա կյանքը նվիրում է այդ միանգամայն օտար ազգի ազատագրական պայքարի գործին: Իսկ սա ոչ այլ ինչ է, քան անձի կողմից մարդկային ամենաբարձր բարոյականության դրսևորումներից մեկը: Քանի-քանի ազգությամբ հայ մարդկանցից բարձր ու առաքինի է գտնվել հայկական պետության և հայ ազգի հանդեպ հայկական բանակի ռուսազգի այդ գնդապետը: Հենց գնդապետ Ալեքսանդր Կորոլկովի և նման բարձր մարդկային առաքինություններով օժտված անձանց օրինակով է, որ կարող ես ու նաև պարտավոր ես, երախտապարտ լինել, խոնարհվել ու հարգանքի տուրք մատուցել նման անձեր ծնող ազգին ու հողին:

Եվ ըստ դրան էլ, մի քանի առաջարկություններ *այսօրվա* Հայաստանի Հանրապետության իշխանություններին՝ *այնօրվա* Հայաստանի Հանրապետության նվիրյալ զինվորներից մեկի հիշատակը մարդկայնորեն հարգելու և հավերժացնելու համար.

- Բաշ-Ապարանի ճակատամարտի տարածքի բնակավայրերից մեկում, իսկ լավագույնս կլինի՝ հենց Ապարան քաղաքում, անպայման ունենալ գնդապետ Ալեքսանդր Կորոլկովի անվան փողոց;

- Բաշ-Ապարանի ճակատամարտին նվիրված հուշահամալիրի տարածքում,-շատ ճիշտ կլինի՝ Դրոյի շիրմաբուրգից ոչ հեռու, տեղադրել նաև Ալեքսանդր Կորուկովի հիշատակը հավերժացնող մի հուշակերտվածք:

Բացի սրանից, այլ անձնական կարծիք այստեղ արտահայտելու անհրաժեշտություն տողերիս հեղինակը չի տեսնում:

Եզրափակելով նախաբանը, իմ պարտքն եմ համարում շնորհակալություն հայտնել Մայքլ Բաբայանին, առանց ում գործուն աջակցության այս գիրքը պարզապես չէր նախաձեռնվի և լույս չէր տեսնի, Հայկական ճարտարապետության ուսումնասիրության հաստատության ղեկավար Մամվել Կարապետյանին՝ Կարսի նահանգի տեղանունների ցանկը դրանց այժմյան անվանումներով լրացնելու համար, ինչն, անկասկած, առավել արժեքավոր դարձրեց տվյալ աշխատությունը, դոցենտ Լևոն Խաչատրյանին՝ օգտակար քննարկումների և խորհուրդների համար, ինչպես նաև՝ ԵՊՀ ռուսական բանասիրության ֆակուլտետի ղեկան, դոցենտ Պավել Բալայանին և ֆիզ-մաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արթուր Հովհաննիսյանին՝ իրենց հնարավորությունների շրջանակներում գրքի կայացման գործընթացին աջակցելու համար:

*Վլադիմիր Հարությունյան
Մայրիլ, 2019թ., Երևան*

Օլթիի օպերացիայի ընթացքը և հակառակորդի պատասխան գործողությունները

Կազմված է հիշողությամբ

Համաձայն Կարսի գորաջոկատի պետ, գեներալ Հովսեփյանին (*Հովսեփյանց, Օսեպով, Օսեպյանց*)⁴⁰ ուղղված հրամանի, որ տրվել էր Ալեքսանդրապոլի գորախմբի հրամանատար, գեներալ Փիրումյանի (*Փիրումով*)⁴¹ կողմից, խնդիր էր դրված գենքի ուժով գրավել Օլթիի շրջանը:

⁴⁰ **Հովսեփյան Հարություն Գրիգորի** (Օսեպյանց, Օսեպով Արտեմիյ Գրիգորևիչ) (1872թ., գ. Դաղետ Խաչեն, Թիֆլիսի նահանգ – 1921թ., Ալավերդի, Խորհրդային Հայաստան) – ցարական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ-մայոր, անկուսակցական: Նկարագրվող ժամանակահատվածում եղել է Կարսի գորաջոկատի (2-րդ հետևակային բրիգադի) հրամանատարը: Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո, որպես բոլշևիկյան կարմիր գորաջոկատի հրամանատար, մասնակցել է Լոռվա, ապա՝ Վրաստանի խորհրդայնացմանը, ինչից հետո՝ Հայաստանում հակաբոլշևիկյան ապստամբության ճնշմանը: Շատ կարճ ժամանակ՝ մինչ մահանալը, զբաղեցրել է Լոռու զինվորական կոմիսարի պաշտոնը:

⁴¹ **Փիրումյան Դանիել-բեկ Աբխաղովի** (Պիրումով Դանիել-բեկ Ավեսալովովիչ) (1861թ., գ. Նախիջևանիկ, Արցախ – 1922թ., Երևան) – ցարական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ-մայոր, գեներալ-լեյտենանտ, անկուսակցական, Մարդարապատի ճակատամարտում հայկական զորքի հրամանատարներից մեկը: Նկարագրվող ժամանակահատվածում եղել է Կարս-Ալեքսանդրապոլյան գորախմբի պետը և միաժամանակ՝ Կարսի բերդի պարետը:

Ըստ հետախուզական-գործակալական տեղեկությունների, որոնք, ինչպես պարզվեց, միանգամայն ճշգրիտ էին, Օլթիի շրջանի սահմանը թուրքական կողմից պաշտպանում էին Նարիմանի⁴² և Թորթումի⁴³ մեծ կազմով (ամեն մեկում մոտ 1000 զինվոր) տեղական երկու գումարտակները, որոնք ունեին նաև երկու լեռնային հրանոթ և գնդացիներ: Հակառակորդի գլխավոր ուժերը կենտրոնացված էին Փենյակ⁴⁴ - Մերդենեկ⁴⁵ խճուղու երկայնքով: Կերաշլի-գյոլ⁴⁶ լճի շրջանում հակառակորդն ուներ մոտ 400 ձիավոր քրդեր⁴⁷:

⁴² Նարիման (Նառիման, Նարման) - գյուղ, նույնանուն գավառակ, վայր Օլթիի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 3, Երևան, 1991, էջ. 964, 970: Քննարկվող ժամանակահատվածում գտնվում էր քենալական ուժերի վերահսկողության ներքո:

⁴³ Թորթում (Թորսում, Տորսում) – գյուղ, վայր, նույնանուն գավառակ Օլթիի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 2, Երևան, 1988, էջ. 476: Քննարկվող ժամանակահատվածում գտնվում էր քենալական ուժերի վերահսկողության ներքո:

⁴⁴ Փենյակ (Պենյակ) – բնակավայր և նույնանուն հանքային ջուր ՀՀ Վանանդի նահանգի Օլթիի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 4, Երևան, 1998, էջ. 326, հ.5, Երևան, 2001, էջ 250; Հավելված 1: Այժմ պաշտոնապես կոչվում է Փենեկ: Գյուղեգրին են գտնվում զվարթնոցատիպ Բանակ տաճարի ավերակները:

⁴⁵ Մերդենեկ (Մերդենիկ) – գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Արդահանի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 3, Երևան, 1991, էջ. 801,802; Հավելված 1: Այժմ՝ Գյոլե:

⁴⁶ Կերաշլի-գյոլ (Քերաշլի-գյոլ) – լճակ ՀՀ Վանանդի նահանգի Օլթիի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 3, Երևան, 1991, էջ.102, հ.5. Երևան, 2001, էջ. 359-360; Հավելված 1:

⁴⁷ Ըստ թուրքական աղբյուրների, 1920 թ. մայիսին թուրքական սպաների գլխավորած Օլթիի զորաջոկատի միայն կանոնավոր մասն ուներ տասնչորս վաշտից բաղկացած չորս հետևակային

Մեր հարձակման վերջնական նպատակն էր Փենյակ գյուղի շրջանում գտնվող ածխահանքերի գրավումը:

Ի կատարումն նշված հրամանի, 1920 թ. հունիսի 17-ին գեներալ Հովսեփյանն էլ իր հերթին հրաման արձակեց, ըստ որի Կարսի զորաջոկատը անցնում էր հարձակման: Համաձայն այդ հրամանի հարձակումն իրականացվում էր երեք շարասյուներով. աջ շարասյունը՝ գնդապետ Մազմանյանի (*Մազմանով*) գլխավորությամբ, միջին շարասյունը՝ գնդապետ Շահբուդաղյանի (*Շազուբատով*) և ձախ շարասյունը՝ փոխգնդապետ Նեստերովսկու գլխավորությամբ⁴⁸:

Մերդենեկի թիկունքային շրջանի պետ նշանակվեց գնդապետ Սարմաքեշյանը (*Սարմակեշն, Սիրմակեշն*)⁴⁹:

գումարտակ, մի քանի հեծելավաշտ (եսկադրոն), յոթ գնդացի, երկու թնդանոթ և չորս լեռնային հրանոթ ունեցող մեկ հրետանային մարտկոց: Թվով առնվազն 1200-ից ոչ պակաս տեղացի զորակոչիկներ և թուրքական բանակի 500 զինվորներ պահում էին Փենյակի ածխահանքերից մինչև Ադունդիլի լեռնանցքն ընկած հատվածը: Տե՛ս Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.3, Երևան, 2015, էջ 363:

⁴⁸ Այլ աղբյուրներում տեղեկացվում է նաև, որ Օլթիի գործողության ընդհանուր ղեկավարն էր գեներալ-մայոր Հարություն Հովսեփյանը, իսկ հարձակվող զորքի անմիջական հրամատարությունն իրականացնում էր 4-րդ հետևակային գնդի հրամանատար, գնդապետ Ալեքսանդր Սիրիմանյանը (*Սիրիմանով*): Տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 443; Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.3, Երևան, 2015, էջ 365:

⁴⁹ Գնդապետ **Իսահակ Սիրմակեշնի** անունը նշված է Ռյազան արքայազնի հայկական բանակի սպաների ցուցակներից մեկում՝ 5-

Նրա ենթակայության տակ էին գտնվում. Կարս-Մերդենեկ հաղորդակցությունը հսկող պարետային պահակախմբերը՝ Ալեքսանդրապոլի պահակային գումարտակից, 5-րդ հետևակային գնդի Արդահանում տեղակայված 1-ին վաշտը, մեկական վաշտ Կարսի և Ալեքսանդրապոլի պահակային գումարտակներից ու մխոցային հրանոթների Մերդենեկի մարտկոցը: Նշված բոլոր ուժերը տեղակայված էին Մերդենեկում և կազմում էին Կարսի զորաջոկատի աջ և միջին շարասյունների պահեստագործը:

Այդ շարասյուններում մեր ուժերը բաշխված էին հետևյալ կերպ.

1) Աջ շարասյուն - 1 ½ հետևակային գունդ, երկրորդ բրիգադի շտաբի պարետային վաշտը, 6-րդ առանձին պարտիզանական հարյուրյակը, 4 լեռնային հրանոթ, երկու մխոցային հրանոթ և հույն կամավորները:

2) Միջին շարասյուն - 5-րդ հետևակային գնդի 1 ¾ գումարտակ, 2-րդ առանձին պարտիզանական հար-

րդ համարի տակ: Ст' u Дело No 207 Особого Отдела при Реввоенсовете 11-ой Армии, стр.67, ru.

haazg.info/Списки_репрессированных_армянских_офицеров:

Այդ նույն ցուցակում՝ 41-րդ համարի տակ տեսնում ենք նաև փոխգնդապետ **Դմիտրի Նեստերովսկու** անունը: Վերջինիս անվանը հանդիպում ենք նաև հետմահու արդարացվածների ցուցակում: Ст' u Список лиц, реабилитированных военной прокуратурой Московского военного округа по архивным материалам Государственного Архива Рязанской области в отношении офицеров армянской армии; архивный фонд Р-2817, дело 207, стр 59-69 (հետայսու՝ Список лиц, ...)

յուրյակը, երկու թեթև հրանոթ, Օլթիի միլիցիան և հույն կամավորները:

3) Ձախ շարասյուն - 4-րդ հետևակային գնդի մեկ գումարտակ, որ համալրված էր հեծյալ հետախույզների խմբով և երկու լեռնային հրանոթ, որոնք հարձակման անցնելու կապակցությամբ առանձնացվել էին Սարիղամիշի⁵⁰ ջոկատից:

Օպերացիան սկսվելուց առաջ գումարտակներում զինվորների միջին թվաքանակը հետևյալն էր. 1-ին և 4-րդ հետևակային գնդերի գումարտակներում - մոտ 300 մարդ, 5-րդ հետևակային գնդի գումարտակներում - մոտ 200 մարդ, պարտիզանական հարյուրյակներում - 100 -150 մարդ:

Համաձայն վերոնշյալ հրամանի, հարձակվող շարասյունները հունիսի 18-ին գրոհի անցնելու համար զբաղեցրին իրենց ելակետային դիրքերը:

Աջ շարասյունը - Դորթ Քիլիսա⁵¹ գյուղում, միջին շարասյունը - Մերդենեկում և ձախ շարասյունը- Բաշքեյ⁵² գյուղում:

Հունիսի 19-ին աջ շարասյունը կռվով վերցրեց Փանջուրի⁵³ լեռնանցքը և Ջամի⁵⁴ լեռը, իսկ ձախ շարասյունը

⁵⁰ Սարիղամիշ (Սարեղամիշ, Սարիկամիշ) - քաղաք և նույնանուն երկաթուղային կայարան ՀՀ Վանանդի նահանգում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.4, Երևան, 1998, էջ 531; Հավելված 2:

⁵¹ Դորթ Քիլիսա(Դյորդքիլիսա) - գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Արդահանի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.2, Երևան, 1988, էջ 141; Հավելված 1: Այժմ՝ Ուղտուրթաշը:

⁵² Բաշքեյ (Բաշկեյ, Բաշքոյ) - գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կաղզվանի (Կաղզմանի) շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.1, էջ 604; Հավելված 1:

գրավեց Կերաշլու-գյուլ-թափա լեռը⁵⁵: Ընդ որում, Բաշքեյից դեպի Կերաշլու-գյուլ շարժվելու ընթացքում ձախ շարասյունը շրջապատել էին թուրքական կանոնավոր զորքի (հավանաբար 3-րդ հետևակային գնդի) ստորաբաժանումները և 2-3 հարյուրանոց քուրդ հեծյալների խումբը:

Հենց ձախ շարասյան եռանդուն գործողությունների շնորհիվ և Սարիղամիշի ջոկատի ուղեկալների միջամտությամբ այդտեղ հաջողվեց քրդերին ցրել և, ի վերջո, հետ մղել:

Հունիսի 20-ին աջ շարասյունը վճռականորեն շարժվելով առաջ և կտրելով Ադունդի⁵⁶ - Օլթի խճուղին, ժամը 18-ի կողմերը գրավեց Փենյակը, իսկ ձախ շարասյունը գրավեց Քոսոը⁵⁷ գյուղը:

Լուսաբացին միջին շարասյունը հարձակում ձեռնարկեց հակառակորդի Ադունդիբյան ամրացված դիրքերի ուղղությամբ, որոնք տեղակայված էին անտառածածկ բարձունքներում: Համառ մարտից հետո հակա-

⁵³ Փանջուր (Փանջուրեթ) – լեռ և լեռնանոց ՀՀ Վանանդի նահանգի Օլթիի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.5, Երևան, 2001, էջ 234; Հավելված 1:

⁵⁴ Զամփ – լեռ ՀՀ Վանանդի նահանգի Օլթիի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.2, Երևան, 1988, էջ 263; Հավելված 1:

⁵⁵ Կերաշլու-գյուլ-թափա (Քերաշլուգյուլ թափա) - լեռ ՀՀ Վանանդի նահանգի Օլթիի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991, էջ 102, հ.ջ, Երևան, 2001, էջ 360; Հավելված 1: Այժմ՝ Դեղիրմենլըդերե:

⁵⁶ Ադունդի (Ադունդր, Աքունդի, Ադունտեր) - գյուղակ ՀՀ Վանանդի նահանգի Օլթիի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.1, Երևան, 1986, էջ 201; Հավելված 1:

⁵⁷ Քոսոը (Կոսոը, Կոսուր) - ՀՀ Վանանդի նահանգի Օլթիի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991, էջ 221, հ.5, Երևան, 2001, էջ 436; Հավելված 1: Այժմ՝ Աքշար:

ռակորդն ընկճված էր, ընդ որում, քոչերը մենք գրավեցինք հեծելագորային գրոհով:

Հակառակորդը նահանջեց դեպի Միսեք⁵⁸ գյուղի մոտակա բարձունքները, որտեղ, չնայած մեր աջ և ձախ շարասյուների շրջանցող տեղաշարժերին, դեռևս շարունակում էր ցուցաբերել որոշակի դիմադրություն:

Հունիսի 20-ին բոլոր շարասյուները հանդիպեցին և միավորվեցին Փենյակի շրջանում: Ընդ որում, մեզ հաջողվեց գրավել հետևյալ ռազմավարը. համբարակային պահեստներ՝ մոտ 140 հազար եռագիծ փամփուշտներ, որոնց կարիքը մեզանում առանձնակի մեծ էր, լեռնային 3-դյույմանոց արկեր և մի մեծ գումակ՝ հարյուրից ավելի արաբաներով, որոնց մեջ առկա էին նաև 2 լեռնային հրանոթ և 5 հատ Մաքսիմ մակնիշի գնդացի:

Հունիսի 20-ին զորքերի հրամանատարի շտաբից ստացվեց հրաման, որտեղ հրահանգվում էր զբաղեցնել ածխահանքերը, ամրանալ տեղում և առաջ չշարժվել:

Հունիսի 21-ին աջ և միջին շարասյուները կազմում էին արդեն Օլթիի ջոկատը՝ գնդապետ Մազմանյանի հրամանատարությամբ: Ջոկատը դիրքեր զբաղեցրեց

⁵⁸ Միսեք - Հավանաբար պետք է հասկանալ ՀՀ Վանանդի նահանգի Օլթիի շրջանի Մազանս (Մազանե) գյուղը: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991, էջ 628: Հուշերում նկարագրվող մարտական գործողությունների թատերաբեմի տարածքում՝ Օլթիի շրջանում, ռուսական 1903 թ. զինվորական քարտեզի վրա նշվում է նաև Մազակե (Mazake) անվամբ բնակավայր: Հավանական է նաև՝ Մշեղ, տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991, էջ 847: Գտնվում է Կոստրի և Ադունտերի միջև: Այժմ՝ Այդոդդու:

Փանջուրյան լեռնանցքից՝ Ղափլի⁵⁹ գետակի արևելյան ափով, մինչև Վասկուտ⁶⁰ լեռը ներառյալ:

Չախ շարասյունը վերստին ներառվեց Սարիղամիշի ջոկատի կազմի մեջ և դիրքեր զբաղեցրեց Քերոլլի –բաշի⁶¹ լեռան վրայով՝ սկսած Իգդալի⁶² ագարակից: Դրան համապատասխան Սարիղամիշի ջոկատի մյուս զորամասերը Չիմիդադի⁶³ գրավումով հասան դիրքերի հավասարեցմանը: Դրանով էլ ավարտվեց Օլթիի օպերացիան⁶⁴:

Մեր կորուստներն այդ օպերացիայում հետևյալն էին. 5 սպանված և մոտ 30 (*որոշ հեղինակների մոտ նշվում է*

⁵⁹ Ղափլի- գետակ ՀՀ Վանանդի նահանգում, Օլթիի շրջանում: Տեղանունը մեզ հասանելի այլ աղբյուրներում չի հայտնաբերվել:

⁶⁰ Վասկուտ (Բասկուտ) – լեռ ՀՀ Վանանդի նահանգի Օլթիի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.4, Երևան, 1998, էջ 766; Հավելված 1:

⁶¹ Քերոլլի-բաշի (Քյոռոլլիբաշի) - լեռ ՀՀ Վանանդի նահանգի Օլթիի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.5, Երևան, 2001, էջ 405; Հավելված 1:

⁶² Իգդալի – փոքրիկ գյուղակ ՀՀ Վանանդի նահանգի Օլթիի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.2, Երևան, 1988, էջ 506; Հավելված 1: Գործնականում չի անվանափոխվել, այժմ՝ Ըղդալը:

⁶³ Չիմիդադ (Ջիմիհնդադ) - ըստ հուշերի հեղինակի՝ լեռ ՀՀ Վանանդի նահանգում, Օլթիի և Սարիղամիշի շրջանների սահմանահատվածում: Տեղանունը այլ աղբյուրներում չի հայտնաբերվել, սակայն աշխատություններից մեկում հանդիպում ենք Չամբար Դադ գրելաձևով մի տեղանվան, որն իր դիրքով համընկնում է հուշերում նկարագրվող տեղանքում գտնվող լեռան հետ, տե՛ս Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.3, Երևան, 2015, էջ 368:

⁶⁴ Օլթիի շրջանի գրավման հետ առնչվող հայկական զինուժի ռազմական գործողությունների վերաբերյալ տե՛ս նաև Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 443-444; Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.3, Երևան, 2015, էջ 365-368:

Ճշգրիտ 22 թիվը- Վ.Հ.) վիրավոր: Ընդորում, առավել մեծ կորուստներ կրեց ձախ շարասյունը:

Հակառակորդից մենք գերի վերցրինք մի քանի զինվոր: Մյուս զինվորները ցրվեցին ու տեղի խաղաղ բնակիչների անվան տակ թաքնվեցին գյուղերում և անտառներում:

Աջ և միջին շարասյունների հետ հարձակմանը մասնակցող հույն կամավորները հետապնդում էին միմիայն թալանի նպատակներ, ինչի հետևանքով էլ նրանց ներկայությունը գործնականում որևիցե մարտական նշանակություն չունեցավ և հունիսի 21-ի դրությամբ նրանք պարզապես ցրվեցին:

Օգոստոս ամսին, հաշվի առնելով Սարիղամիշի և Օլթիի ջոկատների դեմ թուրքերի նշմարվող ակտիվացումն ու ուժերի կենտրոնացումը, մենք գրավեցինք Ջամփ լեռը և մեր զորքերի դասավորությունն այնպիսին էր, ինչպես ցույց է տրված սխեմայում⁶⁵:

Զինվորների՝ մալարիայով հիվանդանալու պատճառով Օլթիի ջոկատն օրեցօր հալվում էր, և օգոստոս ամսին գումարտակների մարտական համակազմը պակասեց ավելի քան երկու անգամ:

Սեպտեմբերի սկզբին 5-րդ գնդի դիրքերում գտնվող 1 ³/₄ գումարտակը փոխարինվեց 1-ին գնդի Կաղըզմանից⁶⁶ վերցված 1 ¹/₂ գումարտակով, ինչից հետո ամբողջ 1-ին գունդը կենտրոնացվեց Օլթիի ջոկատում:

⁶⁵ Ձեռագրում սխեման բացակայում է, սակայն մենք այն փոխարինել ենք նույնաբովանդակ Հավելված 1-ով; տե՛ս նաև Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.3, Երևան, 2015, էջ 366, քարտեզ 6:

⁶⁶ Կաղզման (Կաղեզման, Կաղիզման, Կաղզվան) – քաղաք ՀՀ Վանանդի նահանգում: Տե՛ս նաև ՀՀՏՏԲ, հ.2,

Պահեստագործի բացակայության և զինվորների փոքրաթվության պատճառով մենք ստիպված թողեցինք որոշ դիրքեր:

Մյուս կողմից, օգոստոսի սկզբներին հակառակորդը սկսեց ակտիվություն ցուցաբերել Օլթիի ռազմաճակատում, իսկ օգոստոսի 20-21-ին նույնիսկ կարողացավ գրավել տեղի դիրքերի մարտավարական բանալի հանդիսացող Վասկուտ լեռը, սակայն այդ օրերին մեզ հաջողվում էր վերականգնել իրավիճակը⁶⁷:

Վերջապես, սեպտեմբերի 13-ի լույս 14-ի գիշերը, կենտրոնացնելով հետևակային մեկ բրիգադ (9-րդ դիվիզիայի 2 գունդ, հրետանու օժանդակությամբ) և Խալիդ-բեյի ղեկավարությամբ նախապատրաստելով Օլթիի շրջանի մեր կողմից գրաված հատվածի քրդերի ապստամբությունը, թուրքերը նախաձեռնեցին վճռական հարձակում Սարի-ղամիշի ջոկատի աջ թևի ուղղությամբ՝ դեպի Վասկուտ լեռը, որը, ինչպես նշվեց, մարտավարական առումով տեղի դիրքերի համար կարևոր բանալի էր: Թշնամուն հաջողվեց Վասկուտ լեռան լայն տափարակից դեպի ներքև քշել մեր նոսր շարքերը և շատ արագ կտրել Փենյակի մոտով անցնող խճուղին: Այստեղ տեղի ունեցավ սվինամարտ, որը, հակառակորդի գերազանցող ուժերի պատճառով նրա համար հաջող էլք ունեցավ:

.....

Երևան, 1988, էջ 908-909; Հավելված 2:

⁶⁷ Ընդհարումներ են եղել նաև սեպտեմբերի 9-10-ին: Տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 492-493:

Առավոտյան ժամը 6-ի կողմերը Օլթիի ջոկատի պետը հրամայեց նահանջել դեպի Փանջուրյան լեռնանցքը: 1-ն հետևակային գնդի 2-րդ և 11-րդ վաշտերը խճուղով նահանջեցին դեպի Աղունդիբի⁶⁸ լեռնանցք:

Օլթիի ջոկատի մյուս զորամասերը, հակառակորդի ուժեղ գրոհի պայմաններում, չկարողանալով կենտրոնանալ, սկսեցին լեռնային արահետներով շարժվել դեպի Փանջուրի լեռնանցք: Ճանապարհին ամեն մի թփի ու քարի հետևից նրանց դիմավորում էին ապստամբած քրդերի կրակոցները:

Այստեղ մենք թողեցինք երկու լեռնային և երկու թեթև հրանոթ (կրակող հարմարանքները կարողացանք փրկել) և մոտ 4 գնդացի, որոնց մի մասը նետովեց Աղունդիբկա⁶⁹ գետը:

5-րդ գնդի՝ Արդահանից ժամանած վաշտը սեպտեմբերի 15-ի լուսաբացին գրավեց Աղունդիբի լեռնանցքը, ինչի շնորհիվ Մերդենեկի ռազմաճակատին հաջողվեց որոշակի կայունացում հաղորդել:

Ֆիզիկապես և բարոյապես հյուժված Օլթիի ջոկատը սեպտեմբերի 16-ին զբաղեցրեց Մերդենեկ – Արդահան խճուղուց դեպի արևմուտք գտնվող Մերդենեկի նախկին դիրքերը: Փանջուրի լեռնանցքը մենք թողեցինք և այն գրավեց հակառակորդի կանոնավոր հետևակը, իսկ Աղունդիբի լեռնանցքը մնաց մեր ձեռքում:

⁶⁸ Աղունդիբ - լեռնանցք ՀՀ Վանանդի նահանգի Օլթիի շրջանում: Տե՛ս ՀՀՏՏԲ, հ.1, Երևան 1986թ., էջ 201; Հավելված 1:

⁶⁹ Աղունդիբկա - գետ ՀՀ Վանանդի նահանգի Օլթիի շրջանում, նույն տեղում:

Սեպտեմբերի 16-ին 5-րդ գնդի 6-րդ վաշտը դուրս եկավ դեպի Արդահան, որտեղից նրան այլևս վիճակված չէր վերադառնալ գենքը ձեռքին: Հետագայում նա պարտադրված ներկալվեց Վրաստան, այնտեղից վերադարձավ անգեն և հոկտեմբերի 11-ին Ադբաբա⁷⁰ լեռան մոտ միացավ իր գնդին:

Փենյակից նահանջելիս մենք ունեցանք հետևյալ կորուստները. 50 զինվոր, 4 սպա [...], 6 հրանոթ, որից 2-ը՝ մխոցային և 4 հատ Մաքսիմ մակնիշի գնդացի⁷¹:

Թե՛ թուրքերի ենթադրվող հարձակման, թե՛ Օլթիի շրջանի մեր կողմից զբաղեցրած հատվածի քրդերի պատրաստվող ապստամբության մասին Կարսի հրամանատարությունը քաջատեղյակ էր:

1920 թ. օգոստոսի վերջերին, գեներալ Հովսեփյանի պնդմամբ, Ալեքսանդրապոլի զորախմբի պետի մոտ կայացավ մի խորհրդակցություն, որին ներկա էր նաև Կարսի նահանգապետ Ղորղանյանը (*Կորգանով, Կարգանով*)⁷²:

⁷⁰ Ադբաբա - լեռ ՀՀ Վանանդի նահանգում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.1, Երևան, 1986թ., էջ 160: Հավելված 2:

⁷¹ Ըստ այլ տվյալների, այդ օրերին հայկական կողմը տվել է 200-ից ավելի սպանված և վիրավոր: Տե՛ս Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.4, Երևան, 2016, էջ 218:

⁷² **Ղորղանյան Ստեփան Ալեքսանդրի** (Կորգանով, Կարգանով Ստեփան Ալեքսանդրովիչ) (1865թ., Թիֆլիս – 1925թ. Թիֆլիս) – Կարսի մարզի՝ նախորդիվ նշված տարածքները Հայաստանի Հանրապետությանը միացնելուց հետո մինչև ՀՀ կործանումը զբաղեցրել է Կարսի քաղաքացիական նահանգապետի պաշտոնը: Անկուսակցական, հայտնի է իր ընդգծված պետականամետ հայացքներով ու գործունեությամբ: Կյանքի և գործունեության մասին մանրամասները տե՛ս

Գեներալ Հովսեփյանն առաջարկում էր Օլթիի շրջանի՝ մեր կողմից զբաղեցրած հատվածի մահմեդական բնակչության ամբողջ մարտունակ հատվածը արտաբնակեցնել թիկունքում, սակայն այդ առաջարկը չընդունվեց: Իսկ Էրիվան հղած այն խնդրանքը, ըստ որի Կարսի զորաջոկատն անհրաժեշտ է ուժեղացնել գոնե երկու կանոնավոր գումարտակներով, Էրիվանից մերժվեց կտրականապես:

Հաշվի առնելով թուրքերի սպառնալից դիրքավորումը Սարիղամիշի ջոկատի աջ թևի հանդեպ, վերջինս ուժեղացվեց 6-րդ պարտիզանական հեծյալ հարյուրյակով: Իգդալի ազարակից մինչև Ադունդիբ ընկած հատվածն էլ հսկում էին հեծյալ պարեկախմբերը:

Չնայած Կարսի ջոկատի կրիտիկական վիճակին ու հակառակորդի միանգամայն նկատելի դարձած ակտիվությանը և նրա ուժերի պարզորոշ նկատվող կուտակումներին, Կարսի ջոկատին համալրում այդպես էլ չհատկացվեց, եթե, իհարկե, չհաշվենք փոխզնդապետ Զատիկյանի հրամանատարությամբ Կարս ժամանած Ալեքսանդրապոլի ինքնապաշտպանության անգեն գումարտակը:

Փենյակից չափազանց ծանր պայմաններում իրականացրած նահանջը բարոյապես շատ ճնշող ազդեցութ-

Կարսի մարզը Հայաստանի Հանրապետության կազմում (1919 ապրիլ - 1920 հոկտեմբեր), Կարսի նահանգապետ Ստեփան Դորդանեանի յուշերը, աշխատասիրութեամբ՝ Վլադիմիր Յարութինեանի, Երևան 2018, 642 էջ (հետայսու՝ Վ. Յարութինեան, Կարսի նահանգապետի յուշերը); Վ. Հարությունյան, Կարսի վերջնախաղը, Երևան, 2018 թ., 180 էջ:

յուն էր թողել 1-ին գնդի վրա, ուստիև այդ գունդը այլևս մարտունակ չէր և հանգստի խիստ կարիք ուներ:

Այնպես որ, անիմաստ էր հույսեր տածել այդ գնդի միջոցով վերականգնելու դրությունը:

Մյուս կողմից, ձեռքի տակ չունենալով ազատ զորամասեր, Ալեքսանդրապոլի և Կարսի զորաջոկատների պետերի հետ խորհրդակցելուց հետո, համենայնդեպս, որոշվեց ակտիվության մի վերջին փորձ ձեռնարկել, այն է՝ 4-րդ գնդի ուժերով հակառակորդին հարված հասցնել Բարդուսի⁷³ ուղղությամբ: Հարձակման հաջողության դեպքում՝ նախ կվերականգնվեր զորքի նախկին ոգևորությունը և, ամենակարևորը՝ կրիտիկական վիճակ կստեղծվեր հակառակորդի Օլթիի գորախմբի համար:

Նշված պահին Օլթիի ու Սարիղամիշի ռազմաճակատներում հակառակորդն ուներ հետևյալ ուժերը. 9-րդ և 12-րդ դիվիզիաները, հեծյալ գունդ, Նարիմանի ու Թարթումի մեծ կազմով գումարտակները: Այս ամենը կազմում էր 20 գումարտակ՝ իր հրետանիով և դրան գումարած՝ 3 հեծելավաշտ: Այդ ուժի դեմ մենք ունեինք 8 կանոնավոր գումարտակ, պահակավաշտներից կազմված համահավաք մեկ գումարտակ, բավականին նոսրացած երկու պարտիզանական հարյուրյակ և, եթե չհաշվենք միսոցային հրանոթները, 10 թնդանոթ:

Սեպտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը Սարիղամիշի ջոկատը հակառակորդին հետ քշեց Բարդուսի բարձունքներից, բայց ժամանակին տեղ հասած հակառա-

⁷³ Բարդուս – Գյուլ ՀՀ Վանանդի նահանգի Օլթիի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.1, Երևան, 1986թ., էջ 622; Հավելված 1: Այժմ՝ Զյուլմրյուտ:

կորդի բավականին հզոր պահեստային ուժերը⁷⁴ հետ մղեցին մեր հարձակումը: Մեր ճակատային գիծը ճեղքելու պատճառով Սարիղամիշի ջոկատի զորամասերը միմյանցից անջատվել էին, բայց և այնպես, համառորեն պաշտպանվելով ջոկատը կանոնավոր կերպով նահանջեց դեպի Բեգլի-Ահմեդ⁷⁵, որտեղ կենտրոնացել էր, փաստորեն, Կարսի ամբողջ ջոկատը⁷⁶:

Այդ հարձակումով՝ 1920 թ. աշնան 45 – օրյա ռազմական գործողություններից հետո թուրքերը շահեցին Կարսը և Ալեքսանդրապոլը:

⁷⁴ Խոսքը հրետանիով ուժեղացված թուրքական 17-րդ հետևակային գնդի մասին է: Տե՛ս Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.4, Երևան, 2016, էջ 223:

⁷⁵ Բեգլի-Ահմեդ - գյուղ, նաև փոստային և երկաթուղային կայարան ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.1, Երևան, 1988թ., էջ 639: Հավելված 2: Գործնականում գրեթե չի անվանափոխվել: Այժմ՝ Բենլը Ահմետ:

⁷⁶ Հայկական հրամանատարությունը որոշում կայացրեց սեպտեմբերի 28-ի գիշերը դատարկել Սարիղամիշը: Սեպտեմբերի 29-ի առավոտյան քաղաք մտան ադրբեջանական հեծելազորային հետախուզական խումբը և թուրքական 12-րդ դիվիզիայի 35-րդ և 36-րդ գնդերը: Հայերն այնքան հապճեպ էին հեռացել, որ հակառակորդին էին թողել հսկայական քանակի սնունդ ու զինամթերք: Սարիղամիշը գրավելու վերաբերյալ իր տված հրամանի կապակցությամբ Մուստաֆա Քեմալը հայտարարել է, որ գործողությունը արժանացել է Խորհրդային Ռուսաստանի հավանությանը. «Ներկա հրամանի արձակումը գլխավոր շտաբի ու կառավարության և բարեկամական ու դաշնակից երկրների միջև նախորդ երկու ամսում տեղի ունեցած խորհրդակցությունների արգասիքն է>>: Տե՛ս Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.4, Երևան, 2016, էջ 224-227; Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 496:

Օլթիի օպերացիայի հետևանքները

Հուլիսի⁷⁷ 13-ին թուրքերը, մոտ մեկ հետևակային բրիգադի հասնող զինուժով գրավեցին Վասկուտ լեռը, որը գտնվում է Փենյակից դեպի հարավ: Միաժամանակ, բորբոքելով քրդերի ապստամբությունը Օլթիի ջոկատի (1-ին հետևակային գունդ, ½ մարտկոց, 2 [...] և 2 պահակային գումարտակներ Կարսի և Ալեքսանդրապոլի կայազորներից, 40 հեծյալ միլիցիոներներ, [2-րդ] բրիգադի պարետային վաշտը) թիկունքում, հակառակորդին հաջողվեց ճեղքել ռազմաճակատի մեր առաջնագիծը: Դրա արդյունքում թուրքերը կարողացան կտրել մեր զորքերի նահանջի հիմնական ճանապարհը՝ խճուղին և պարտադրել մեր կազմալուծված զորամասերին նահանջել Փանջուրի լեռնանցքով:

Նահանջի ժամանակ մեր կորուստները կազմեցին 70 սպանված և վիրավոր:

Հուլիսի⁷⁸ ամսի 15-ի դրությամբ Օլթիի ջոկատը կարողացավ կենտրոնանալ Մերդենեկի հին դիրքերում, որոնք գտնվում էին Արդահան տանող խճուղուց դեպի արևմուտք:

⁷⁷ Ակնհայտ վրիպում է: Նշված գործողությունները ծավալվել են 1920 թ. սեպտեմբերի 13-ին: Դա հետևում է հենց հեղինակի նախորդ շարադրանքից, ինչպես նաև այլ հետազոտություններում բերված տվյալներից: Տե՛ս Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.4, Երևան, 2015, էջ 218-220:

⁷⁸ Ակնհայտ վրիպում է: Նշված գործողությունները ծավալվել են 1920 թ. սեպտեմբերի 15-ին: Դա հետևում է հենց հեղինակի նախորդ շարադրանքից: Տե՛ս նաև Ռ.Գ. Հովհաննիսյան, նույն տեղում:

Մեր արևմտյան սահմանի (Արդահան-Մերդենեկ և Կարաուրզան ⁷⁹ - Կարակուրտ ⁸⁰) պաշտպանությունը հանձնարարված էր Կարսի ջոկատին, որն իր հերթին բաժանված էր Օլթիի, Սարիղամիշի և Կաղզմանի ջոկատների: Ինչպիսին էր զինվորների թվաքանակը այդ զորամասերում:

Մազմանյան՝ 1-ին գունդ, Միրիմանյան՝ 4-րդ գունդ, 1 մարտկոց (ջոկատի կազմում) և հրետանի: Մալարիայով հիվանդանալու պատճառով Օլթիի ջոկատի 1-ին հետևակային գնդի կազմում (հրամանատար՝ գնդապետ Հարությունյան⁸¹ (*Արուսյունով*)) մնացել էր ընդամենը 600 սվին: Գնդապետ Միրիմանյանի հրամանատարության տակ գտնվող 4-րդ հետևակային գնդում առկա էր 1100 սվին, և երկու գումարտակից կազմված

⁷⁹ Կարաուրզան (Կարաուրդան, Ղարաուրդան) - գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կաղզմանի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991թ., 31,32; Հավելված 1: Չի անվանափոխվել:

⁸⁰ Կարակուրտ(Կարակուրդ, Ղարադուրդ, Քարակուրտ) – գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կաղզմանի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991թ., էջ 11: Չի անվանափոխվել:

⁸¹ Գնդապետ **Հարությունյանը** հայտնի է որպես հայկական ազգային պետության կառուցման և մարտունակ ու կարգապահ ազգային բանակի ստեղծման կողմնակից և նվիրյալ: Որոշ ժամանակ եղել է 1-ին գնդի հրամանատար, իր անհամաձայնությունն է հայտնել գեներալներ Փիրումյանի և Հովսեփյանի բանակը կառավարելու որդեգրած անարդյունավետ գործելաճի հետ, իր տեսակետները ներկայացնելով ընդհուպ մինչև Ռազմական նախարարին: Կարսում Մայիսյան հակապետական խռովության ժամանակ կարողացել է կազմակերպել ու միավորել պետությանը հավատարիմ զինվորականությանը և ստիպել խռովարարներին զենքերը վայր դնել: Տե՛ս Վ.Հարությունյան, Կարսի վերջնախաղը, էջ 91, 129:

գնդապետ Շահբուդաղյանի հրամանատարության տակ գտնվող 5-րդ հետևակային գունդն ուներ 450 սվին: Կարսի պահակային գումարտակի չորս պահակային վաշտերը, որ իրականացնում էին կայագորային ծառայություն և պակաս մարտունակ էին, իրենց կազմում ունեին 250 սվին: 50 զինվոր առկա էր Ալեքսանդրապոլի շտաբի երկու վաշտերում: Հրետանի` [...]: Հեծելազոր. Փիլոսի պարտիզանական հարյուրյակը` 60-120 հեծյալ, Մուրադ-Խանի 6-րդ հարյուրյակը` 120-300 հեծյալ և հետևակ:

Ընդամենը⁸². հետևակ` [2550-2600 սվին], հրետանի- [մոտ 2 մարտկոց], հեծելազոր` [300-350 հեծյալ]:

Կարսի ջոկատի հենակետը և ջոկատի պետի գորակայանը Կարս քաղաքն էր:

Ելնելով ստորև բերվող նկատառումներից, ժամանակի հիշատակվող պահի համար Կարսը չէր կարող ամրոց համարվել:

Համաձայն 1911 թ. հրատարակված Ռուսական զինվորական հանրագիտարանային բառարանի, այդ պահին Կարսն արդեն համարվել է 3-րդ դասի ամրոց⁸³:

⁸² Բնագրում զինվորականների և հրետանու վերջնական թվաքանակները բերված չեն և մենք այստեղ բերում ենք գումարային տվյալներ, որոնց հաշվարկի համար հիմք ենք ընդունել զորատեսակների համար բնագրի տեքստում ներկայացված առանձին թվերը:

⁸³ Համաձայն ամրոցների ընդունված դասակարգման, տարբերակվել են չորս դասի ամրոցներ: 1913 թ. Ռուսաստանում հրատարակված Ռեզոլյուցիայի Հանրագիտարանում Կարսը հիշատակվում է որպես 3-րդ դասի ամրոց; տե՛ս В.Ф Новицкий, Военная Энциклопедия в 18-и томах, т.12, СПб, 1913г., с. 412:

Եվրոպական պատերազմի ժամանակ, հին հրետանու փոխարեն, Կարսից Էրզրում տեղափոխվեցին Կարսի համար նախատեսված նոր հրետանային զինատեսակները, որոնք էլ ռուսներն օգտագործեցին Էրզրումի պաշտպանության համար:

1918-ին Կարսը գրավելուց հետո առավել արժեքավոր հրետանային սպառազինությունը թուրքերը տեղափոխեցին Թուրքիայի խորքերը:

Երբ 1919թ. անգլիացիները գրավեցին Կարսը, նոր տեսակի մնացած հրանոթները և 2 միլիոն 3-գծանի փամփուշտները նրանք տարան դենիկիյան բանակի համար: Ի դեպ, հրանոթների մի մասը Դենիկիյնի բանակի փոխարեն հայտնվեց Ադրբեջանական Հանրապետությունում⁸⁴:

Կարսի ամրոցի բազմաթիվ ամրությունների ու ֆորտերի (բերդամասերի) պաշտպանության համար, ըստ

⁸⁴ ՀՀ թե՛ քաղաքական և թե՛ զինվորական ղեկավարությունը եռանդուն կերպով առարկել են բրիտանական զինուժի կողմից Կարսի զինապահեստների պարունակության նման բաշխման կապակցությամբ: Սակայն բրիտանական կողմը իր քայլերը հիմնավորել է նրանով, որ, նախ Կարսի պահեստները լեփլեցուն են զինատեսակներով, իսկ երկրորդը՝ զենքն ու զինամթերքը ուղարկվում է դենիկիյան բանակ, որն այդ զենքն օգտագործելու է նաև անկախ Հայաստանի թշնամի հանդիսացող բոլշևիկների դեմ: Չխորանալով մանրամասների մեջ, նշենք միայն, որ խոստացված 5 միլիոն 3-գծանի փամփուշտներից անգլիացիները, ի վերջո, Կարսում թողեցին ընդամենը 2 միլիոնը, հայտարարելով, թե Հայաստանի պաշտպանության համար այդ քանակը միանգամայն կբավականացնի: Տե՛ս Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.1, Երևան, 2005, էջ 244-245; Վ.Հարությունյան, Կարսի մարզը ՀՀ կազմում էջ 315, 317-318:

հաշվարկների, անհրաժեշտ է բանակային կորպուսի չափով՝ առնվազն 40 000 – անոց կայագոր: Եվ քանի որ բերդն էլ զինված էր բացառապես դաշտային մխոցային հրանոթներով, որոնք թողնվել էին այդտեղ որպես արժեք չունեցող, 28 հատ մեծ տրամաչափի ծանր հրանոթներով և 3 հին տեսակի հեռահար հրանոթներով, որոնք խփում էին 8 ½ վերստ, և պաշարման դեպքում էլ չունեին որևիցե պարենային պաշարներ, ապա պարզ է դառնում, որ ամրոցը կարող էր դիմադրել միայն այն դեպքում, եթե թևերից նա պաշտպանված լիներ դաշտային զորամիավորներով:

Պաշտպանության համար նախատեսված հետևակային կայագոր ամրոցը չունեին:

Գնդապետ Բաբաջանովի ջանքերով 1919 թ. վերջում ձևավորվող Կարսի ամրոցային հրետանին չէր կարող դիտարկվել որպես լուրջ մարտական միավոր, քանզի առկա էր հրետանավոր մասնագետ սպաների խիստ պակաս:

Կարսի ջոկատի հրամանատար, գեներալ Հովսեփյանը օպերատիվ տեսանկյունից ենթարկվում էր գեներալ Փիրումյանին, որը միաժամանակ և՛ Ալեքսանդրապոլի զորախմբի պետն էր, և՛ Կարս ամրոցի պարետը, ում զորակայանը գտնվում էր Կարսում:

Այսպիսով, հակառակ դաշտային զորքերի կառավարման մասին կանոնակարգի, Կարսի ջոկատի դաշտային զորամասերը ենթարկվում էին ամրոցի պարետին: Այս հանգամանքի բացասական դրսևորումն է հայտ եկավ մարտական գործողությունների ծավալման հենց ամենասկզբից:

Ջորախամբի պետի պաշտոնի գոյությունը, փաստորեն, ոչնչով արդարացված չէր: Իրոք, գեներալ Փիրումյանը իրավունք չուներ իր հայեցողությամբ օգտագործել Ալեքսանդրապոլում տեղակայված հետևակ և հեծյալ գորամասերը: Մյուս կողմից, Փիրումյանը չէր կարող միաժամանակ հանդես գալ որպես Կարսի շրջանի զինվորական և վարչական միասնական կառավարիչ, քանզի քաղաքացիական նահանգապետ Ղորղանյանը օրենքով նրան ենթակա չէր:

1919թ. տարեվերջից սկսած և ամբողջ 1920 թ. անցանքրդերի և թուրքերի հետ փաստորեն չդադարող մարտական գործողությունների մեջ, ինչպես, օրինակ, Մազմանյանի Մերդենեկի ջոկատի մեկուսացումը 1919 թ. վերջերին, Սարիղամիշի, և նույնիսկ, ամբողջ Կարսի ջոկատը մեկուսացնելու փորձերը, թուրք-քրդական ջոկատների մշտական գրոհները Սարիղամիշի և Կաղզմանի ջոկատների ուղղությամբ, ընդորում, հակառակորդին հաջողվեց մի պահ գրավել նույնիսկ Կաղզմանի շրջակայքը: Չնայած այդ ռազմական գործողությունների առկայությանը, Կարսի զինվորական հրամանատարությունը չկարողացավ հասնել նրան, որպեսզի կառավարությունը Կարսի նահանգում հայտարարի ռազմական դրություն, ինչը հնարավորություն կտար միավորել նահանգի զինվորական և քաղաքացիական կառավարման մարմինները: Ինչն, իր հերթին, նպաստելու էր Կարսի նահանգի անվտանգության աստիճանի բարձրացմանը:

Մշտական ռազմական գործողությունները պահանջում էին շատ մեծ թվով փամփուշտների սպառում: Մա-

կայն անգլիացիները ամբողջ Հայաստանի հաշվարկով Կարսում թողել էին ընդամենը 2 միլիոն եռագլիձ փամփուշտ: Հայաստանի զինուժի գերակշռող մասն օգտագործում էր հենց այդ փամփուշտները: Կարսի զորախմբին հատկացված էր այնքան չնչին մասնաբաժին, որ, չնայած այդ փամփուշտների չափազանց խնայողական օգտագործմանը, բանակի հրետանային վարչությունը կարողանում էր բավարարել Կարսի ջոկատի իրական պահանջների հազիվ 10%-ը:

Դիրքերի ձգվածության և ուժերի աննշան լինելու հետևանքով, Կարսի ջոկատը, չհաշված 2-3 պահեստային վաշտերը, զուրկ էր ընդհանուր պահեստագորային զորամասերից:

Փենյակը գրավելուց հետո Կարսի ջոկատի պետը քանիցս խնդրեց ուժեղացնել ջոկատը գոնե 2 կանոնավոր մարտունակ գումարտակներով, սակայն խնդրանքը Էրիվանից կտրականապես մերժվեց:

Օլթիի ջոկատի ուղղությամբ, հարձակմանը զուգահեռ, հակառակորդի հարձակումն ընթանում էր նաև Մարիդամիշի ջոկատի աջ թևի ուղղությամբ (Իգդալի ագարակը):

4-րդ գունդը հետ մղեց այդ գրոհը, սակայն Փանջուրով դեպի Մերդենեկ Օլթիի ջոկատի նահանջելուց հետո, 4-րդ գնդի աջ թևը և թիկունքը Օլթիի խճուղու կողմից մնում էին բաց և անպաշտպան:

4-րդ գնդի դիրքերն ավելի առաջ էին ընդհանուր ճակատային գծից, սակայն այդ հանգամանքը հնարավոր չէր թույլ տա օգտագործել Փենյակի շրջանում իրավիճակի վերականգման համար, քանզի մի կողմից բացակայում էր

ընդհանուր պահեստագործը, մյուս կողմից՝ ծանր նահանջի պատճառով 1-ին գունդը հայտնվել էր չափազանց ընկճված բարոյական կացության մեջ և այդ պահին չէր կարող օգտագործվել վճռական գործողությունների համար:

Նման կացությունը շատ արագ ցուցադրեց թուրքերին մեր անգործությունը:

Հերթական համառ պահանջների շնորհիվ, վերջապես, հաջողվեց ստանալ որոշակի համալրում. Կարս ժամանեց Տեր-Պողոսյանի 180-հոգանոց հեծելավաշտը, որն ուղարկվեց Սարիղամիշի ջոկատի աջ թևի պաշտպանությանը:

Սակայն նման աննշան օժանդակությունը չէր կարող շտկել Կարսի ջոկատի դրությունը:

Մինչդեռ, հետախուզական տվյալների միջոցով պարզվեց, որ Օլթի-Սարիղամիշ ռազմաճակատում հայտնվել է 4 գնդից բաղկացած մի նոր թուրքական դիվիզիա: Այդպիսով, Կարսի ջոկատի շատ թույլ կազմով՝ 3 գնդի դիմաց թուրքերը կենտրոնացրել էին 9-րդ և 12-րդ դիվիզիաները, սուվարիներից կազմված երկու տեղական հեծյալ գունդ, և մեծ կազմով երկու գումարտակ՝ Թորթումի և Նարիմանի գումարտակները: Բացի դրանից, թուրքերի կողմից էին կոչվում Օլթիի և Կաղզմանի, իսկ հետագայում՝ նաև Արդահանի և Մերդենեկի շրջանների քրդական ավազակախմբերը: Թուրքական 11-րդ դիվիզիան գործում էր Սուրմալուի⁸⁵ ուղղությամբ:

⁸⁵ Սուրմալու – գավառ ՀՀ Արարատյան նահանգում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.4, Երևան, 1998թ., էջ 725: Սուրմալուի ուղղությամբ, որտեղ թուրքական զորքի դեմ կոչվում էր Դրոյի գլխավորած զորաջոկատը,

Թուրքական կանոնավոր գնդերից ամեն մեկը կազմված էր 12 վաշտից, ամեն վաշտում՝ մոտ 100 զինվոր: Թուրքական զորքը լավ կազմակերպված էր, զինված էր մեծ թվով գնդացիներով, ուներ համապատասխան քանակությամբ հրետանի:

Այդպիսով, թուրքական Արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան իր հրամանատարության տակ ուներ մոտ 11 հազար զինվոր:

Փենյակի ուղղությամբ հարձակումն ու մեր կողմից գրաված Օլթիի շրջանի գավթումը հստակորեն խոսում էին թուրքերի գավթողական նկատառումների մասին:

Չնայած այդ բոլոր սպառնալից տեղեկություններին, Ռազմական նախարարությունը հերթական անգամ մերժեց Կարսի ջոկատին համալրում ուղարկելու խնդրանքը: Միակը, որ արձագանքեց այդ խնդրանքին, Ալեքսանդրապոլի պարետ գնդապետ Զատիկյանն էր: Զինվորական նախարարի թույլտվությամբ նա Ալեքսանդրապոլի ինքնապաշտպանության զորամասերից իր նախաձեռնությամբ Կարսի ջոկատ բերեց 1000 մարդ՝ թեև նվազ մարտունակ: Պարզվեց նաև, որ դրանց 90%-ը ռազմաճակատ է ուղարկվել առանց

դեպքերն ընթացան միանգամայն այլ հունով: Հոկտեմբերի 20-26-ը տևած կատաղի մարտերի արդյունքում հայկական զինուժը անցավ հակահարձակման և լիովին վերականգնեց հայկական վերահսկողությունը Սուրմալուի գավառում: Վերջնական արդյունքում, միևնույն է, Սուրմալուն նույնպես հայտնվեց թուրքերի ձեռքում: Տե՛ս Ս.Վրացյան. նշվ.աշխ., էջ 507-508; Բ. Հարությունյան, Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերի համադրման քննության շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, 2011, No.3, էջ 51-61:

զենքի, և մեծ դժվարությամբ Ալեքսանդրապոլից դրանց համար հետագայում հաջողվեց ստանալ Ռոսի մակնիշի հրացաններ: Ի դեպ, այդ զինատեսակին Հայաստանում այնքան էլ ծանոթ չէին: Թեև այդ գումարտակը չէր կարող դիտվել որպես լուրջ մարտական միավոր, բայցևայնպես, այդ հին կամավորների հայտնվելը դրական ազդեցություն ունեցավ Կարսի գորքերի միջավայրում:

Կարսի ջոկատի և Ալեքսանդրապոլի զորախմբի հրամանատարները բավականին ջանքեր գործադրեցին, որպեսզի Կարսի ջոկատն ուժեղացնեն թուրքահպատակ հայերից կազմված ոչ կանոնավոր զորամասերի (խմբերի) ձևավորման միջոցով, սակայն այդ նախաձեռնությունը որևիցե դրական արդյունք չտվեց: Պատճառն այն էր, որ այդ խմբերը՝ հիմնականում իրենց պատկանող հյուծված և ծառայության ոչ պիտանի ձիերով, կամ հրաժարվում էին մասնակցել ռազմաճակատի այն հատվածների մարտական գործողություններին, որոնք նշված չեն եղել ջոկատի հրամանատարի կողմից և չէին ցանկանում ճանաչել իրենց գլխին որևիցե այլ հրամանատար, բացառությամբ անձամբ գեներալ Հովսեփյանի, կամ էլ պարզապես կրիտիկական պահին թողնում էին դիքերը և անհետանում անորոշ ժամանակով:

Այդ փոքր խմբերի ընդհանուր հրամանատար Արշակ Պողոսյանը և այլք ղեկավարվում էին ոչ թե հայրենիքի հանդեպ պարտքի զգացողությամբ, այլ իրենց գործողություններում հիմնվում էին մեր այդօրվա կառավարմանը բնորոշ անպատասխանատվության հենքի վրա,

ինչով և նպաստում էին ռազմաճակատի և թիկունքի կազմալուծմանը:

Այդ խմբերում ընդգրկվածների քանակը տատանվում էր ամենաանհավանական ձևով: Այն աճում էր կանխավճար ստանալու օրերին և շատ արագ նվազում մարտական դիրքերին մոտենալիս:

Այդպիսին էր վիճակը Կարսի ջոկատի ճակատում և թիկունքում, երբ Կարսի հրամանատարությունը, համարելով դրությունը չափազանց սպառնալից, ձգտում էր վերականգնել դրությունը Փենյակում, որպեսզի չհանձնի Սարիղամիշի ջոկատի աջ թևի դիրքերը:

Իր տրամադրության տակ ունենալով բացառապես Սարիղամիշի աջ թևի գործասերը (մինչև 8 վաշտ հետևակ, 2 հեծելավաշտ Ալեքսանդրապոլի գնդի հետ և 4-րդ գունդը իրեն հատկացված լեռնային հրետանիով), գեներալ Հովսեփյանը, ստանալով գորախմբի պետի թույլտվությունը, որոշեց գրոհել թուրքերի ձեռքում գտնվող Բարդուսի բարձունքները: Նրա նպատակն էր գրավել Բարդուսը, կտրել թուրքերի հաղորդակցումը Փենյակի հետ, այդպիսով հնարավորություն տալ Մերդենեկի ջոկատին առաջ շարժվել դեպի արևմուտք և կրկին գրավել Փենյակը:

Սեպտեմբերի սկզբներին (8 –ի՞ն, թե՞ 9-ին, տեղեկանքը Սկենդարովի մոտ է), գեներալ Հովսեփյանն անձամբ էր ղեկավարում Սարիղամիշի ճակատի աջ թևի այդ գործողությունը և նրա իրականացրած գորադասավորման համաձայն, մեր զորքերը գիշերային գրոհ ձեռնարկեցին Բարդուսի բարձունքների ուղղությամբ և մինչ լույսը բացվելը գրավեցին դրանք: Սակայն Բար-

դուսից օգնության եկած թուրքական պահեստագործի մի քանի գումարտակները հետ մղեցին մեր զորամասերը, որոնք իրենց հետ կարողացան վերցնել մի քանի վիրավոր գերիների: Մեր կողմից վիրավորվել էին 4-րդ գնդի 2 սպա, սպանվել և վիրավորվել էր 30 մարդ:

Այդ գործողության ժամանակ Ալեքսանդրապոլի ինքնապաշտպանական ջոկատը և պահակային գումարտակների 2 վաշտերը, որպես նվազ մարտունակ միավորներ, տեղակայվել էին թիկունքային դիրքերում և լեռնանցքներում: Գրոհից հետո մեր զորքերը զբաղեցրին իրենց նախկին դիրքերը: Այդ անհաջող գրոհով, փաստորեն, սպառվեցին դրությունը վերականգնելու բոլոր հնարավորությունները:

Էրիվանից շոշափելի օգնության չտրամադրումը զգում և հասկանում էին թե՛ սպաները, թե՛ զինվորները, և այդ փաստը, գումարվելով մեր մարտական անհաջողություններին, խիստ վհատեցրել էր զորքի ոգին: Զորքի մոտ տիրում էր այն զգացողությունը, թե ինքը, փաստորեն, տրամադրված է ինքն իրեն ու իր սեփական ճակատագրին:

Ստեղծված սպառնալից իրավիճակը չհապաղեց իրեն զգացնել տալ: Սեպտեմբերի 13-ի լույս 14-ի գիշերը, օգտվելով գիշերվա շղարշից ու մառախուղից, թուրքերը թույլ ցուցադրական գործողություն ձեռնարկեցին Սարիղամիշի ջոկատի ձախ թևի ուղղությամբ: Միաժամանակ, աջ թևի ուղղությամբ կենտրոնացնելով մոտ 2 բրիգադի հասնող զինուժ, կարողացան ճեղքել Սարղամիշի ջոկատի ռազմաճակատը աջ հաստվածում, գրավելով 4-րդ մարտկոցի 2 լեռնային հրանոթ-

ներ: Թուրքերը ձգտում էին Ներքին Սալուտի⁸⁶ և Ելքեչմազի (Էլ -Քեչմազ)⁸⁷ վրայով անցնել և մնացյալ հայկական ուժերից ամբողջապես կտրել Սարիղամիշի ջոկատը: Սակայն մեր կողմից ցուցաբերած համառ դիմադրությունը (առանձնակի համառ պաշտպանվում էր հատկապես կապիտան Ղոնդարջյանի 1-ին գումարտակը)⁸⁸ հնարավորություն տվեց ետ քաշել Սարիղամիշի ջոկատը իր երկար ձգվող ճակատային դիրքերից և կանոնավոր կերպով նահանջել դեպի Բեզլի -Ահմեդ: Հնարավոր եղավ փրկել և թիկունք բերել 4-րդ գնդի առավել արժեքավոր ունեցվածքը: Սակայն գեներալ Հովսեփյանի հրամանը՝ նահանջի ընթացքում գրավել Սուլդաշ-ղայա⁸⁹ լեռը, չգիտես ինչու, չէր կատարվել:

Կարսի ջոկատի պետը, չունենալով իրական հնարավորություններ և չստանալով Էրիվանից ո՛չ օգնություն, և ո՛չ էլ հրահանգներ, սակայն ձգտելով հակադրել թուրքերի գերազանցող ուժերի սրընթաց հարձակմանը, հրաման տվեց գնդապետ Մազմանյանին անմի-

⁸⁶ Ներքին Սալուտ – գյուղ ՀՀ Վանանդի նահանգում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.4, 1998թ., էջ 473,474: Այժմ՝ Աշաղը Սալլըփնար:

⁸⁷ Ելքեչմազ (Էլ -Քեչմազ) - գյուղ և նույնանուն երկաթուղային կայարան ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.2, Երևան, 1988թ., էջ 176; Հավելված 2: Այժմ՝ քիչ ձևափոխմամբ՝ Յուզեչմեզ:

⁸⁸ Տե՛ս նաև Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 493:

⁸⁹ Սուլդաշ-ղայա, Սուլուղաշ-ղայա – լեռ ՀՀ Վանանդի նահանգում, Կարսի շրջանում: Տեղանունը մեզ հասանելի այլ աղբյուրներում չի հայտնաբերվել:

ջապես 1-ին գնդի գումակն ու հրետանին խճուղով Մերդենեկից ուղարկել Կարս, գնդապետ Սարմաքեշյանի հրամանատարությամբ Ռոդիոնովկայի ⁹⁰ շրջանում թողնել պահակային գումարտակի երկու վաշտերը, իսկ Մազմանյանն էլ, իր հրամանատարության տակ ունենալով 1-ին գնդի մեկ վաշտ և 15 հեծյալ միլիցիոներներ և մխոցային հրանոթներ, 4-րդ գնդի հետ միանալու նպատակով՝ սարերի վրայով պետք է շարժվեր Տայդունով ⁹¹ դեպի Բեզլի - Ահմեդ: Հանձնարարված էր Մերդենեկում այրել և ոչնչացնել ամենաարժեքավորն ու կարևորը և 24-ի առավոտյան կողմ անցումն արդեն պետք է իրականացված լիներ:

Նմանատիպ հրաման տրված էր նաև 5-րդ հետևակային գնդի հրամանատար գնդապետ Շահբուդաղյանին: Վերջինս խճուղով պետք է շարժվեր դեպի Կարս և դիրքեր զբաղեցնե՛ր Բերնա (Բեռնա) ⁹² գյուղի մոտակայքում: Տեղի հայ բնակչության տեղահան լինելու ցանկության դեպքում հրամայված էր չխոչընդոտել նրա տարհանմանը: Ուժերի նման կենտրոնացումով հնարավոր եղավ ժամանակավորապես ապահովել Կարսը հակառակորդի անսպասելի գրավումից: Գենեռալ Հովսեփյանը մեկնեց Բեզլի-Ահմեդ և պարզեց, որ

⁹⁰ Ռոդիոնովկա - գյուղ ՀՀ Վանանդի նահանգում, Կարս-Արդահան խճուղու վրա: Հավելված 1: Այժմ՝ Բուղաթեփե:

⁹¹ Տայդուն (Թոյդուն) – գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.5, Երևան, 2001թ., էջ 26,119: Հավելված 2: Այժմ՝ Թուրգուն:

⁹² Բերնա (Բեռնա) - գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.1, էջ 657; Հավելված 2: Այժմ՝ Կոյունյուրդու:

թուրքերի հարձակումը շարունակվելու դեպքում այստեղ գտնվող 4-րդ գունդը միանգամայն անպատրաստ է ցուցաբերելու որնիցե դիմադրություն:

Այդ նույն ժամերին պարզվեց, որ հակառակորդի առաջավոր զորամասերը արդեն գրավել են Սուլդաշղայան: Չկորցնելով ոչ մի բուպե, գեներալ Հովսեփյանը անձամբ շրջեց դիրքերը և անմիջապես մարտական հրաման արձակեց, որպեսզի մեր զորքերը անհապաղ դիրքեր զբաղեցնեն Ղարախաչ⁹³ սարով և Նովո-Սելիմի⁹⁴ ու Բեգլի-Ահմեդի միջև ընկած բարձունքներով, Բերնա գյուղով՝ մինչև Աղաղավա⁹⁵ լեռը: Գեներալն անձամբ էր հետևում և վերահսկում իր այդ հրամանի կատարման ընթացքը: Իր զորակայանը Հովսեփյանը Կարսից տեղափոխեց Բեգլի-Ահմեդ, որն առավել հարմար էր Կարսի հետ կապ պահպանելու համար:

⁹³ Ղարախաչ (Կարախաչ) – լեռ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում, նույնանուն գյուղի մոտակայքում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.2, Երևան, 1988, էջ 989: Հավելված 2:

⁹⁴ Նովո-Սելիմ - ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.4, Երևան, 1998, էջ 14: Հավելված 2: Այժմ՝ Սելիմ:

⁹⁵ Աղաղավա - լեռ և ստորոտին նույնանուն գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.1, էջ 151: Հավելված 2: Չի անվանափոխվել:

Կապի վիճակը

Անհրաժեշտ է նշել, որ Կարսի ջոկատում զգացվում էր հեռախոսային մալուխի խիստ պակաս⁹⁶, ինչի պատճառով հեռախոսակապը ջոկատում իրականացվում էր հեռագրալարերի միջոցով: Անհրաժեշտության դեպքում այդ լարերի անցկացման համար տեղադրվում էին նաև մեկուսիչներով (կամ առանց դրանց) սյուներ:

Այդ պատճառով գորամասերի ցանկացած տեղաշարժ անդրադառնում էր հեռախոսակապի վիճակի վրա: Մարտկոցները նույնպես չունեին բավարար քանակի հեռախոսային միջոցներ, ինչը դժվարացնում էր կրակի կառավարումը:

Հենց ինքը՝ Կարս քաղաքը, սպասարկվում էր 2-րդ բրիգադի հեռագրակապի միջոցներով:

Ամրոցի ֆորտերի (բերդամասերի) միջև նույնպես հեռախոսակապը բացակայում էր, և միայն մարտական գործողությունները սկսվելուց հետո բրիգադի կապի մի-

⁹⁶ Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ բանակի համար նախատեսված հեռախոսամալուխը, տարբեր հեռախոսային սարքավորումները այդ օրերին անհետացել էին բանակային պահեստներից և հետո սպեկուլյատիվ գներով ծածուկ վաճառվել շուկայում: Հեռախոսակապի միջոցները հայտնաբերելու և դրանք բանակին վերադարձնելու համար զինվորական մարմինները իշխանություններից նույնիսկ թույլտվություն էին խնդրել որոշ վայրերում անցկացնելու խուզարկություններ: Տե՛ս Վ. Հարությունյան, Կարսի մարզը ՀՀ կազմում, էջ 322-323:

ջոցներով որոշ ֆորտերի միջև սկսեց գործել հեռախոսակապը:

Կարսի կապի կենտրոնական հեռախոսակայանը գտնվում էր 2-րդ բրիգադի շտաբում:

Հեռախոսակապի մասով թուրքերը մեր համեմատ ունեին առավելություն, ինչը հատկապես իրեն զգացնել էր տալիս դաշտային հրետանու կրակը կառավարելու հարցում: Հավելենք, որ թուրքական զորքը զինված էր ավելի կատարյալ դաշտային հրանոթներով (1902 թ. տեսակի), որոնք մեր հրանոթների համեմատ (1900 թ. տեսակի) խփում էին 1 վերստ ավելի հեռու, ունեին ավելի ճշգրիտ նշանառու սարքեր և նրանց մասերն ավելի քիչ էին խարխլված, քան մեր ունեցածները:

Տեսնելով Կարսի ռազմաճակատում ստեղծված բարդ իրավիճակը և հասկանալով, որ օպերատիվ զեկույցները չափազանցված չեն եղել, և թուրքերն այլևս հետ չեն նահանջի, Էրիվանը գեներալ Սիլիկյանին (*Միլիկովին*) նշանակում է Կարսի ռազմաճակատի հրամանատար՝ բանակի հրամանատարի լիազորություններով, միաժամանակ նրա ենթակայության տակ դնելով այդ շրջանի բոլոր զինվորական և քաղաքացիական իշխանությունները:

Իր զորակայանը գեներալ Սիլիկյանը տեղադրեց Ալեքսանդրապոլում: Այս քաղաքը կարևոր կազմակերպական կենտրոն էր, քանի որ այնտեղ էին կենտրոնացված ու կուտակված անգլիական զենքի, զինամթերքի և հանդերձանքի պաշարները: Մյուս կողմից, քանի որ այդ բնակավայրը բավականին հեռու էր առաջնագծից, հնարավորություն կար այնտեղից ղեկավարել ռազմաճակատը և, միաժա-

մանակ, հետևել Արդահան-Չալդր⁹⁷ հատվածին, որտեղից թուրքերը կարող էին դուրս գալ Կարսի ջոկատի թիկունքը և անջատել այն մնացած գործող զորամասերից: Հաջի-Խալիլից⁹⁸ ու Կարա-Կալայից⁹⁹ դեպի Կաղզմանի ուղղությամբ նույնպես պահանջում էր, որպեսզի Ալեքսանդրապոլից հետևեն նաև այդ հատվածին: Գեներալ Սիլիկյանի շտաբի պետի ժամանակավոր պաշտոնավարող նշանակվեց Հայաստանի զինված ուժերի հրամանատարի շտաբի պետ գնդապետ Վեկիլյանը (*Վեկիլյան*):

Բեգլի-Ահմեդի շրջանի մարտական գիծը կարգի բերելուց հետո գեներալ Հովսեփյանը որոշեց տիրել թուրքական դիրքերի տակտիկական բանալի հանդիսացող Սուլդաշ-դայա լեռանը: Շնորհիվ իր բնական մակերևութապատկերի և պաշտպանված լինելով բոլոր կողմերից, այդ լեռը նմանվում էր բնական բերդամասի և ինքն իրենով արդեն բավականին հզոր հենակետ էր:

Սուլդաշ-դայան գրոհելու համար սեպտեմբերի վերջերին (տեղեկանքը՝ Սկենդարովից) առանձնացվեցին պահեստագործում գտնվող 1-ին հետևակային գունդը և 5-րդ գնդի մեկ գումարտակ՝ հրետանու աջակցությամբ:

⁹⁷ Չալդր (Չալդիր) – լիճ ՀՀ Վանանդի նահանգի Արդահանի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.4, Երևան, 1998թ., էջ 195:

⁹⁸ Հաջի Խալիլ (Հաճի Խալիլ) - գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում, նաև լեռնագագաթ: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991թ., էջ 357; Հավելված 2: Չի անվանափոխվել:

⁹⁹ Կարակալա – գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում, Կարսից հարավ: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.2, Երևան, 1988թ., էջ 991: Հավելված 2: Չի անվանափոխվել:

Գրոհող այդ խմբի ընդհանուր հրամանատար նշանակվեց գնդապետ Մազմանյանը: Գրոհի օրը անձրևոտ ու մռայլ եղանակ էր, և զինվորների տրամադրությունը բարձրացնելու համար գեներալ Հովսեփյանը հրամայեց նրանց բաժանել նոր ստացված հանդերձանքի մի մասը:

Գրոհող զորամասերը, համագործակցելով այդ շրջանում որոշ դիրքեր հսկող 4 –րդ գնդի աջ թևի հետ, մի պահ կարողացան գրավել թուրքական դիրքերի մի մասը: Սակայն, հանդիպելով հակառակորդի համառ դիմադրությանը և պարպելով բոլոր փամփուշտները, անկանոն ձևով հետ նահանջեցին, իսկ որոշ վաշտեր առհասարակ քայքայվեցին և ցրվեցին: Այնպես որ, Մազմանյանի ջոկատի քիչ կորուստներով նահանջը հնարավոր եղավ ապահովել իրեն դեռևս ենթարկվող ընդամենը մեկ վաշտի ուժերի պաշտպանությամբ:

Նահանջած զորամասերը գրեթե ամբողջովին հավաքվեցին Բեզլի-Ահմեդում և կարգի բերելու համար ուղարկվեցին պահեստագոր, բացառությամբ 5-րդ գնդի մի գումարտակի, որը գործողության ընթացքում ամենից քիչ էր տուժել: Ջոկատի հրամանատարի ձեռնարկած միջոցների շնորհիվ իրավիճակը զորամասերում շտկվեց ու կարգավորվեց:

Գործող զորքերի աջ թևի ապահովման համար Կարս ժամանեց Սմբատը¹⁰⁰ (*Սմբատ Բորոյան, Մախլուտ*)`

¹⁰⁰ **Սմբատ Բորոյան (Մախլուտ)** (1875թ., Մուշ – 1956թ., Երևան) – հայ ազատագրական շարժման նշանավոր դեմքերից, Առաջին աշխարհամարտի ժամանակ և հաջորդ ամիսներին մարտնչել է Անդրանիկի ջոկատում, եղել նրա օգնականը: Նկարագրվող ժամանակահատվածում իր ջոկատով կռվել է Կարսի ռազմաճակատում:

թրքահպատակ հայերից կազմված հետևակ և հեծյալ կամավորականների իր խմբով: Խումբը բավականին վատ էր հագնված, ինչը վրա հասնող ցրտերի պատճառով զգալի խնդիրներ էր առաջացնում (տեղեկանքը՝ Փիրումյանից): Սմբատի խումբը ուղարկվեց Ջելաուս¹⁰¹: Այստեղ խումբը պետք է հետևեր Արդահանի խճուղուն, հակազդեր այդ շրջանում գործող քրդական ավազակախմբերին և միաժամանակ հարձակում իրականացնել Արդահանի ուղղությամբ (տեղեկանքը՝ Փիրումյանից):

Չալդր լճից դեպի աջ գտնվող խճուղին հսկելու համար Գրենադերսկոյե ¹⁰²գյուղի մոտ ուղարկվեց 8-րդ գնդի մի փոքր զորաջոկատ:

Գնդապետ Ղորղանյանի (*Նիկոլայ Կորզանով, Կարզանով*)¹⁰³ շարասյունը՝ համահավաք հեծյալ գունդը և

Մասնակցել է Փետրվարյան ապստամբությանը, հետո անցել արտասահման: Ֆրանսիայում՝ գերմանական օկուպացիայի պայմաններում, մասնակցել է Միսաք Մանուշյանի խմբի գործողություններին: 1947 թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան և մինչև կյանքի վերջ եղել է Կոմիտասի անվան այգու պահակը:

¹⁰¹ Ջելաուս – գյուղ և նույնանուն հանքային ջուր ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.4, Երևան, 1998թ., էջ 396; Հավելված 2: Այժմ՝ թաղամաս Մուսուզ ավանի շրջագծի մեջ:

¹⁰² Գրենադորսկոյե - գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.1, Երևան, 1986թ., էջ 962; Հավելված 2: Այժմ՝ Արփաչայ:

¹⁰³ **Ղորղանյան Նիկոլայ Ադամի** (Կորզանով, Կարզանով Նիկոլայ Ադամովիչ) (1878թ., Թիֆլիս – 1921 թ., Երևան) – ցարական բանակի հեծելազորի գնդապետ, հայկական բանակում՝ գնդապետ, դերակալ գեներալ, անկուսակցական: Կարևոր դերակատարում է ունեցել Ղարաքիլիսայի ճակատամարտում, ՀՀ զինված ուժերում զբաղեցրել է մի շարք հրամանատարական պաշտոններ, մեծ ջանքեր է

երիվանյան պահակային գումարտակը, գեներալ Սիլիկովն ուղարկել էր Մերդենեկի խճուղով դեպի Դեմուրկափի ¹⁰⁴ գործողություններ ծավալելու նպատակով: Ղորղանյանի ենթակայության տակ էր դրվում նաև գնդապետ Սարմաքեշևի ջոկատը: Հեծյալ գունդը Ալեքսանդրապոլից երկաթուղով Կարս տեղափոխվելիս վթարի ենթարկվեց, կորցրեց 18 զինվուն և նույնքան էլ սպանված և վիրավոր ձիեր¹⁰⁵: Իրեն միացնելով Տեր-Պողոսյանի հեծելավաշտը, գունդն իր կազմում ունեցավ 350 սուր: Բացի դրանից Ալեքսանդրապոլում թողնվել էր 120 հիվանդ և անուժ ձիերի մի ամբողջ բազմություն¹⁰⁶:

գործադրել հայկական բանակում անհրաժեշտ հեծելագորային միավորում ստեղծելու համար: Նկարագրվող ժամանակահատվածում, որպես հեծյալ գնդի հրամանատար, մասնակցել է Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ ռազմական գործողություններին: Հայաստանի խորհրդայնացումից հետո ձերբակալվել է և 1921 թ. փետրվարի 18-ին կացնահարվել Երևանի բանտում:

¹⁰⁴ Դեմուրկափի (Դեմուրկափը) - գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Արդահանի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.2, Երևան, 1988թ., էջ 79; Հավելված 1: Այժմ՝ Էսքի Դեմիրքափը:

¹⁰⁵ Չուտ տեխնիկական առումով, վթարը տեղի է ունեցել կտրուկ շրջադարձով ճանապարհահատվածը թույլատրվածից բարձր արագությամբ անցնելու պատճառով: Տե՛ս Ю. Пирумян, На обрывах лет и дней. Жизнь Даниэл-бека Пирумяна, Москва, 2013. с с.522-523: Միմոն Վրացյանն էլ շեշտում է, որ վթարը կազմակերպել են հայ բոլշևիկները, որպեսզի այդ միջոցով խոչընդոտեն ռազմաճակատ լրացուցիչ ուժեր տեղափոխելուն և դյուրացնեն քեմալական ջոկատների առաջ շարժվելը դեպի Կարս: Տե՛ս Ա.Վրացյան, նշվ. աշխ., էջ 508:

¹⁰⁶ 1920 թ. հուլիս-օգոստոսին բանակի պատասխանատու անձինք Աղ-Բաբայի թուրքերից միանգամայն օրինական կարգով իրականացրել են մոտ 600 գլուխ ձիերի գնում՝ հեծելագորն ու հրետանին թարմ

Հոկտեմբերի սկզբներին գնդապետ Ղորղանյանը ժամանեց Ռոդդիոնովկա գյուղ, որտեղ տեղակայված էր նաև իր զորակայանը: Այստեղ նրա զորաջոկատին տրամադրվեցին նաև 2 հրանոթներ 13-րդ մարտկոցից: Մերդենեկի և Արդահանի խճուղիների շրջանում թուրքական կանոնավոր զորքեր չէին նկատվում և գործում էին բացառապես քրդական ավազակախմբերը (հիմնականում Մերդենեկի ուղղությամբ): Նրանց թվաքանակը հասնում էր 600-ի, նրանք հրետանի չունեին, սակայն խիստ ոգևորված էին թուրքական զինուժի ներկայությունով: Գնդապետ Ղորղանյանի մոտակա խնդիրն էր Դեմուրկափի գյուղի գրավումը: Դրա համար անհրաժեշտ էր գրավել Լյայա-Բարդենիս նեղ կիրճի իշխող բարձունքները: Այդ տարածքի կարևոր բարձունքներից Կայնըղ¹⁰⁷ լեռը քրդերը շատ ամուր իրենց ձեռքում էին պահում: Ի կատարումն այդ խնդրի, գնդապետ Ղորղանյանը հոկտեմբերին անցավ հարձակման, հետևակի ուժերով իրականացնելով ճակատային գրոհը, հեծելագործով էլ շրջանցելով հակառակորդին հյուսիսից: Երկու անգամ հետևակը գրավեց Կայնըղ լեռը, սակայն էրիվանյան պահակային գումարտակի թույլ կայունության ու անփութությամբ

ձիերով համարելու համար: Ձիերը բանակին հասցնելու պատասխանատուն եղել է Շիրակի նահանգի տեղական իշխանությունը: Ավելի ստույգ՝ միլիցիան: Սակայն միլիցիոներները ճանապարհին թուրք ձիատերերից խլել են առողջ ձիերին՝ փոխարենը տալով հիվանդ և ծերացած ձիեր և ստիպել, որ հենց դրանք հանձնվեն բանակին: Այդ պատճառով էլ ի հայտ է եկել ձեռագրում նշված խնդիրը: Տե՛ս Վ. Հարությունյան, Կարսի մարզ ՀՀ կազմում, էջ 338-340, 342:

¹⁰⁷ Կայնըղ (Կայնըխ) – լեռ ՀՀ Վանանդի նահանգի Արդահանի շրջանում: Տե՛ս ՎՀԾՏԲ, հ.2, Երևան, 1988թ., էջ 932:

յան պատճառով, հակառակորդը, օգտվելով տեղանքի անտառոտ ծածկույթից, կարողացավ թափանցել մեր շարքերի թիկունքը, առաջ բերել այնտեղ տազնապ ու խառնաշփոթ և ստիպել մեր շարքերին նահանջել իրենց ելման դիրքերը: Սմբատի խմբերը հակառակորդի հետ որևիցե լուրջ ընդհարումներ չունեցան և գտնվում էին շրջանում (տեղեկանքը՝ Փիրումյանից):

Գեներալ Հովսեփյանին հրամայված էր մինչև գնդապետ Իշխանյանի շարժունակ պահեստագործի (7 –րդ հետևակային գունդը և հրետանի) մոտենալը առանձնակի ակտիվություն չցուցաբերել: Գնդապետ Իշխանյանը գործում էր գեներալ Սիլիկյանի անմիջական ենթակայության տակ և նա շարժվում էր Հարամ Վարդան ¹⁰⁸ -Տուլդուն ուղղությամբ, նպատակ ունենալով շրջանցել գեներալ Հովսեփյանի բրիգադի դեմ գործող թուրքական զորաջոկատի ձախ թևը: Մինչդեռ 2-րդ բրիգադի ճակատում թուրքերը ուժեղանում էին. ըստ գեներալ Հովսեփյանի և նրա շտաբի դիտարկումների, նկատելի էր, որ Կարակուրտի կողմից մոտենում է մոտ մեկ բրիգադի հասնող թուրքերի մի մեծ զորախումբ:

Նշված ժամանակի պահին Ալեքսանդրապոլի գումարտակից մնացել էր մոտ 180 մարդ: Մնացածը կամ հիվանդացել էին, կամ դիմել դասալքության: Հակառակորդի մոտեցող շարասյունը հետախուզելու համար նրան ընդառաջ ուղարկվեց Ալեքսանդրապոլի ինքնապաշտպանական գումարտակի մեկ վաշտ և հեծյալ մեկ խումբ՝ բոլորը

¹⁰⁸ Հարամ Վարդան – գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991թ., էջ 383: Հավելված 2: Այժմ՝ Քարաչոբան:

անձամբ գնդապետ Ջատիկյանի¹⁰⁹ հրամանատարությամբ: Հետախուզական խմբի առջև խնդիր էր դրված զբաղեցնել Յավե-Ղուզղան¹¹⁰ գյուղի մոտ գտնվող վճռական նշանակության բարձունքը:

Հակառակորդի շարժվող շարասյունը հենց ընթացքից առանձնացրեց գնդացիներով զինված երկու վաշտ, որոնք շատ արագ ընթացան առաջ, կոտրեցին մեր վաշտի դիմադրությունը, գնդացրային կրակով բարձունքից նրան վայր գլորեցին և տիրացան այդ բարձունքին:

Այս գործողության ընթացքում առաջին անգամ ի հայտ եկավ թուրքական զորքում կիրառվող կապի օպտիկական եղանակը՝ ազդանշանային փոքր կարմիր դրոշակների միջոցով: Դրոշակների կարմիր գույնն ընտրված էր, հավանաբար այն պատճառով, որ այն լավ էր պատկերագծվում տեղանքի վրա, մինչդեռ մյուս գույները կմիախառնվեին տեղանքին և կլինեին նվազ տեսանելի:

Ռազմաճակատում տիրող իրավիճակի հետ ծանոթանալու համար 2-րդ բրիգադի զորամասեր այցելեցին անգլիական և ֆրանսիական զինվորական ներկայացուցիչներ: Վերջինս անձամբ էր դիտախոզովակով հետևում թուրքական շարասյան մոտենալուն:

¹⁰⁹ **Գնդ. Ջատիկյանի** անվանը հանդիպում ենք նախ Ռյազան արսորված հայկական բանակի սպաների ցուցակում, տե՛ս Ա.Ա. Григоров, А.И. Григоров, *Заключенные...*, էջ 389, ինչպես նաև՝ հայկական բանակի հետմահու արդարացված սպաների ցուցակում, տե՛ս *Список лиц, ...*:

¹¹⁰ Յավեղուզղան - գյուղ ՀՀ Վանանդի նահանգում, Կարսի շրջանում: Տեղանունը մեզ հասանելի այլ աղբյուրներում չի հայտնաբերվել:

Հակառակորդի այդ շարասյան մոտենալուց հետո 2-րդ բրիգադի ձախ թևի զբաղեցրած դիրքերը դարձան խիստ անբարենպաստ և այդ թևը հայտնվեց սպառնալից վիճակում: Հաշվի առնելով այդ հանգամանքը, գեներալ Հովսեփյանին հրամայվեց ժամանակ շահել մինչև մեր ուժերի նպաստավոր տեղաբաշխումն իրականացնելը և շարժունակ պահեստագործի տեղ հասնելը: Գեներալ Հովսեփյանը, զգուշանալով, որ ձախ թևում թուրքերի հարձակման հետևանքով իր բրիգադի այդ հատվածը կարող է կազմալուծվել և դրանով վտանգել գեներալ Միլիկյանի՝ մեր կողմից ճակատի ակտիվացման ամբողջ նախագիծը, կայացրեց հետևյալ որոշումը. իր տեղում թողնելով բրիգադի աջ թևը, հոկտեմբերի 9-ին բրիգադի ձախ թևը տեղաբաշխել խիստ ընդգծված Ադրաբալեռան վրա, իսկ կենտրոնով, գրավելով Վլադիկարս¹¹¹ և Նովո-Միխայլովկա¹¹² գյուղերը, զբաղեցնել երկու թևերի հետ միավորող դիրքեր: Իր զորակայանը Հովսեփյանը տեղափոխեց Վլադիկարս կիսակայարան:

Հոկտեմբերի 10-ի լուսաբացին թուրքերը զբաղեցրեցին մեր ձախ թևի թողած դիրքերը, ինչով մասնակիորեն ապացուցում էին իրենց հարձակողական մտադրությունները մեր ձախ թևի նկատմամբ: Մեր ուժերի այդ հետքայլն իրականացվել էր գեներալ Փիրումյանի

¹¹¹ Վլադիկարս – գյուղ և երկաթուղային կայարան ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.4, Երևան, 1998թ., էջ 807; Հավելված 2: Այժմ՝ Դիքմե:

¹¹² Նովո-Միխայլովկա – գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.4, Երևան, 1998թ., էջ 13: Հավելված 2: Այժմ՝ Դիքմե ավանի հարավային թաղամասն է:

թույլտվությամբ, ով մինչ այդ անձամբ ժամանել էր Բեգլի-Ահմեդ և մեր ենթադրվող նոր դիրքերի համար գեներալ Հովսեփյանի հետ միասին իրականացրել տեղանքի շրջագննումը: Թե որքանով էին զինվորականների քայլերը համաձայնեցված Վրացյանի նախագահությամբ և Բաբայանի մասնակցությամբ (տեղեկանալ Բաբայանից) Կարսում գտնվող նախարարական հանձնաժողովի հետ¹¹³, վկայում է այն հանգամանքը, որ այդ խելամիտ նահանջը կամ դատապարտվեց այդ հանձնաժողովի կողմից, կամ այդպես էլ մինչև վերջ չհասկացվեց: Ընդ որում, գեներալ Հովսեփյանը մեղադրվեց խուճապային իրավիճակ ստեղծելու համար:

Հոկտեմբերի 10-ի լույս 11-ի գիշերը թուրքերը հետախուզում իրականացրին մեր աջ թևի ուղղությամբ և ներքև մղեցին Կարա-Խան¹¹⁴ սարի վրա գտնվող մեր գորամասերը: Սակայն այդ ժամին դեպի գյուղի մոտակա դիրքերին մոտեցող մեր 1-ին գնդի գումարտակը՝ կա-

¹¹³ Նշված կառավարական հանձնաժողովը Կարս էր ժամանել հոկտեմբերի 2-ին: Այն օժտված էր բավականին լայն լիազորություններով և ենթադրվում էր, որ ի գորու կլինի ինչ-որ չափով դրական տեղաշարժեր իրականացնել Կարսի շուրջ ստեղծված իրավիճակում: Սակայն հանձնաժողովի ներկայությունը իրադրության որևիցե փոփոխության չհանգեցրեց (արդեն չէր էլ կարող): Կարսի անկումից մի քանի օր առաջ Վրացյանը սավառնակով մեկնեց Երևան, իսկ Բաբայանի հոկտեմբերի 30-ին Կարսում գերի ընկավ: Միմոն Վրացյանն այդ օրերին Հ. Օհանջանյանի գլխավորած կառավարության կազմում գյուղատնտեսության նախարարն էր, իսկ Արտաշես Բաբայանը՝ հանրային խնամատարության նախարարը:

¹¹⁴ Կարա Խան (Ղարախան) - լեռ և նույնանուն գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.2, Երևան, 1988թ., էջ 988: Հավելված 2: Չի անվանափոխվել:

պիտան Աղայանի գլխավորությամբ, չնայած մթանն ու կողմնորոշվելու դժվարություններին, արընթաց անցավ գրոհի, հետ շարտեց թուրքերին և վերականգնեց մարտական դրությունը:

Նախքան հոկտեմբերի 14-ի հարձակումը, ինչի մասին խոսակցությունը դեռ առջևում է, գեներալ Հովսեփյանի բրիգադն այցելեցին հանրապետության զորքերի հրամանատար, գեներալ Նազարբեկյանը (*Նազարբեկովը*), գեներալներ Հախվերդյանը (*Ախվերդովը*)¹¹⁵ և Սիլիկյանը: Գեներալ Նազարբեկյանը ճառով դիմեց ընտիր զինվորական համագգեստը նոր-նոր հագած 1-ին գնդի պահեստայինների շարքում կանգնած զինվորներին: Սպարապետը զինվորներից պահանջում էր ցուցաբերել տոկունություն և կատարել իրենց պարտքը հայրենիքի առաջ: Դրանից հետո նա այցելեց 5-րդ գունդը և նույն ճառով դիմեց այդ գնդի պահեստի զինվորներին: Հոկտեմբերի 14-ին նշանակված էր...

Հոկտեմբերի առաջին օրերին 1-ին և 5-րդ գնդերը սկսեցին ստանալ մեծաթիվ համալրում: Նորակոչիկներ-

¹¹⁵ **Հախվերդյան Հովհաննես Բարսեղի** (Ախվերդով Իվան Վասիլևիչ) (1873թ., Սանկտ-Պետերբուրգ – 1931թ., Մոսկվա) – ցարական բանակի գեներալ-մայոր, հայկական բանակի գեներալ-լեյտենանտ, անկուսակցական: Հայաստանի Հանրապետության առաջին Ռազմական նախարար, հետագայում՝ նաև ՀՀ զինված ուժերի հրամանատարի շտաբի պետ, Ռազմական նախարարի տեղակալ: Հենց այս պաշտոնն էր զբաղեցնում Հ. Հախվերդյանը նկարագրվող ժամանակահատվածում: Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո քանիցս ձերբակալվել է, 1930թ.՝ այսպես կոչված «Վենսն» գործողության շրջանակներում դատապարտվել է և գնդակահարվել: Հետմահու արդարացվել է 1989թ.:

րը ընտիր հանդերձավորված էին և զինված էին Ռոսի հրացաններով, որոնց հետ քիչ էին ծանոթ: Եկավ նաև 5-րդ գնդի 6-րդ վաշտը, որին վրացիները բաց էին թողել Հայաստան եկող զենքի գումակի հետ:

Այդ համալրումը, որի շնորհիվ 5-րդ գնդի համակազմը կրկնապատկվեց (850 մարդ), իսկ 1-ին գնդինն էլ ավելացավ 40%-ով, խիստ կործանարար անդրադարձավ այդ գորամասերի մարտունակության վրա: Հարցը նրանում էր, որ այդ համալրումը բաղկացած էր բացառապես շորագյալցիներից, և, եթե կարելի է այդպես արտահայտվել՝ բացառապես արտոնագրված դասալիքներից: Նրանք ոչ միայն բացարձակ անմարտունակ էին, այլ նաև ավերում ու քայքայում էին այն միջավայրը, ուր որ իրենց ուղարկել էին:

4-րդ հետևակային գունդը հիմնականում պահպանել էր իր համակազմը և համալրում չստացավ, ինչի շնորհիվ էլ այդ գունդը պահպանեց իր մարտունակությունը: Միակ համալրումը, որ ստացավ այդ գունդը, բաղկացած էր Թիֆլիսից ժամանած կամավորներից: Այդ խումբը հատուկ կցվեց 4-րդ գնդին (որպես 13 –րդ վաշտ) և կազմված էր նույն դասալիքներից¹¹⁶, որոնց քաղաքա-

¹¹⁶ Նշված համալրման կազմում մեծ թիվ էին կազմում բուլղարական գործակալները, որոնք ոչ միայն քարոզչական միջոցներով, այլև իրենց կենդանի օրինակով ցուցադրում էին մյուս զինվորներին, թե ինչպես պետք է ոչ միայն չկռվել եկող թուրքական զորքի դեմ, այլև ամեն ինչով նպաստել դեպի Կարս ընթացող նրանց հաղթարշավին: Հատկանշական է, որ երբ որոշ սպաներ սպառնացել են խուճապ ու փախուստ առաջացնողներին, ապա դրանցից շատերը փախել են ոչ թե դեպի թիկունք, այլ դեպի թուրքական դիրքերը: Տե՛ս Վ.Հարությունյան, Կարսի վերջնախաղը, Երևան, 2018, էջ 162-163:

ցիական վարչակազմը հանկարծ սկսեց հայտնաբերել զանգվածներով և ուղարկել գորամասերի տրամադրության տակ: Արագորեն սկսվեց նաև Կարսի պահակային գումարտակի վաշտերի կազմավորումը, որոնց թիվը հասավ 14-ի, ամեն մեկում 100-կան զինվոր: Բոլորն էլ գերազանց հանդերձավորված էին, զինված Ռոսի հրացաններով, համալրված էին անհրաժեշտ հրամկազմով, սակայն իրենց մարտական ոգով պիտանի էին, թերևս, միայն ամենահեռավոր թիկունքային ծառայության համար:

Քանի որ շարժական պահեստագորն արդեն մոտեցել էր, գեներալ Սիլիկյանը ընդհանուր հարձակման օր նշանակեց հոկտեմբերի 14-ը: Այդ հարձակման շրջանակներում գնդապետ Ղորղանյանի ջոկատին հրամայված էր, համագործակցելով Սմբատի խմբի հետ, գրավել Դեմուր-Քափին: Գնդապետ Իշխանյանի շարժական պահեստագորը պետք է հյուսիսից շրջանցեր Մուլդաշի ամրացված դիրքերը, իսկ գեներալ Հովսեփյանի ջոկատը պետք է անցներ ճակատային հարձակման՝ գլխավոր հարվածն ուղղելով դեպի Մուլդաշ-դայա:

Ի կատարումն այդ հրամանի գեներալ Հովսեփյանն իրականացրեց գորքերի հետևյալ տեղաբաշխումը. պահեստային ուժերից 1-ն գունդը, որը համեմատաբար կարգի էր բերվել, թեև թուլացվել էր դասալիքներով համալրվելու պատճառով, հանձնվում էր գնդապետ Մազմանյանին, որը քաջածանոթ էր տեղանքին այդ ուղղությամբ իրականացրած դեռևս առաջին հարձակումից: 1-ին գունդը պետք է կենտրոնանար Կարա-Խաչ լեռան շրջանում և, գրոհին աջակցելու նպատակով, թող-

նելով դիրքերում նոսր շարքեր, պետք է սրընթաց գրո-
հեր Սուլդաշ-դայան, շրջառելով այն հյուսիսից:

Գնդապետ Միրիմանյանի (*Միրիմանովի*) միջին ձախ
հատվածին տրամադրվում էր 6 վաշտ, որոնք շտաբային
սպայի գլխավորությամբ, մարտն սկսվելուն պես, պետք
է հարավ-արևելքից գրոհեին Սուլդաշ-դայան, շրջառե-
լով այն հարավից: Միջին մարտական հատվածը պետք
է հարձակումը տաներ Նովո Սելիմ- Լալ-օղլի¹¹⁷ ուղ-
ղությամբ, որպեսզի աջակցություն ցուցաբերեր Սուլ-
դաշ-դայան գրոհող մեր զորամասերին: Ձախ մարտա-
կան հատվածին (5-րդ գնդի գումարտակներին) հրա-
մայված էր.....:

Գործողությունը անձամբ ղեկավարելու համար Մի-
լիկյանը Ալեքսանդրապոլից ժամանեց Կարս¹¹⁸:

.....

Հոկտեմբերին ավարտվեց 1-ին գնդի վերազինումը
Ռոսի հրացաններով, 4-րդ գունդը զինված էր Լեբելի
հրացաններով: Հաշվի առնելով, որ մեկ գնդի համար
առկա էր 3-գծային փամփուշտների բավարար քանակ,
5-րդ գնդին ժամանակավոր թողնվել էին 3-գծանի հրա-
ցանները: Հաշվի առնելով զորքերում բեռնակիր կենդա-

¹¹⁷ Լալ Օղլի (Լալ Օղլը) - գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի
շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.2, Երևան, 1988թ., էջ 557 ; Հավելված 2: Չի
անվանափոխվել:

¹¹⁸ Ըստ այլ տվյալների գեներալ Միլիկյանը մնացել էր Ալեքսանդրա-
պոլում. <<Ալեքսանդրապոլում Միլիկյանն ու Վեքիլովը տագնապով
պատից պատ էին քայլում...>>: Տե՛ս Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաս-
տանի Հանրապետություն, հ.4, Երևան, 2015, էջ 284:

նինների պակասը, գնդերին տրամադրվել էին սահմանափակ քանակով Վիկերսի նոր գնդացիներ:

Մարտերի ընթացքին հետևելու և կառավարելու համար գեներալ Հովսեփյանը Վլադիկարսից տեղափոխվեց մի բարձունքի վրա, որ գտնվում էր խճուղու մոտ՝ - Բեգլի-Ահմեդից 1 ½ վերստ դեպի հյուսիս – արևմուտք: Վաղ առավոտվանից աջ թևում սկսված փոխհրաձգությունը աստիճանաբար տարածվեց ամբողջ ռազմաճակատի երկայնքով: Առավոտյան ժամը 7-ից հետո 1-ին գունդը գրոհեց Սուլդաշ-կայան և հանդիպելով հակառակորդի միայն պահակազորային ուժերին, հեշտությամբ գրավեց առաջին մի քանի շարքերը: Սակայն Եղնջա և Եղնջա-կալա¹¹⁹ գյուղերում կենտրոնացած էին հակառակորդի մեծ թվաքանակով հետևակի ուժեր, որոնք շատ արագ առաջ շարժվեցին և անցնելով հոծ շարքերով հակազորի, ճնշեցին 1-ին գնդի հարձակվող ուժերը: Իսկ 4-րդ գնդի հարձակվող զորամասերը, անխնայ կրակելով և սպառելով փամփուշտների ամբողջ պաշարը, լեռան վրայից իջան Բեգլի-Ահմեդից դեպի արևմուտք մարտ վարող իրենց գնդի տարածքը:

Հետախուզում իրականացնող մեր սավառնակը (ալեքոպլանը) նկատել էր, թե ինչպես թուրքական գումակը շտապ հեռանում է Սուլդաշ-դայայից դեպի Մարիդամիշ: Նրա նետած մի քանի ռումբը հակառակորդին որևիցե վնաս չպատճառեցին: 4-րդ հետևակային գունդը և Ալեքսանդրապոլի ինքնապաշտպանական զորամասե-

¹¹⁹ Եղնջա, Եղնջա-կալա – գյուղեր ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Մեզ հասանելի այլ աղբյուրներում այս տեղանունները չեն հայտնաբերվել:

ըը առաջնագծում չհանդիպեցին լուրջ դիմադրության, առաջ շարժվեցին դեպի Նովո-Սելիմ: Մեր գրահապատը գրոհող թուրքական հեծելավաշտը ջախջախվեց և, կրելով մեծ կորուստներ, ստիպված եղավ նահանջել: 5-րդ հետևակային գունդը ընթացքից տիրացավ Տորչիի¹²⁰ շրջանում գտնվող իր նախկին դիրքերին, սակայն հետագա առաջխաղացման ընթացքում հանդիպեց Յավաղուր-չամից¹²¹ ընդառաջ շարժված հակառակորդի համառ դիմադրությանը...

Հրետանու մարտկոցում գտնվող 5-րդ գնդի հրամանատար, գնդապետ Շահբուդադյանը վիրավորվել էր որովայնի շրջանում, սակայն շարունակել էր մնալ շարքում:

Նոր եկած համալրման զինվորներն ամբողջ կազմով՝ մի մարդու նման հետ դարձան և հեռացան մարտի դաշտից: Շատերն էլ, նետելով հրացանները, համազգեստն ու հանդերձանքի այլ առարկաները, շատ արագ ետ ցատկեցին և առավոտյան ժամը 10-ի կողմերը արդեն ցրվել էին դեռ ու դեն:

Տեսնելով, որ 5-րդ գունդը մարտի է բռնվել, գեներալ Հովսեփյանը հրամայեց Նովո-Միխայլովկա ժամանած այդ գնդի գումարտակին անմիջապես շարժվել դեպի

¹²⁰ Տորչի: Այլ տեղեկություններ այս տեղանվան վերաբերյալ մեզ հասանելի աղբյուրներում չեն հայտնաբերվել:

¹²¹ Յավաղուր-չամ: Այլ տեղեկություններ այս տեղանվան վերաբերյալ մեզ հասանելի աղբյուրներում չեն հայտնաբերվել: Հավանաբար՝ Յավաղուր-չամ - գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կաղզվանի շրջանում, տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3,Երևան, 1991թ., էջ 913:

5-րդ գնդի առաջնագիծը՝ մարտի բռնված գնդին աջակցություն ցուցաբերելու համար:

Հարձակման անցնելուց հետո կայուն կապ հնարավոր եղավ պահպանել միայն 4-րդ գնդի հետ: Մյուս դեպքերում բոլոր զեկուցումներն ու կարգադրությունները իրականացվում էին հանձնակատարների միջոցով: Ձիերի անբավարար կազմի և զգալի տարածությունների պատճառով այդ հրահանգները հասցեատերերին հասցնելը խիստ դանդաղում էր:

Առավոտյան ժամը 11-ի կողմերը իր դիտակետից տեսնելով աջ թևի անհաջողությունը և չունենալով գնդապետ Մազմանյանից ոչ մի տեղեկություն, գեներալ Հովսեփյանը, այդ պահին նկատելով նաև թուրքական մեծաքանակ գնդացիներով հետապնդվող 5-րդ գնդի խուճապահար նահանջը, նետվեց դեպի Նովո-Միխայլովկա, ձգտելով կարգի բերել 5-րդ գունդը:

Միաժամանակ, տեսնելով, որ թուրքերը շրջանցում են իրականացնում Աղադավայից դեպի հարավ, նա 1-ին գնդի պահեստի 1½ վաշտը՝ երկու հրանոթներով, ուղարկեց մեր նահանջին հակազդելու, իսկ մնացած 1½ վաշտը՝ բավականին ձգվող Աղբաբա լեռան ամրացված դիրքերը գրավելու համար:

5-րդ գունդը, հրամկազմի ջանքերով, հնարավոր եղավ համեմատաբար կարգի բերել և տեղավորել Աղբաբա լեռան շրջանում գտնվող իր նախկին դիրքերում:

Սրընթաց նահանջի պատճառով մեր բոլոր վիրավոր սպաներն ու զինվորները, բացառությամբ կապիտան Սլատինսկու և պոդպորուչիկ Բեկ-Նազարյանի (Բեկ-Նա-

զարովի), թողնվել էին մարտի դաշտում: Այդ թվում նաև գումարտակի հրամանատար կապիտան [Կապեպովը- ?]:

Աջ թևի դիրքերում թողնված 1-ին գնդի 4 վաշտերը ոչ միայն որևիցե աջակցություն չցուցաբերեցին գնդապետ Մազմանյանի 1-ին գնդի խանգարված շարքերին, այլ ինքնակամ լքեցին դիրքերը և նահանջեցին (այդ վաշտերի սպաները, այդ թվում նաև 1-ին գնդին կցված շտաբ-ռոտմիստր Կալոբյանը, դաշտային դատարանի կողմից հոկտեմբերի 28-ին դատապարտվեցին մահապատժի, սակայն Կարսի անկման պատճառով դատավճիռը ի կատար չածվեց):

Հոկտեմբերի 14-ի երեկոյան պարզվեց, որ 1-ին գնդի զորամասերը հնարավոր եղավ հավաքել Հարամ-Վարդանի շրջանում: Շարժական պահեստագործը (7-րդ գունդը հրետանու հետ միասին) իր առաջ գնալու ժամանակ հանդիպել էր թուրքերի դիմադրությանը և լինելով նվազ մարտունակ, իր մարտական խնդիրը չէր կատարել և 1-ին գնդի հետ ուղևորվել էր դեպի Հարամ-Վարդան:

Գնդապետ Ղորղանյանի գրոհը նույնպես անհաջողության մատնվեց, և նրա ջոկատը վերադարձավ իր ելման դիրքերը:

Ստեղծված իրավիճակում մեծ սպառնալիք կար 4-րդ գնդի առաջ գնացած աջ թևի ուղղությամբ: Ուստիև, գեներալ Հովսեփյանը կայացրեց հետևյալ որոշումը. թողնելով ձախ թևը իր տեղում (Աղբաբա լեռը) և հանձնարարելով խճուղու պահպանությունը Ալեքսանդրապոլի պահակային գումարտակի վաշտերին (շտաբ-կապիտան Էյրանջյան), նա հրամայեց 4-րդ գնդին դիրքեր զբաղեցնել Դաշ-

կայայից¹²² մինչև Հարամ-Վարդան, գնդին միացնելով նաև գնդապետ Փերվերդյանի ջոկատի զորամասերը: Այս ամենով էլ ավարտվեց հոկտեմբերի 14-ի մարտը¹²³:

Դրանից հետո 1-ին հետևակային գունդը կարգի բերելու համար տեղավորվեց Ալեքսանդրովկա¹²⁴ գյուղում, ինչի պատճառով էլ զորակայանը նույնպես տեղափոխվեց Ալեքսանդրովկա: Ձախ թևի նկատմամբ պահպանվող սպառնալիքի պատճառով 5-րդ գնդին հրաման էր տրվել հատուկ հսկողություն սահմանել Ադբաբայից դեպի հարավ, իսկ 1-ին գնդի հերթապահ մասին հրահանգվեց պահակագոր ուղարկել Կանիքյոյի¹²⁵ ուղղությամբ՝ հսկողության տակ պահելով Ադբաբայից դեպի արևելք գտնվող տարածքը:

Նույն դատողություններից ելնելով, տարածքը վերահսկելու նպատակով, Ալեքսանդրապոլի զորախմբի պետը 8-րդ գնդի մի գումարտակ՝ 5-րդ մարտկոցի 2 հրանոթներով, ուղարկեց դեպի Կարակալա, որը Հաջի-Խալիլից 4 վերստ դեպի հյուսիս է: Միաժամանակ ան-

¹²² Դաշկայա (Թաշկայա, Դաշգայա) - Լեռ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ԱՀՀՏՏԲ, հ.2, Երևան, 1988թ., էջ 29-30; Հավելված 2:

¹²³ Հայ-թուրքական պատերազմի բախտորոշ այս օրվա մարտի մասին տե՛ս նաև Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.4, Երևան, 2016, էջ 283-286:

¹²⁴ Ալեքսանդրովկա - գյուղ և երկաթուղային կայարան ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ԱՀՀՏՏԲ, հ.1, Երևան, 1986թ., էջ 75; Հավելված 2: Այժմ՝ Յուլաջան:

¹²⁵ Կանիքյոյ (Խանիքյոյ) – գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ԱՀՀՏՏԲ, հ.2, Երևան, 1988թ., էջ 648,939; Հավելված 2: Այժմ՝ Գելիբլի:

հրաժեշտ հսկողություն էր սահմանվում Գեջադաղ¹²⁶ լեռան ուղղությամբ:

Հայտնի դարձավ, որ հոկտեմբերի 14-ի մարտում գեներալ Հովսեփյանի ջոկատի կորուստները կազմել են 150 զինվոր և 10 սպա (*որոշ աղբյուրներում՝ 200 սպանված – Վ.Հ.*):

.....

Ջոկատի ձախ թևում դիտարկում իրականացնելու համար ուղարկվեցին մի քանի հեծյալ խմբեր, սակայն դրանցից և ոչ մեկը չկատարեց իր առջև դրված խնդիրը: Այդժամ Գեներալ Հովսեփյանն ուղարկեց մեկ այլ հեծյալ խումբ (տեղեկությունը՝ Սքենդարովից): Այդ խումբը շարժվեց մինչև Գեջա-դաղ լեռան բարձունքները, այնտեղ հայտնաբերեց թուրքական հետախույզներ, որոնցից 2-ին գերի վերցրեց և բերեց հանձնեց գեներալ Հովսեփյանի շտաբ: Նրանց հարցաքննեցին առանց որևիցե կտտանքների և բռնության գործադրման, սակայն սպառնացին, որ լռելու դեպքում կնետեն կայարանում կանգնած շոգեքարշի վառվող հնոցը: Գերիների վրա դա բավականին մեծ ազդեցություն թողեց, և նրանք պատմեցին, որ Խալիլ-բեյի հրամանատարությամբ մեկ թուրքական բրիգադ արդեն դուրս է եկել և նպատակ ունի, շրջանցելով Վեզենկոյի¹²⁷ հայկական գորամասերը, հոկտեմբերի 27-ին գրավել Գեջա-դաղ լեռը:

¹²⁶ Գեջադաղ – լեռ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.1, Երևան, 1986թ., էջ 839: Հավելված 2:

¹²⁷ Վեզենկոյ (Վիզինիքոյ) – գյուղ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.4, Երևան, 1998թ., էջ 795, 805: Հավելված 2: Այժմ՝ Էոլջուլյու:

Այդ մասին զեկուցվեց զորախմբի հրամանատարին: Վերջինս, բավարար պահեստագոր չունենալու պատճառով, հրամայեց գեներալ Հովսեփյանի ձախ թևի գորաջոկատի կազմից առանձնացնել 1-ին գնդից 2 գումարտակ, 2 վաշտ՝ Ալեքսանդրապոլի պահակային 3-րդ գումարտակից, լրացնել դրանք Կարսի կայազորի մի քանի վաշտերով և գնդապետ Մազմանյանի գլխավորությամբ ու շտապ երթով Կարսով շարժվել դեպի Վեզենկոյ: Գնդապետ Մազմանյանի այդ շարասյունը, որն անվանվեց Վեզենկեյի ջոկատ, նույն օրը ուշ երեկոյան դուրս եկավ դեպի Վեզենկոյ:

Բայց հոկտեմբերի 28-ին թուրքերը գրավեցին Գեջահադ լեռը և հարձակման անցան ձախակողմյան առաջակալ զորամասի (2-րդ գնդի գումարտակը) ձախ թևի ուղղությամբ, միաժամանակ ցուցադրական տեղաշարժեր իրականացնելով Ադբաբա լեռան և 5-րդ գնդի դիրքերի դիմաց: Մշտապես տեղաշարժերի մեջ գտնվող ու թերսնվող մեր զորամասերի հոգնածության և հյուծվածության պատճառով, թուրքական հետախուզությունը Վեզենկոյի բարձունքները հասցրել էր գրավել մինչև Մազմանյանի շարասյան այդտեղ հասնելը: Մազմանյանի ջոկատի առաջնագծի գումարտակին հակառակորդը դիմավորեց կատաղի գնդացրային կրակով և հետ շարտեց: Քանի որ թուրքերը արդեն լավ ամրացել էին Վեզենկոյի բարձունքներում, իսկ անմարտունակ պահակային վաշտերի և դասալիքների առկայությունն էլ խիստ նվազեցրել էր առանց այն էլ հոգնած զորքի մարտական կորովը, մեր գրոհող զորամասերի մարտական ոգին շատ ցածր էր և իսպառ բացակայում էր հավատը

հնարավոր հաջողության նկատմամբ: Այդ ամբողջը հանգեցրեց նրան, որ գնդապետ Մազմանյանը չկարողացավ գրավել Վեզենկոյը:

Հոկտեմբերի 28-ի ամբողջ օրը չդադարեց մարտը ձախակողմյան առաջակալ գործմասի շրջանում: Գեներալ Հովսեփյանը այդ գործմասին օժանդակության ուղարկեց 1-ին գնդի 2 վաշտ՝ կապիտան Ադայանի հրամանատարությամբ: Թուրքերի հզոր հարձակողական կորովի և, միաժամանակ, մեր գործմասերի (8 վաշտերից կազմված գումարտակ) անկայունության, ինչպես նաև այդ տեղամասի հրամանատար կապիտան Գոնունու (թուրքական ծառայությունից եկած խիզախ և վճռական սպա) վիրավորվելու պատճառով, թուրքերը շահեցին դրությունն ու գրավեցին Բարձունքը՝ ստանալով շրջառող դիրք Վեզենկոյի նկատմամբ:

Քանի որ փոփոխված ռազմական իրավիճակը մեզ որևիցե օգտակար բան չէր խոստանում, հոկտեմբերի 28-ին Ալեքսանդրապոլի գորախմբում արձակվեց հրաման, որի համաձայն դաշտային զորքերը հետ էին քաշվում դեպի Կարս բերդի թները, կենտրոնական ուղղության պաշտպանությունը թողնելով ամրոցի ֆորտերին (բերդամասերին): Սեպուհի (*Արշակ Ներսիսյան*)¹²⁸ ջո-

¹²⁸ **Սեպուհ (Արշակ Ներսիսյան)** (1872թ., գ.Թումնա, Բաբերդ – 1940թ., Նյու Յորք) հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչներից, հնչակյան կուսակցության, ապա՝ ՀՀԴ անդամ, ֆիդայական կռիվների, հայկական կամավորական ջոկատի կազմում Առաջին աշխարհամարտի մասնակից: ՀՀԴ և Սո.Շահույանի փոխհամաձայնության շրջանակներում Բաքվի կոմունայի գորաջոկատում մասնակցել է նաև Բաքվի պաշտպանությանը թուրքական ներխուժումից: Ընտրվել է Հայաստանի Հան-

կատին հանձնարարվեց պաշտպանել Մերդենեկ և Արդահան տանող ճանապարհի մարտական մի հատված:

Ջորքերի դասավորությունն այդ պահին հետևյալն էր. զորակայանը գտնվում է Նովո-Վորոնցովկայում ¹²⁹, Կարսի բերդից դեպի աջ՝ Կարսաչայ¹³⁰ գետի աջ ափին՝ Ռուզսկու¹³¹ ֆորտից վերև,- դա գեներալ Հովսեփյանի հատվածն է: Հեծյալ գունդը տեղակայված է Պրոխլադնոյե¹³² գյուղում: Ամրոցից դեպի ձախ ընկած հատվածը (երկու հեծելավաշտերով ուժեղացված 5-րդ գունդն ու Վեզենկոյի ջոկատը) ենթարկվում է գեներալ Ղազարյանին (*Կազարովին*): Նշված հրամանի համաձայն, զորախմբի պետ գեներալ Փիրումյանի զորակայանը և շտաբը պետք է տեղակայված լինեին Մազրա¹³³ գյուղում: Վերախմբավորումը ավարտվել է հոկտեմբերի 29-ին: Նախարարական հանձնաժողովի հորդորով և վարչակազմի ջանքերով հոկտեմբերի 29-ին Կարսից դեպի Մազրա դուրս եկած փախստականների շարասյունը

րապետության խորհրդարանի պատգամավոր, զործուն մասնակցություն է ունեցել 1920 թ. մայիսին բոլշևիկյան հակապետական խռովության ճնշմանը: Նկարագրվող ժամանակահատվածում եղել է Կարսի ճակատում 4-րդ բրիգադի հրամանատարը:

¹²⁹ Նովո-Վորոնցովկա – գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.4, Երևան, 1998թ., էջ 14; Հավելված 2:

¹³⁰ Կարսաչայ – գետ ՀՀ Վանանդի նահանգում, Ախուրյանի աջ վտակը: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991թ., էջ 70,71; Հավելված 2:

¹³¹ Կարս ամրոցի ֆորտերից մեկը:

¹³² Պրոխլադնոյե – գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 1, Երևան, 1986թ., էջ 365; Հավելված 2: Այժմ՝ Բողազքոյ:

¹³³ Մազրա – գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991թ.,

էջ 631; Հավելված 2: Գրեթե չի անվանափոխվել: Այժմ՝ Մեզրա:

հետ վերադարձվեց Կարս: Նույն հանձնաժողովի պահանջով գեներալ Փիրումյանի զորակայանը նույնպես մնաց Կարսում: Այսպիսով, զորակայանը և համբարակային ծառայություններն ու հաստատությունները, համբարակային ամբողջ հագուստն ու հանդերձանքը գտնվում է Կարս կայարանում կանգնած վագոններում:

Քաղաքում արդեն նկատելի էին որոշ անկարգություններ: Իշխանության թուլության պատճառով, 2 օր անընդհատ՝ նախարարական հանձնաժողովի և գորախմբի աչքի առաջ թալանվում էին հացի փոերը: Այդ թալանը զրկեց պարենից մեր զորամասերը: Հատկապես տուժեց 1-ին հետևակային գունդը, որը հաճախակի տեղաշարժերի և սեփական գումակ չունենալու պատճառով չէր հասցրել որոշ պաշար կուտակել և 3 օր, փաստորեն, մնացել էր առանց պարենի:

Հոկտեմբերի 30-ի լուսաբացին նշանակված էր մեր հարձակումը Վեգենկոյի ուղղությամբ:

.....

1-ին հետևակային գունդը, սակայն, չանցավ հարձակման: Հյուժված և հոգնած զինվորները կամ ի վիճակի չեղան ելնել գրոհի, կամ էլ, պարզապես, չցանկացան տեղներից շարժվել: Գնդի հրամանատար գնդապետ Մազմանյանը, տեսնելով իր անզորությունը, իր մատուցելից արձակած երկու կրակոցով վերջ տվեց իր կյանքին: Այդ սպայի խիզախության ու վճռականության հետ մեծ հույսեր էին կապվում:

Թուրքերը, կանխելով մեր հարձակումը մեծ հարձակողական եռանդով ու պոռթկումով հետ շարտեցին Վեզենկոյի մեր զորամասերը և սկսեցին մոտենալ Կարս կայարանին: Մազրայում գտնվող 4-րդ գնդի 1 ½ գումարտակի (գեներալ Հովսեփյանի պահեստագործի) հրամանատարը, տեսնելով անկանոն նահանջող 1-ին գունդը, իր նախաձեռնությամբ մի քանի վաշտ առանձնացրեց, որպեսզի կարողանան կանգնեցնել 1-ին գնդի անկանոն այդ նահանջը և կարգի բերեն նրա շարքերը: Գործի դնելով խզակոթերը, համենայն դեպս, հաջողվեց կանգնեցնել սոված զինվորների այդ խմբի նահանջը: Այն խմբի, որն արդեն վերածվել էր բանդայի, որը թալանում էր իր ճանապարհին հանդիպող, որևիցե ուտեստով բարձած սայլերը: Այդ նույն պահին Տրոհցկոյե¹³⁴ գյուղից Մազրա ժամանեց գեներալ Հովսեփյանը և որոշեց իր ձեռքի տակ եղած պահեստագործի 1 ½ գումարտակով հարձակվել Վեզենկոյի ուղղությամբ հարձակման անցած թուրքական ջոկատի աջ թևի վրա, նպատակ ունենալով կանգնեցնել թուրքերի առաջ շարժվելը: Զորախմբի շտաբում ճիշտ կողմնորոշվելու համար Հովսեփյանը իր որոշման մասին տեղեկություն ուղարկեց Տրոհցկոյե, սակայն կապի ընդհատման և իրադրության շատ արագ փոփոխման պատճառով այդ զեկույցը տեղ չհասավ: Իսկ Հովսեփյանի նշանակած դիտորդն էլ ժամը 14-ի կողմերը հայտնեց, որ թուրքերն արդեն գրավել են Կարս կայարանը: Նույն ժամին 4-րդ գնդի գումարտակի հրամանատարից զեկուցում եկավ

¹³⁴ Տրոհցկոյե - գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՏՏԲ, հ.5, Երևան, 2001թ., էջ 131; Հավելված 2: Այժմ՝ Չամչավուշ:

Տրոհցկոյե, որ թուրքերը գրավել են Ռուզնսկի ֆորտը, որ թեև իրեն հաջողվել է որոշ չափով նեղել թուրքերին, սակայն նրանք գնալով ուժեղանում են: Նա տեղեկացնում էր նաև, որ Կարս-Պրոխլադնոյե խճուղին ամբողջապես բռնված է փախստականներով և սաստիկ գնդակոծվում ու հրետակոծվում է, որ համբարակային բեռը մնացել է վագոններում, իսկ սանիտարական գնացքը, զորախմբի հրամանատարից չստանալով դեպի Ալեքսանդրապոլ մեկնելու թույլտվություն, հայտնվել է հակառակորդի ձեռքում: Միաժամանակ մեր զրահապատը, մեծ կորուստներ պատճառելով հակառակորդի հեծելազորին, միևնույնն է, չկարողացավ գրավել նշված շարժակազմերը:

Գեներալ Փիրումյանը դեռևս չիմանալով, որ հակառակորդն արդեն գրավել է Կարս կայարանը և մյուս ուժերից կտրել է 5-րդ գունդը, հեծյալ գնդի հեծելավաշտի հրամանատար Գեորգի Վեկիյանին (Վեկիլովին) ուղարկեց գեներալ Հովսեփյանի մոտ, հրամայելով վերջինիս ակտիվ գործողություններով օժանդակել Վեզենկոյից նահանջող մեր ջոկատին: Այդ հրամանը, փաստացի, հղվել էր արդեն Կարսի ամրոցի անկումից հետո: Ինչ վերաբերում է ամրոցի հրետանուն, ապա նրա կրակոցները հոկտեմբերի 30-ին առհասարակ չլսվեցին: Հավանաբար թուրքերը իրենց հարձակումն իրականացնում էին հրետանու կրակի համար անհասանելի գոտում:

Գործող հրետանու սակավաթիվ լինելու պատճառներից էր նաև հրանոթների լքված ու թողնված լինելը, քանի որ կայազորային ֆորտերն ու Կարսի պահակային գումարտակի վաշտերը, ինչպես նաև փախստական-

ներն ու տեղի բնակիչները վաղօրոք թողել էին ֆորտերը և հեռացել: Իր դիրքերում ` Օրյոլ-օղին բլրի շրջանում, մնացել էր միայն 5-րդ հետևակային գունդը, որը շրջապատման մեջ հայտնվելուց հետո, իր հրամանատարի հետ գերի հանձնվեց թուրքերին:

Նախարարական հանձնաժողովը, որը վատ էր կողմնորոշվում ռազմական իրավիճակում, թույլ չտվեց ժամանակին կազմակերպել տեղի բնակիչների տարահանումը, ենթադրելով, թե տարահանումն արգելելով ինքը նպաստում է գորքի մարտական ոգու բարձրացմանը: Այդ պատճառով Կարսից դեպի Պրոխլադնոյե և Տրոիցկոյե տանող խճուղին այնպես խիտ էր լցված գաղթականներով, նրանց սայլերով, անասուններով և շատ թեթև զինվորական գումակներով, որ սաստիկ հրետակոծվող այդ խճուղով տեղաշարժվելը գրեթե անհնարին էր: Այդ իսկ պատճառով, իսկ մասամբ էլ նրա համար, որ կոտրված ոտքով շտաբից դուրս եկած գեներալ Փիրումյանը դանդաղում էր, Ալեքսանդրապոլի զորախմբի շտաբի մոտ հավաքված բարձրաստիճան զինվորականները, նրանց հետ էլ նաև սպաները, չցանկանալով լքել իրենց հրամանատարին, մեծամասամբ նույնպես հայտնվեցին գերության մեջ:

Այդ իրավիճակում նահանգապետ Ղորղանյանը հաջողացրեց, մի լավ ձի հեծած, դուրս պրծնել քաղաքից:

Քաղաքով դեպի խճուղի շարժվող 2-րդ մարտկոցի դասակը ընկավ թուրքական հրետանու կրակի տակ և

կորցրեց իր անձնակազմի մի մասը, այդ թվում նաև դասակի հրամանատար Բագրատունուն¹³⁵:

Քաղաքից դուրս գալ չկարողացան և գերի ընկան. 3 գեներալ (Ղազարյան, Փիրումյան, Արարատյան (*Արարատ*)¹³⁶), բանակի շտաբի պետ գնդապետ Վեկիլյանը, 6 շտաբ- սպաներ (գնդապետ Շահբուդաղյան, գնդապետ Բաբաջանով, փոխգնդապետ Տեր-Առաքելյան, փոխգնդապետ Քանանյան (*Կանանով*), փոխգնդապետ Դոնդարյան(*Դոնդարով*), փոխգնդապետ Վեկիլյան, գնդապետ Ավագյան (*Ավակով*), փոխնահանգապետ Չալխուշյանը և այլ վարչական պաշտոնյաներ), 90 սպաներ և մոտ 3000 ցածրաստիճան զինվորականություն¹³⁷:

¹³⁵ Իրականում կապիտան (գլխապետ) Բագրատունին ինքնասպան է եղել: Տե՛ս Վ. Հարությունյան, Կարսի մարզը ՀՀ կազմում, էջ 16; Դ.Պետրոսյան, Կարսի 1920 թ. ինքնասպանները, Երևան, 2019, էջ 14:

¹³⁶ **Արարատյան Քրիստափոր Կարապետի** (Արարատով Խրիստոֆոր Գերասիմովիչ) (1876թ., Թիֆլիս, - 1937թ., Երևան) – ռուսական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ-մայոր, անկուսակցական, Հայաստանի Հանրապետության երկրորդ ռազմական նախարար, բանակում զբաղեցրել է նաև այլ կարևոր բարձր պաշտոններ: 1921թ. հոկտեմբերի 30-ին Կարսում գերի է ընկել:

¹³⁷ Կարսում գերի ընկած անձանց վերաբերյալ ներկայացնում ենք 1921թ. նոյեմբերի 11-ով թվագրված հետևյալ տեղեկանքը. << ...հոկտեմբերի սկիզբներին Կարսի վրայով Ալեքսանդրապոլ վերադարձան Թուրքիայի հայ գերիներու առաջին ազատուողները, թվով 62 հոգի, բոլորն էլ զինուորներ: Այնուհետև եկավ գերիներու երկրորդ խումբը, 484 զինվոր: Վերջապես հոկտեմբերի 15-ին Ալեքսանդրապոլ եկան թուրք սպաներու ուղեկցությամբ 98 հայ սպայ և 28 զինուոր... Եկած գերիներու թուում են Հայաստանի նախկին զինուորական նախարար Զոր.Արարատեան, Կարսի նախկին հրամանատար Զոր. Փիրումեան, Զոր. Ղազարեան, գնդապետներ Շահբաթեան,

Կարս քաղաք առաջինը ներխուժեցին քուրդ հեծյալները: Նրանք իրականացրեցին զանազան բնույթի զանգվածային բռնություններ, բնակիչների գնդակահարումներ: Հավանաբար, քաղաքը հանձնված էր թալանի, քանի որ 3 օր քաղաքում լսվում էին հատ-հատ կրակոցներ, իսկ գիշերները՝ կանանց թառանչանքը: Այն խաղաղ բնակիչները, որոնք չկարողացան թաքնվել, անխտիր գնդակահարվեցին, իսկ կանանցից բռնություններից փրկվեցին միայն նրանք, ովքեր կարողացել էին պատսպարվել ամերիկյան որբատներում: Ավիացիոն ջոկատում կար թռիչքի պատրաստ մեկ սավառնակ: Նրանով էրիվան մեկնեցին ջոկատի ավիավաշտի

Դոնդարեան, Քալանթարեան, սպաներ՝ Վեփիլեան, Պետրոսեան, Սորենցի, Քանանեան, Միշա Արզումանեան, փոխգնդապետ Վահան Տեր-Առաքելեան եւ այլն... 8000 հայ գերիներից վերադարձան մօտ 700 հոգին միայն...: Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 430, ց.1, գ. 1391, թ. 2:

Գերությունից վերադարձած և, առհասարակ, Առաջին Հանրապետության սպայակազմի հետագա ճակատագիրը առանձին և չափազանց կարևոր հետազոտության նյութ է, իսկ մենք այստեղ կանգ կառնենք միայն երեք գեներալների ճակատագրին: Գեներալ **Քրիստափոր Արարատյանը** 1923 թվականից ծառայության է անցել Խորհրդային (Կարմիր) բանակում և գնդակահարվել է բոլշևիկների կողմից 1937թ.: Գեներալ **Հովհաննես Գրիգորի Ղազարյանը** գերությունից վերադառնալուց հետո բնակվել է Թիֆլիսում, ապրել նյութական և հոգևոր անտանելի պայմաններում և 1922 թ. ինքնասպանություն է գործել՝ Միխայլովսկի կամրջից իրեն նետելով Կուր գետը (տե՛ս Վ.Հարությունյան, Կարսի վերջնախաղը, Երևան, 2018, էջ 172): Գերությունից վերադառնալուց հետո գեներալ **Դանիել-բեկ Փիրումյանի** կյանքի մասին տեղեկությունները խիստ կցկտուր են և բավականին հակասական: 1922 թ. հոկտեմբերի 15-ին Երևանի սբ. Պետրոս-Պողոս եկեղեցում գրանցվել է նրա մահը (տե՛ս Վ.Հարությունյան, Կարսի վերջնախաղը, Երևան, 2018, էջ 171):

հրամանատար Ղուլյանը և դիտորդ Բաբայանը: Օղաչու Վերծփիցկին փորձեց օդ բարձրացնել նաև երկրորդ սավառնակը, սակայն անսարքության պատճառով այն գետին ընկավ և գերեվարվեց: Ամրոցի ամբողջ հրետանային սպառազինությունը իրենց պահեստներով և թեթև հրանոթների մարտկոցի 2-րդ դասակը միայն ավելի ճոխացրեցին թուրքերի ռազմավարը¹³⁸:

Կարսի անկումից հետո նկատի ունենալով ստեղծված իրավիճակը, գեներալ Հովսեփյանը Սեպուհին Մալո-Վորոնցովկայից ¹³⁹ անմիջապես կանչեց Տրոիցկոյե գյուղը և ներկայացրեց նրան ներկա դրությունը: Գեներալ Հովսեփյանը հարցում արեց, թե ինչ ակտիվ գործողություններ կարող է ձեռնարկել Սեպուհը իր ձեռքի տակ եղած զորամասերով: Մինչդեռ, նկատի ունենալով պարենի և զինամթերքի պաշարների փաստացի բացակայությունը և այն հանգամանքը, որ պահեստները գրավված էին հակառակորդի կողմից, Սեպուհը իրականում չէր կարող ծավալել որևիցե ակտիվություն: Նույնը և գեներալ Հովսեփյանը, ում անմիջական ենթակայության տակ էր գտնվում 4-րդ գունդը և մոտ 500 մարդ ունեցող նվազ մարտունակ 7-րդ գունդը: Քանի որ կապը գեներալ Փիրումյանի և գեներալ Սիլիկյանի հետ

¹³⁸ Տե՛ս նաև Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.4, Երևան, 2016, էջ 287-304; Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պեյրութ, 1968, էջ 266-282; Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 508-510:

¹³⁹ Մալո-Վորոնցովկա՝ Վորոնցովկա Փոքր - գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.4, Երևան, 1998թ., էջ 809: Հավելված 2: Այժմ՝ Ինջեաու:

բացակայում էր, գեներալ Հովսեփյանը, կոչումով ավագի իրավունքով իր վրա վերցրեց առկա զորքերի հրամանատարի պարտականությունները: Նա որոշեց հետ գնալ մինչև Ղրզըլ-Չախչախի¹⁴⁰ դիրքերը, նպատակ դնելով շփման մեջ մտնել Բաշկադիկլարում (Բաշկադիքլար, Բաշկադիքլար),¹⁴¹ գտնվող գնդապետ Ղորղանյանի հեծելագնդի հետ և որպես հենակետ թիկունքում ունենալ Ալեքսանդրապոլը, ինչի մասին էլ Բաշկադիկլար կայարանից անմիջապես զեկույց ուղարկեց գեներալ Սիլիկյանին: Հաշվի առնելով զորքի ընկճված մարտական ոգին, պարենի և զինամթերքի խիստ պակասը, տեղանքի մակերևութապատկերը և հակառակորդի հեծելագործից հետապնդվելու վտանգը, Կարսին ավելի մոտ տեղանք, որտեղ հնարավոր էր համեմատաբար անվտանգ ամրանալ դիրքերում, պարզապես չկար:

Կարսից դեպի Ղրզըլ-Չախչախի դիրքերը նահանջելիս 1-ին հետևակային գնդի կազմալուծված զորամասերը, որ գտնվում էին գեներալ Ղազարյանի ձախ մարտական տեղամասում, ցաք ու ցրիվ եղած մյուս զորամասերի մնացորդների հետ անցան դեպի Ալեքսանդրապոլ: Գեներալ Սիլիկյանի կարգադրությամբ միջոցներ ձեռնարկվեցին 1-ին գնդի վերակազմավորման համար: Վե-

¹⁴⁰ Ղրզըլ Չախչախ (Կզըլչախչախ) - գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանի Շորագյալի տեղամասում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991թ., էջ 120,559: Հավելված 2: Այժմ՝ Աքյաքա ավանի հարավային թաղամասն է:

¹⁴¹ Բաշկադիկլար (Բաշկադիքլար, Բաշկադքլար) - գյուղ և նույնանուն երկաթուղային կայարան ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանի Շորագյալի տեղամասում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.1, Երևան, 1986թ., էջ 600: Հավելված 2: Պատմական Հաչք գյուղն է: Այժմ՝ Բաշգեդիկ:

րականգնված գնդի հրամանատար կրկին նշանակվեց գնդապետ Հարությունյանը, ով այդ ժամանակ ծառայում էր Սիլիկյանի շտաբում: Ալեքսանդրապոլում թիկունքի պետ նշանակվեց Թիֆլիսից ժամանած գերերալ Արեշյանը (*Արեշեր*)¹⁴²:

Կարսից մինչև Ղրզըլ Չախչախի անցումը կատարվեց հոկտեմբերի 30-ի լույս 31-ի գիշերվա ընթացքում: Զրահագնացքը կայանվեց Կարայալ¹⁴³ կայարանում: Ջոկատը անվանեցին Ղրզըլ Չախչախի ջոկատ: Ծանոթանալով գեներալ Սիլիկյանի ուղարկված նոր տեղաբաշխմանը, Սեպուհը Սմբատի խումբը թողեց գեներալ Հովսեփյանի տրամադրության տակ, իսկ իրեն անմիջակա ենթակա զորամասերով մեկնեց Ալեքսանդրապոլ: Այստեղ նա համալրելու էր Ալեքսանդրապոլի ջոկատի պահեստագործը և տեղակայվեց ձախ թնին մոտ, որպեսզի հնարավորություն ունենա օժանդակություն ցուցաբերել գնդապետ Ղորղանյանի ձախ մարտական հատվածին:

Նոր դիրքերում գեներալ Հովսեփյանը նշանակվեց աջ մարտական հատվածի պետ: Հատվածը ներառում էր դեպի Ալեքսանդրապոլ գնացող խճուղին և երկաթգիծը:

Գեներալ Հովսեփյանը Սմբատի խմբին տրամադրեց 9-րդ մարտկոցից 2 լեռնային հրանոթ և հանձնարարեց

¹⁴² **Արեշյան Միքայել Բարսեղի** (Արեշև Միխայիլ Վասիլևիչ) (1876թ., Թիֆլիս – 1921-ից հետո) – ռուսական բանակի և հայկական բանակի գեներալ-մայոր, Հայաստանի Հանրապետության ռազմական գործիչներից, Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1921 թ. ձերբակալվել է և նրա հետագա ճակատագրի մասին տեղեկությունները բացակայում են:

¹⁴³ Կարայալ (Ղարայալ) – երկաթուղային կայարան ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991թ., էջ 16:

հսկել Մոկցյուզից¹⁴⁴ դեպի վերև՝ Մաքցյուզ-չայի¹⁴⁵ աջափնյա հատվածը: Երկաթգիծը փակող նման մարտական մի տեղամաս էլ հանձնվեց 7-րդ հետևակային գնդին: 4-րդ հետևակային գունդն էլ դրանց հետ միասին կազմեցին ճակատի ձախ մարտական հատվածը: Ղորղանյանը պահեստագործում էր թողել 4-րդ հետևակային գնդի մեկ գումարտակ և 2-րդ բրիգադի շտաբի պարետային վաշտը (Ղըզըլ Չախչախի գյուղում): Հովսեփյանի զորակայանը տեղավորվեց Կարայալ կայարանում: Մեծ ու Փոքր Ղշլի¹⁴⁶ գյուղերի նկատմամբ հսկողություն էր սահմանվել: Գնդապետ Ղորղանյանի տեղամասում գտնվող 2-րդ հետևակային գնդի գումարտակը Ղըզըլկալա¹⁴⁷ լեռան շրջանում՝ Աղամասի¹⁴⁸ մոտ ընդհարվել էր հակառակորդի հետևակի հետ և տալով զգալի կորուստներ, հետ էր մղվել:

¹⁴⁴ Մոքցյուզ (Մոկյուզ) – գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991թ., էջ 862; Հավելված 2: Այժմ՝ Ուչփնար:

¹⁴⁵ Մոքցյուզ-չայ – գետակ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում, անցնում է նույնանուն գյուղով: Տե՛ս Հավելված 2:

¹⁴⁶ Մեծ ու Փոքր Ղշլի (Կշլի, Կիշլի, Կիմլի, Կմլի) – միմյանց մոտ գտնվող գյուղեր ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում, Ղըզըլ Չախչախից հյուսիս: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991թ., էջ159; Հավելված 2: Այժմ՝ Մեծ Կմլին կոչվում է Բյույուք Դուրդուրան, իսկ Փոքր Կմլին՝ Բյույուք Դուրդուրան:

¹⁴⁷ Ղըզըլկալա (Կըզըլկալա, Կզլկալա)–լեռ Կարսի բարձրավանդակում: Այս անվանվամբ լեռ հուշագրում նկարագրվող տարածքին համապատասխան աղբյուրներում չի հայտնաբերվել:

¹⁴⁸ Աղամաս: Այլ տեղեկություններ այս տեղանվան վերաբերյալ մեզ հասանելի աղբյուրներում չեն հայտնաբերվել:

.....

Իրադրությանը ծանոթանալու համար Կարայալ կայա-
րան ժամանեց Ռազմական նախարար Տեր-Մինասյանը
գեներալ Հախվերդյանի հետ: Տեր-Մինասյանը ճառով
դիմեց Ղրզըլ-Չախչախում հավաքված պահեստագործին
և դեռևս գյուղում մնացող Սեպուհի զինվորներին: Իր
խոսքում նա մատնանշեց ստեղծված իրավիճակը, հա-
տուկ շեշտեց զորքերի անկայունությունը և նույն օրը
գիշերով մեկնեց Ալեքսանդրապոլ: Նոյեմբերի 3-ի կող-
մերը հակառակորդը հարձակման մտադրություններ
ցույց տվեց Սմբատի աջաթևյան տեղամասի ուղղությ-
յամբ: Սմբատի խումբը, ուր Միլիկյանը որպես հրա-
հանգիչ էր ուղարկել հեծելագորային գնդապետ Շիշո-
վին¹⁴⁹, բացարձակապես չցուցաբերելով որևիցե դիմադ-
րություն, սկսեց նահանջել: Թեև զինվորներին ոգևորե-
լու համար Սմբատը հասակով մեկ քայլում էր շարքերի
միջով:

7-րդ գնդին օժանդակելու համար գեներալ Հովսեփ-
յանը հրամայեց զրահապատին տեղափոխվել գնդից ա-
վելի առաջ, իսկ ինքը իր շտաբով շտապեց դեպի Սմբա-
տի նահանջող խումբը, մտադրված լինելով կարգի բերել
այն: Սակայն խմբի բացարձակ անմարտունակության,
կամ էլ կռվելու ցանկության բացակայության պատճա-
ռով, խմբի զինվորները անընդհատ ձգտում էին տեղա-
փոքվել կամ 12-րդ մարտկոցի հրետանու դասակի, կամ
էլ գեներալ Հովսեփյանի շտաբի ետնամասերում:

¹⁴⁹ **Շիշով Նիկոլայ Ալեքսեյի** – հայկական բանակի գնդապետ, հան-
դիպում ենք հայկական բանակի հետմահու արդարացված սպա-
ների ցուցակում, տե՛ս Список лиц, ...:

Մոտ եկավ գնդապետ Շիշովը և գեկուցեց, որ չկա ոչ մի հնրավորություն խմբի զինվորներին հետ պահել նահանջից, որ գումակի զինվորները թողել են մի քանի քարշակ և հեռացել, մինչդեռ հակառակորդը դեռևս հեռու է և դրանք հնարավոր էր պահպանել և տեղափոխել: Խմբի զգալի մի մաս դեպի Ալեքսանդրապոլ էր թափանցում հյուսիսային կողմից:

Նույն օրը, հանգիստ թողնելով 4-րդ գնդի դիրքերը, թուրքերը, բացի աջ թևի ուղղությամբ հարձակվելուց, հարձակում սկսեցին նաև երկաթգծի ուղղությամբ՝ դեպի 7-րդ գնդի զբաղեցրած դիրքերը: Ջրահապատը դիմավորեց հարձակվող հակառակորդին, սակայն, քանի որ տեղանքը զգալիորեն բարձր էր երկաթուղու գծերից, գնացքից բավականին դժվար էր հակառակորդի վրա նշանառու կրակ վարելը: Չնայած զրահապատի խիզախ գործողություններին, մեր շարքերը սկսեցին նահանջել: Պահեստագորն օգտագործվեց աջ թևում հակառակորդի հնարավոր շրջանցումը կանխելու համար: Սեպուհը հրաման ստացավ առաջ գնալ դեպի Թիքնիս¹⁵⁰ գյուղը:

¹⁵⁰ Թիքնիս (Թիգնիս, Տիգնիս, Տիխնիս, Թիդնիս) – գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում, Շորագյալի տեղամասում, Արփաչայի (Ախուրյանի) աջ ափին: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.2, Երևան, 1988թ., էջ 452; հ.5, Երևան, 2001թ., էջ 91; Հավելված 2: Այժմ՝ Կալկանկալե:

Ալեքսանդրապոլի պայմանագրով Տիխնիս (Տիգնիս), Մեծ Ղվու (պայմանագրում՝ Մեծ Կեմո) և Ղըզըլ-դաշ գյուղերը՝ իրենց շրջակա տարածքներով, որոնց ընդհանուր չափը կազմում է շուրջ 140–142քառ. կմ, անցնում էին Հայաստանի Հանրապետությանը: Սակայն Մոսկվայի, իսկ հետագայում էլ՝ Կարսի պայմանագրով, Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային զիջեց այդ երեք գյուղերը: Տե՛ս Բ.Հարությունյան, Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանա-

Սակայն ջոկատի դանդաղ շարժվելու և ռազմա-դաշտային կանոնակարգը չպահպանելու պատճառով (դեպի հրամանատարը շարժվելու դեպքում այդ մասին նրան տեղեկացնելու անհրաժեշտությունը) գեներալ Հովսեփյանը տեղեկացված չէր այդ խմբի շարժման ուղղության և կարգի մասին: Այդ պահին զեկուցում ստացվեց 4-րդ գնդից, որ այն նույնպես սկսում է նահանջել, քանի որ բացակայում է ապահովությունը աջ թևի հատվածում: Ստեղծված իրավիճակում գեներալ Հովսեփյանը ստիպված էր նախանշել նոր դիրքեր, ուր հնարավոր կլինեին կանգնեցնել ու դիրքավորել նահանջող զորքը:

Այդ նպատակով նա հրամայեց դիրքեր գրավել Արփաչայի (Ախուրյանի) ձախ(արևելյան) ափին: Գնդապետ Ղորղանյանի ջոկատը, որն իր սակավաթվության և ճակատային գծի ձգվածության պատճառով ավելի շատ ուներ դիտողական նշանակություն, նույնպես հետքաշվեց դեպի գեներալ Հովսեփյանի տեղամասը: Ուզուն Քիլիսա¹⁵¹ - Վարդանլու¹⁵² գյուղերի շրջանում Սեպուհի պահեստագործը հանդիպել էր թուրքերի հարձակվող զորքի առաջապահ մասերին և վերջիններիս փոքրաթիվ

գրերի համադրման քննության շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, 2011, թ.3, էջ 51-61:

¹⁵¹ Ուզուն Քիլիսա (Ուզունքիս) - գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում, Շորագյալի տեղամասում, Ալեքսանդրապոլից 15 կմ հարավ-արևմուտք: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.5, Երևան, 2001թ., էջ 174; Հավելված 2: Այժմ՝ Էսենյայլա:

¹⁵² Վարդանլի - գյուղ ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում, Շորագյալի տեղամասում, Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.4, Երևան, 1998թ., էջ 779; Հավելված 2:

լինելու շնորհիվ ստիպել էր նահանջել: Այդ մասին գեկուցվեց գեներալ Միլիկյանին:

Այդ օրերին Ալեքսանդրապոլում սկսվեցին տեղի բոլշևիկների կողմից հրահրած խմորումները, ինչին միացան տարբեր գնդերի դասալիք և փախուստի դիմած զինվորները¹⁵³: Ոչ մի պահպանող վաշտ չունենալու պատճառով գեներալ Միլիկյանի շտաբը նոյեմբերի 4-ին դուրս եկավ Ալեքսանդրապոլից: Քաղաքում սկսվեց համբարակային պահեստների թալանը: Ռազմաճակատի առանց այդ էլ ընկճված ու ճնշված զինվորներին խիստ զայրացրեց այդ ամենը: Պարենի մատակարարումը դեպի ճակատային գիծ դադարեցվեց, իրավիճակը դառնում էր կրիտիկական: Սակայն Մեպուհի պահեստագորն ու քաղաքային իշխանությունները կարողացան քաղաքում վերականգնել կարգ ու կանոնը: Միլիկյանի

¹⁵³ Այդ օրերին բանտարկությունից ազատ արձակվեցին Մայիսյան խռովության մասնակից հայ բոլշևիկները: Նրանք անմիջապես քաղաքում թռուցիկներ տարածեցին, որոնցում կոչ էին անում չդիմադրել ազատարար առաքելությանը քաղաքին մոտեցող թուրքերին: Մի քանի բոլշևիկ նույնիսկ փորձեցին Ալեքսանդրապոլում Խորհրդային կարգեր հռչակել, Բայց Մեպուհի և քաղաքի պարետ Շահմազյանի խիստ նախազգուշացումից հետո հանդարտվեցին: Սակայն, ինչպես հեռագրել է այդ օրերին Ստալինին Օրջոնիկիձեն, հայ բոլշևիկները կարմիր դրոշներով ընդառաջ են վագել Կարաբեքիրի գործին: *St u Большевицское руководство. Переписка. 1912-1927гг., Москва, 1996, Раздел I, 1912-1921гг., 1920 г., документ No 107: Ալեքսանդրապոլում հայ բոլշևիկների և Կարաբեքիրի ջերմ համագործակցության վերաբերյալ նյութերը տե՛ս Վ. Հարությունյան, Հայ բոլշևիկների հակապետական գործունեությունը 1919-1920թթ. Նյութեր և փաստաթղթեր, Երևան, 2014, էջ 380-383, 387-390, 396-398, 404-412:*

շտաբը վերադարձավ քաղաք¹⁵⁴, իսկ հացի փոխարեն ճակատի զինվորներին ուղարկվեցին գալետներ և խտացրած կաթ:

Այդ օրերին թե՛ Ալեքսանդրապոլում և թե՛ Էրիվանում արդեն գիտակցում էին, որ հետագա պատերազմը թուրքերի դեմ այլևս հնարավոր չէ: Այդ իսկ պատճառով, ինչպես նաև Ալեքսանդրապոլը Կարսի ճակատագրից զերծ պահելու համար, որոշվեց բանակցություններ սկսել թուրքերի հետ¹⁵⁵: Այդ նպատակով շոգեքարշով որպես բանագնաց թուրքերի մոտ ուղարկվեց հետախուզության պետ Կոտուրսկին¹⁵⁶՝ երկրի խորհրդարանի անդամներից մեկի հետ:

¹⁵⁴ Միլիկյանն իր շտաբով նոյեմբերի 5-ին տեղափոխվեց Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսա ճանապարհին գտնվող Ջաջուռ գյուղը: Այդ նույն ժամանակահատվածում Սեպուհի զորքերը կարողացան նախ կանգնեցնել և հետո հետ մղել հյուսիսից Ալեքսանդրապոլ մտնելու ձգտող թուրքական զորքին, հնարավորություն տալով, որպեսզի զինվորական հրամանատարությունն ու քաղաքային իշխանության որոշ ներկայացուցիչներ կարողանան վերադառնալ քաղաք: Տե՛ս Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.4, Երևան, 2016, էջ 309:

¹⁵⁵ ՀՀ կառավարությունը խաղաղության խնդրանքով Անկարայի իշխանություններին դիմեց նոյեմբերի 3-ին, իսկ նոյեմբերի 5-ին Քյազիմ Կարաբեքիրի մոտ բանագնաց ուղարկեց արդեն հայկական զինվորական հրամանատարությունը: Տե՛ս Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.4, Երևան, 2016, էջ 312-314; Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պեյրուք, 1968, էջ 282-283:

¹⁵⁶ Կոտուրսկի, Խան-Կոտուրսկի, Հովհան Խան – Կոտուրսկի, նույն ինքը՝ Արտեմ Նիկոլայի Հովհաննիսյան (Օվանեսով), ցարական նավատորմում ծովակալության սպա (поручик Адмиралтейства), դեկավարում էր Սևծովյան նավատորմի հետախուզության և հա-

Թուրքերի կողմից ծրարն ընդունեց մի սպա: Պատասխանը ստացվեց նույն օրվա գիշերը: Թուրքերը համաձայնվում էին զինադադար կնքելուն միայն այն դեպքում, եթե մեր զորքերը մինչև հաջորդ օրվա ցերեկվա ժամը մեկը հետ գնան Ալեքսանդրապոլից 15 վերստ հեռավորության վրա: Ընդ որում, թուրքերը պետք է զբաղեցնեին միայն ամրոցը և կայարանը, իսկ բուն քաղաքում թուրքական զորք չէր տեղակայվելու¹⁵⁷:

կահետախուզության բաժինը, ՀՀ –ում ղեկավարում էր բանակի հետախուզական ծառայությունը: Տե՛ս Վ.Վիրաբյան, Հայաստանի Առաջին Հանրապետության անվտանգության համակարգը և հետախուզական ծառայության կազմակերպումը (1918-1920 թթ.), Բանբեր Երևանի Համալսարանի, հասարակական գիտություններ, 2005, հ. 1 (115), էջ 184-185:

¹⁵⁷ Այդ ամենով հանդերձ, ՀՀ կառավարությունը ցուցաբերեց անհրաժեշտ զգուշավորություն և մի շարք պաշտոնյաների, որոնց համար քաղաքում թուրքերի հայտնվելը բացահայտ սպառնալիք էր, թույլ տվեց մինչև թուրքական բանակի մուտքը հեռանալ Ալեքսանդրապոլից: Տե՛ս Ռ.Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.4, Երևան, 2016, էջ 306:

Միաժամանակ, ՀՀ կառավարությունը կարգադրեց (7 նոյեմբերի, 1920թ.) ձերբակալել և դատի ենթարկել Ալեքսանդրապոլի քաղաքազուլիս Պ.Լևոնյանին, վարչության անդամ Ա.Սարգսյանին և նույն վարչության վերահսկիչ Ա.Ալշուջյանին: Նրանց մեղադրում էին Ալեքսանդրապոլը թուրքերին հանձնելուց առաջ իրենց պաշտոնները լքելու և քաղաքից հեռանալու համար: Երևանի Արտակարգ Դատարանը իր 1920 թ. նոյամբերի 20-21-ի նիստերում լսել է այդ գործը, որպես վկաներ հարցաքննել է պառլամենտի նախագահ Հ.Քաջազունուն, նախարարներ Գ.Ղազարյանին, Արշ. Ջամալյանին, պառլամենտի անդամներ Լ. Շանթին, Յ. Տեր-Հակոբյանին, գեներալ Միլիկյանին և այլոց, ու նոյեմբերի 21-ի նիստում բոլոր մեղադրյալներին անպարտ է ճանաչել: Տե՛ս <<Յառաջ>>, թիվ 245, 9 նոյեմբերի, 1920 թ., <<Յառաջ>>, թիվ 257, 23 նոյեմբերի, 1920 թ.:

Ի կատարումն զինադադարի պայմանների, գեներալ Միլիկյանը նույն օրը հեռախոսով և ծրարով հրաման ուղարկեց հայկական զորախմբի տեղակայման վերաբերյալ:

.....
Չնայած գործող զինադադարին, նոյեմբերի 11-ին թե 12-ին թուրքերն աննշան ուժերով վերսկսեցին հարձակումը ռազմաճակատի Հոռոմ¹⁵⁸- Քաֆթառլի¹⁵⁹ հաստվածում: Այստեղ պահակային ծառայություն իրականացնող 1-ին գունդը, հակառակորդին որոշ դիմադրություն ցույց տալուց հետո, նահանջեց դեպի Արթիկ: Ընդ որում, գնդի 1-ին գումարտակը կորցրել էր կապն իր գնդի հետ և նահանջել էր դեպի Բաշ –Ապարանի խճուղի:

Հաջորդ օրը թուրքերը հարձակման անցան գնդապետ Ղորղանյանի տեղամասի ուղղությամբ և բավականին նեղեցին նրա զորամասերը: Գեներալ Հովսեփյանի հրամանով Սմբատը իր խմբի ձիավորներով հարվածեց հարձակվողների աջ թևին և, դիմավորելով հակառակորդի հեծյալներին, հետ մղեց նրանց դեպի Աղին ¹⁶⁰ կայարան: Սակայն հակառակորդի հետապնդումը թերի

¹⁵⁸ Հոռոմ – գյուղ ՀՀ Շիրակի նահանգում: Այժմ՝ նույնանուն գյուղը ՀՀ Շիրակի մարզի Արթիկի տարածաշրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991թ., էջ 437:

¹⁵⁹ Քաֆթառլի – գյուղ ՀՀ Շիրակի նահանգում: Այժմ՝ ՀՀ Շիրակի մարզի Փանիկ գյուղը: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.5, Երևան, 2001թ., էջ 336; Ծթգ.23:

¹⁶⁰ Աղին – գյուղ և նույնանուն երկաթուղային կայարան ՀՀ Շիրակի նահանգում: Այժմ՝ նույնանուն գյուղ և երկաթուղային կայարան ՀՀ Շիրակի մարզի Անիի տարածաշրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.1, Երևան, 1986թ., էջ 177:

ընթացավ. Սմբատը մնաց Տաշ Կալայում¹⁶¹ (տեղեկությունը Սքենդարովից), այստեղ հանդիպեց հակառակորդի հետևակին, որը կազմալուծեց Սմբատի շարքերը, իսկ հեծյալ թուրքերն էլ սկսեցին հետապնդել նահանջողներին: Սմբատը, տեսնելով իր խմբի նահանջող հեծյալներին, դուրս եկավ Տաշ Կալայից և, իր զինվորներին ոգևորելու համար ձեռնամարտի բռնվեց հակառակորդի հետ: Հակառակորդի առաջխաղացումը կասեցվեց, սակայն Սմբատը գլխից վիրավորվել էր և ձիուց ընկնելիս ստացել էր ուժեղ կոնտուզիա: Բայցևայնպես, հակառակորդը կարողացավ բավականին ուժեղ հեծյալ ջոկատով գրավել Մոլլա-Գյոկչա ¹⁶² գյուղից արևմուտք գտնվող կարևոր բարձունքը, որտեղ տեղակայված էր 4-րդ գնդի 1 ½ գումարտակ պահեստագործ: 4-րդ գունդը՝ 7-րդ մարտկոցի աջակցությամբ հակազրոհ ձեռնարկեց, սակայն մեր հրանոթների արկերն սպառվելուց հետո, հակառակորդը մեծ կորուստներով հետ մղեց մեր զորամասերը: Գունդը սկսեց նահանջել և գեներալ Հովսեփյանը հրամայեց նահանջել մինչև Թալին: Զորաջոկատի՝ Թալին հասնելուց հետո հաստատվեց չեզոք գոտին:

Սարդարապատից ժամանած համալրման աջակցությամբ գնդապետ Ղորղանյանի ձախ թնի մարտական տեղամասում նույն պես հնարավոր եղավ կայունացնել դրությունը: Ելնելով առաջադրված խնդրից, գեներալ

¹⁶¹ Տաշ Կալա – գյուղ ՀՀ Շիրակի նահանգում: Այժմ՝ ՀՀ Շիրակի մարզի Անիի տարածաշրջանի Քարաբերդ գյուղը:

¹⁶² Մոլլա Գյոկչա – գյուղ ՀՀ Շիրակի նահանգում: Այժմ՝ քաղաք ՀՀ Շիրակի մարզի Անիի տարածաշրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991թ., էջ 854:

Հովսեփյանը հրամայեց իր շտաբի պետին իրականացնել Ղրմրզլու¹⁶³- Թալին տեղանքի շրջադիտում, սակայն դրանից հետո հրաման ստացվեց, որպեսզի աջ և ձախ մարտական հատվածները շարժվեն չեզոք գոտուց էլ հետ՝ Արաքս կայարան¹⁶⁴-Թալիշ¹⁶⁵ գծի վրա: Իսկ գեներալ Հովսեփյանի և գնդապետ Միրիմանյանի միջև ծագած անախորժությունների պատճառով երկուսին էլ հրամայված էր ներկայանալ Էջմիածնում տեղակայված Ալազյազի ջոկատի հրամանատար Դրոյի զորակայան:

Զորամասերի նոր տեղաբաշխումը հետևյալն էր. բրիգադի շտաբը տեղավորվում էր Վաղարշապատում, 1-ին հետևակային գունդը շարժվելու էր Վաղարշապատ քաղաք, որտեղ և լուծարվելու էր, թեթև հրանոթների 2-րդ մատկոցը՝ նույնպես դեպի Վաղարշապատ, 4-րդ հետևակային գունդը գնդապետ Նեստերովսկու հրամանատարությամբ, կանգ էր առնում Թալիշում՝ աջ թևում կապ հաստատելով Ստեփանյանի Ապարանի ջոկատի հետ (նոր ձևավորվող 5-րդ գունդ), իսկ ձախ թևով՝ գնդապետ Ղորղանյանի տեղամասի հետ (Ղարաքիլիսայի¹⁶⁶ ջոկատ): Այդ երկու տեղամասերն ընդգրկվեցին Դրոյի Ալազյազի ջոկատի կազմում:

¹⁶³ Ղրմրզլու – գյուղ ՀՀ Արարատյան նահանգում: Այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Կարմրաշեն գյուղը: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991թ., էջ 580:

¹⁶⁴ Արաքս – երկաթուղային կայարան ՀՀ Արարատյան նահանգում: Այժմ՝ նույնանուն կայարան և ավան ՀՀ Արմավիրի մարզում:

¹⁶⁵ Թալիշ – գյուղ ՀՀ Արարատյան նահանգում: Այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզի Արուճ գյուղը: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.1, Երևան, 1986թ., էջ 508:

¹⁶⁶ Խոսքը այժմյան ՀՀ Լոռու մարզկենտրոն Վանաձորի մասին է:

Էջմիածին կայարանում Դրոյի գորակայանում ընթացած պարզաբանումների ժամանակ գեներալ Հովսեփյանը չցանկացավ տալ որևիցե բացատրություն և կտրականապես մերժեց իրեն ներկայացված մեղադրանքները, թե ինքը ընդգծված բացասական միտումով է տրամադրված 4-րդ գնդի և նրա հրամանատար գնդապետ Միրիմանյանի նկատմամբ¹⁶⁷: Չնայած դրան, նա հեռացվեց բրիգադի հրամանատարի պաշտոնից¹⁶⁸, իսկ գնդա-

¹⁶⁷ Գեներալ **Հարություն Հովսեփյանի** և գնդապետ **Ալեքսանդր Միրիմանյանի** միջև գոյություն ունեցող այդ հակասություններն ակնթարթորեն վերացան Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ պահից: Բոլշևիկների համար նրանք այն բացառիկ մի քանի վստահելիներից էին, որոնց շրջանցեց բոլշևիկյան մամլիչը: Կայծակնային արագությամբ նրանք երկուսն էլ հայտնվեցին բոլշևիկյան հայկական Կարմիր բանակում, բոլշևիկյան գործի գլուխ անցած արշավեցին Թիֆլիս, մասնակցեցին Վրաստանի բռնի խորհրդայնացմանը, ինչից հետո բոլշևիկյան իշխանությունները նրանց ուղղորդեցին դեպի Երևան՝ ճնշելու հակաբոլշևիկյան ապստամբությունը: 1921 թ. ապրիլի առաջին օրերին Հովսեփյանն ու Միրիմանյանը իրենց կարմիր զորքով Երևանը <<ազատագրեցին խռովարարներից>>՝ իրենց երեկվա ծառայակիցներից, ինչի համար պարզևատրվեցին բոլշևիկյան Ռուսաստանի շքանշաններով: Շքանշանները Երևանում նրանց էր հանձնում մի վրացի բոլշևիկ: Հովսեփյանը մահացել է 1921 թ. հուլիսին՝ Լոռվա զինկոմի պաշտոնում, Ա.Միրիմանյանի մասին հայտնի է, որ ծառայել է Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակում: Այլ մանրամասներ նրա վերաբերյալ բացակայում են: Տե՛ս Վ.Հարությունյան, Կարսի վերջնախաղը, 2018, էջ 174:

¹⁶⁸ Այլ հեղինակներ այդքան էլ խաղաղ ու անմալ չեն ներկայացնում գեներալ Հովսեփյանի այդ պաշտոնանկությունը: Օրինակ՝ դեպքերից նույնպես քաջատեղյակ Կարո Սասունին գրում է հետևյալը. <<...Զինադադարեն յետո, Չոր Յովսեփեանը վերջապես իր պաշտոնեն հրաժարեցուած էր եւ կանչված Երևան՝ դատվելու: Տե՛ս Կ.Սասունի, Հայ-թրքական պատերազմը, (1920թ.), Պեյրութ, 1969, էջ

պետ Միրիմանյանը կրկին ստանձնեց 4-րդ հետևակա-
յին գնդի հրամանատարի պաշտոնը:

Պատերազմի ծագման պատճառները

Անգլիացիների պահանջով և պնդմամբ 1919 թ. թուրքերը մեզ զիջեցին Կարսի մարզի մեծ մասը: Նրանք տրամադրված չէին դրսևորել հարաբերություններում թշնամանքի հասնող ակտիվություն¹⁶⁹, սակայն քրդական շրջաններում թողեցին որոշ քանակի զինապաշար և հրահանգիչներ (չաուշներ): Այդ միջոցով թուրքական կողմը հասավ նրան, որ Հայաստանի կազմում հայտնված այդ տարածքների մահմեդական բնակչությունն իր հույսերը կապում էր Թուրքիայից սպասվելիք օգնության հետ և մշտապես ձգտում էր այդ տարածքներում թուրքական իշխանության հաստատմանը:

172: Կասկածից վեր է, որ դատից նա փրկվել է Հայաստանում բոլշևիկյան իշխանության հաստատման շնորհիվ, որի բարեհոգությամբ էլ միանգամից հրամանատարական պաշտոն է ստացել բոլշևիկյան Կարմիր բանակում:

¹⁶⁹ Թուրքական կողմը քաջ գիտակցելով, որ ամուր և կայուն հայկական պետության գոյությունը ոչնչով չի կարող նպաստել պատերազմում պարտված Թուրքիայի վերականգմանը, այլ հակառակը, երբևիցե չի հաշտվել հայկական պետության տարածքային ընդլայնման հետ և պայքարել է այդ պետության դեմ բոլոր հնարավոր միջոցներով: Այդպես է եղել և Կարսի մարզը ՀՀ-ին միացնելու պարագայում: Տե՛ս Ռ.Գ.Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.1, էջ 217-248:

Թուրքական հրահանգիչների գործունեությունը առավել ցայտուն դրսևորվեց Քարակուրտի, Շորագյալի¹⁷⁰, Օլթիի, Զանգիբասարի և Նախիջևանի շրջաններում:

Մեզ չենթարկվող քրդերին և թաթարներին հպատակեցնելուն ուղղված մեր մարտական գործողությունները առաջ բերեցին թուրքական Արևելյան ռազմաճակատի հրամանատար Կարաբեքիրի բողոքը: Կարաբեքիրն իր բողոքը հղեց Հայաստանի գորքերի հրամանատար Նազարբեկյանին, որտեղ մատնանշում էր մահմեդական բնակչության նկատմամբ կիրառվող բռնություններն ու ավերածությունները: Այդ բողոքում Կարաբեքիրը շեշտում էր, որ այդ ամենը շարժում է քրդերի և թաթարների հավատակից թուրքերի գայրույթը և պահանջում էր դադարեցնել բռնությունները մահմեդականների նկատմամբ, վերականգնել նրանց ավերված ունեցվածքը (2 տեղեկանք խորհրդարանից):

Մեր կողմից այդ բողոքի պատասխանը կազմեց Արտաքին գործերի նախարարությունը: Պատասխան նամակում մերժվում էին բերված մեղադրանքները և նշվում էր Հայաստանի ներքին գործերին թուրքերի միջամտելու անընդունելիության մասին: Այն փաստը, որ պատասխանը ստորագրված էր նախարարության քարտուղարի կողմից, Կարաբեքիրին թվացել էր խիստ վիրավորական: Այդ մասին նա արտահայտվել էր Ալեք-

¹⁷⁰ Շորագյալ (Շուրագել, Շորեգել) – տեղամաս ՀՀ Վանանդի նահանգի Կարսի շրջանում: Կենտրոնը՝ նույնանուն գյուղը: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.4, Երևան, 1998թ., էջ 150; Հավելված 2: Պատմական Շիրակական մայրաքաղաքն է, որի տեղում ներկայումս մի աննշան գյուղակ է՝ Չեթինդուրակ անվամբ:

սանդրապոլի պայմանագիրը կնքելիս Խատիսյանի գլխավորած մեր պատվիրակության հետ զրույցի ժամանակ:

Մեր գործողություններում և այդ պատասխանի բովանդակության մեջ Կարաբեքիրը տեսնում էր ուղղակի սպառնալիք սահմանամերձ մահմեդական շրջանների համար¹⁷¹: Այդ պատճառով էլ, բացի դիվիզիայի տաղանդավոր հրամանատար Խալիդ-բեյի գլխավորությամբ քրդական շրջանների ռազմականացումը, Կարաբեքիրը, հավանաբար, որոշեց նաև ուժեղացնել իրենց սահմանապահ դիվիզիան (տեղեկանքը՝ Սքենդարովից):

Մայիսյան բոլշևիկյան հուզումները Կարաբեքիրին ցուցադրեցին նաև մեր ներքին թուլությունը, երկրի ներսում քաղաքական կուսակցությունների միջև պայքարի առկայությունը, միասնության բացակայությունը ¹⁷² : Դեպքերի նման դասավորության պարագայում հասունանում էր արդեն քաղաքական բնույթի հարց:

¹⁷¹ Մանրամասները տե՛ս Ռ.Գ.Հովհաննիսյան, Հայաստանի հանրապետություն, հ.3, էջ 355-396:

¹⁷² Հայ բոլշևիկների գործունեության լուսաբանումն ու քննարկումը միանգամայն այլ՝ չափազանց ծավալուն թեմա է, որն, անշուշտ դուրս է տվյալ աշխատության շրջանակներից: Իսկ այստեղ նշենք միայն, որ Առաջին Հանրապետության օրոք հայ բոլշևիկների քայլերն ու գործունեությունը ոչ մի առնչություն չունեն քաղաքական պայքար ասածի հետ: Դա ընդգծված, խիստ հակապետական գործունեություն էր, այն էլ՝ տվյալ պետության հանդեպ բացահայտ թշնամական դրսևորում ունեցող և նրան ոչնչացնելու քաղաքական նպատակ հետապնդող երկու օտար ուժերի ներգրավմամբ ու նրանց աջակցությամբ: Տե՛ս Վ.Հարությունյան, Կարսի մարզը ՀՀ կազմում, էջ 126-127, 146-148:

Անգլիացիների կողմից հաստատված մեր պետական սահմանը արևմուտքում [...] - ց գալիս էր Արդահան և այնտեղից՝ Արդահան – Մերդենեկ խճուղու արևմտյան կողմով հասնում մինչև Կարաուրգան-Կարակուրտ: Նման իրավիճակում թուրքերը համարում էին, որ Օլթիի շրջանը թողնված է իրենց տիրապետության տակ:

Հաշվի առնելով նավթի հետ կապված դժվարությունները, մեր կառավարությունը որոշեց գրավել Օլթիի շրջանի Փենյակ գյուղի մոտակայքում գտնվող ածխահանքերը: Կառավարությունում պատրաստված էր մի ծավալուն զեկույց այդ հանքերի հարստության վիճակի և նրանց որակի վերաբերյալ: Այդ զեկույցի կրկնօրինակը ուղարկվեց Կարս, որպեսզի տեղի քաղաքացիական և զինվորական իշխանությունները նույնպես ծանոթանան դրա հետ: Այն փաստը, որ այդ ածխահանքերը կապված չէին մեր կենտրոնների հետ ոչ միայն երկաթգծով, այլև խճուղիներով, որ տարածքը գտնվում էր հնարավոր ռազմական գործողությունների շրջանում, մեր կառավարությանն ասես, չէր մտահոգում: Կառավարությունը, կարծես, բացարձակապես հաշվի չէր առնում Թուրքիայի գործոնը:

Հայաստանի կառավարությունը, ի դեմս Ռուբեն Տեր-Մինասյանի, ճնշում էր գործադրում Կարսի զինվորական հրամանատարության նկատմամբ, նպատակ ունենալով այդ ածխահանքերը գրավել կազմակերպված հարձակողական գործողության միջոցով: Հանրապետության գործերի հրամանատար զեներալ Նազարբեկ-

յանը և ռազմական նախարարի օգնական¹⁷³ գեներալ Հախվերդյանը դեմ էին այդ ռազմական գործողության ծավալմանը, քանզի համարում էին, որ մեր բանակն այնքան ուժեղ չէ, որ կարողանա Թուրքիայի հետ բաց ճակատային պայքարում գրավել և իր ձեռքում պահել Օլթիի շրջանը:

Կարսի զինվորական հրամանատարությունը՝ ի դեմս գեներալներ Փիրումյանի և Հովսեփյանի, հակված էին սկսել այդ ռազմական օպերացիան: Գեներալ Փիրումյանը հույսեր էր կապում Ալեքսանդրապոլում ձևավորվող հեծյալ բրիգադի ու Ալեքսանդրապոլի պահակային գումարտակի հետ և այդ հիմնավորմամբ էլ ռազմական մինիստր Ռուբեն Տեր-Մինասյանի հետ ուղիղ կապով այդ գործողության մասին խոսելիս նրան տվեց դրական պատասխան: Իսկ գեներալ Հովսեփյանը, տալով իր համաձայնությունը, հիմնվում էր հետևյալ հանգամանքների վրա. ըստ գործակալական հետախուզական ճշգրիտ տվյալների, հակառակորդն Օլթիի շրջանում ուներ տարածքային սկզբունքով կազմավորված և թուրքական սպաներով ու հրահանգիչներով ղեկավարվող մեծ կազմի երկու գումարտակ՝ Նարիմանի և Տարթումի գումարտակները: Գումարտակներին հատկացված էին նաև լեռնային հրետանու մեկ դասակ, Մաքսիմ և Կոլտ տեսակի գնդացիներ և Օլթիից Մերդենեկ գնացող խճուղու երկայնքով ոչ կանոնավոր կապը: Կարսի հայկական զորաջոկատի դիմաց կանգնած թուրքական կանոնավոր զորամասը ներկայացված էր փոքրաթիվ

¹⁷³ Այն ժամանակվա տերմինաբանությամբ դա նշանակում էր նախարարի տեղակալ:

կազմ ունեցող, ռազմական դրությանը չհամապատասխանող մասնակի համալրված մեկ դիվիզիայով (12-րդ դիվիզիա): Մեկ այլ՝ 11-րդ թուրքական դիվիզիան, հաշվի առնելով Սուրմալուի շրջանում մեր զորամասերի առկայությունը, նախատեսված էր, հավանաբար, հենց Սուրմալուի ուղղության համար: Սակայն այդ զորամիավորումը միշտ էլ կարող էր տեղափոխվել դեպի հյուսիս՝ դեպի Օլթիի շրջան: Թուրքական Արևելյան ճակատի պահեստագործ գտնվում էր Էրզրում-Էրզինջան (Երզնկա) շրջանում: Իսկ թե՛ այդ պահեստագործը, թե՛ 12-րդ դիվիզիան համալրելու և դեպի ռազմաճակատ տեղափոխելու համար կպահանջվեր զգալի ժամանակամիջոց:

Այսպիսով, իր տրամադրության տակ ունենալով 1-ին հետևակային գնդի 2 լավ պատրաստված գումարտակ, 4-րդ հետևակային գնդի 6 վաշտ, 5-րդ հետևակային գնդի մեկ գումարտակ, 1 ½ հրետանային մարտկոց, Փիլոսի պարտիզանական հարյուրյակը և Մուրադխանի ձևավորվող հարյուրյակը, ընդհանուրը՝ 4 ½ գումարտակ, - 1300 զինվորով և 6 հրանոթով, գեներալ Հովսեփյանը մտադրված էր շատ հեշտ ջարդել հակառակորդի Օլթիի զորախումբը: Նկատի ունենալով Կարսի զինվորական հրամանատարության նման դիրքորոշումը, Ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը, հակառակ նրան, որ գեներալներ Նազարբեկյանն ու Հախվերդյանը անցանկալի էին համարում այդ օպերացիան ձեռնարկելը, հրամայեց Կարսի զորաջոկատին անցնել հարձակման, վերջնական նպատակ ունենալով գրավել Օլթիի շրջանը:

Հրամանն արձակելուց հետո ռազմական նախարարը, հավանաբար որոշ չափով տատանվել էր, քանի որ մարտական գործողություններն սկսելուց քիչ անց նա հաղորդել էր Փիրումյանին, թե հնարավորության դեպքում վատ չէր լինի դադարեցնել գործողությունները Օլթիի ուղղությամբ: Բայց վիճակն արդեն նետված էր, և մեր գորքերը 3 շաբաթյուններով շարժվում էին առաջ՝ շրջառելով քրդական գյուղերը և նպատակ ունենալով միմյանց միանալ Փենյակ գյուղում: Հյուսիսային շաբաթյունը շարժվում էր Փանջուր սարից (Մազմանյանի 1-ին գունդը), իսկ հարավային շաբաթյունը (Նեստերովսկի) գալիս էր Սարիղամիշի Իգդալի ագարակի կողմից: Չնայած հակառակորդի ցուցաբերած համառ դիմադրությանն ու ամրացված դիրքերին, մենք ունեցանք լիակատար հաջողություն, նաև որպես ռազմավար գրավելով հրետանի և գնդացիներ:

Հայերի և հույների հետիոտն գիշատիչ բանդաները և Մուրադիսանի պարտիզանական հարյուրյակը, մասամբ էլ Փիլոսինը՝ տեղական միլիցիայի գործուն մասնակցությամբ ավերի ու թալանի ենթարկեցին գրաված տարածքները: Լեռնային դժվարանցանելի կաճաններով սկսվեց հափշտակված անասունների այն չափի զանգվածային քշել-տանելը, որ այդ ամենը կանխելու համար անհրաժեշտ էր թալանչիների դեմ մեծաքանակ ուժերով մի ներքին պատերազմ սկսել¹⁷⁴, ինչը, բնականա-

¹⁷⁴ Օլթիի շրջանը գրավելուց հետո հայկական կողմի իրականացրած թալանը, իրոք, հասել է այն չափերի, որ բացի ամեն ինչից, լուրջ սպառնալիք է ներկայացրել արդեն իսկ բանակի մարտունա-

բար, անհնարին էր, քանզի գորամասերը զբաղված էին ռազմաճակատում: Ի վերջո, Օլթիի ջոկատը շփման մեջ մտավ Սարիղամիշի ջոկատի հետ Իգդիրի ագարակի մոտ, Վասկուտ լեռան շրջանում: 4-րդ գնդի վաշտերն այստեղ վերադարձան իրենց գունդը: Մեր ռազմական գործողություններն ու Օլթիի շրջանի ավերումը չէր կարող թուրքական կողմի համար աննկատ անցնել: Ուստիև, թուրքերն արդեն փնտրում էին ոչ թե պատճառ, այլ ընդամենը առիթ Հայաստանի հանդեպ իրենց զավթողական գործողությունները ծավալելու համար:

.....

Այսպիսով, հաշվի չառնելով մեր երկրում առկա ներքին իրավիճակը և կանոնավոր հակառակորդի դեմ պատերազմ վարելու մեր անպատրաստ լինելը, մենք մարտահրավեր նետեցինք Թուրքիային:

Որպեսզի պարզենք Թուրքիայի հետ պատերազմելու մեր անպատրաստ լինելը, անհրաժեշտ է քննարկել մեր զորքերի վիճակը, նրանց սպառազինությունն ու ներքին կառավարումը:

Ձորքերի կառավարումը կենտրոնացված էր զորքերի հրամանատարի շտաբում, բայց անձամբ զորքերի հրամանատարը՝ գեներալ Նազարբեկյանը, ենթարկվում էր Ռազմական նախարարին: Վերջինս, իր հերթին, իրեն մշտապես բարոյական կախվածության մեջ էր զգում երկրի Խորհրդարանի Ռազմական հանձնաժողովի հանդեպ:

կությանը: Տե՛ս Վ. Հարությունյան, Կարսի վերջնախաղը, էջ 74; Վ.Հարությունյան, Կարսի մարզը ՀՀ կազմում, էջ 262-266, 331:

Այսինքն, գորքերի հրամանատարը ինքնուրույն քայլեր ձեռնարկելու առումով խիստ կաշկանդված էր, ուստիև ռազմական գերատեսչության ոչ մի միջոցառում հնարավոր չէր իրականացնել առանց խորհրդարանի զինվորական հանձնաժողովի թույլտվության ու համաձայնության:

Անդրադառնալով այն հարցին, թե որքանով էր այդ զինվորական հանձնաժողովը նախապատրաստված ծագող զինվորական բոլոր խնդիրների և հարցերի լուծման համար, շատ կարճ կանգ առնենք հանձնաժողովի կազմի վրա. Դրո, Սեպուհ, Վարոս Բաբայան, Բալոյան, դոկտոր Մելիքյան (ավագը), գնդապետ Արսեն Շահմազյան և այլք:

Այստեղից երևում է, որ այդ պատգամավորական խմբում և ոչ մեկը զինվորական գործի իրական մասնագետ չէր: Միակ սպան՝ Շահմազյանը, ցարական բանակի պահեստի ենթասպա էր, ծառայել էր հայկական կամավորական ջոկատներում, ուր, ի դեպ, զբաղեցրել էր ցածր պաշտոններ: Դրանից հետո նրա զինվորական ծառայողական վերելքը՝ մինչև գնդապետի կոչումը ներառյալ, ընթացել էր խորհրդարանական միջավայրում, որտեղ նրան կոչումներ են շնորհվել ու պարգևներ են տրվել, հավանաբար, միայն Խորհրդարանին հայտնի հայրենիքին մատուցած հատուկ ծառայությունների համար:

Նման կազմի առկայության պարագայում, զինվորական հարցեր քննարկելիս հանձնաժողովն ամեն քայլափոխին հանդիպում էր դժվարությունների և խորհրդի ու պարզաբանումների համար դիմում էր հեղինակավոր

մասնագետներին՝ գեներալներին: Սակայն մասնագետների տված խորհուրդները հիմնականում մնում էին անհետևանք՝ զինվորական գործի նկատմամբ այդ հանձնաժողովի խիստ յուրահատուկ տեսակետ ունենալու պատճառով: Անդրադառնալով Ռազմական նախարարությանը, անհրաժեշտ է նշել գեներալ Հախվերդյանի գործունեությունը: Ունենալով զինվորական մեծ փորձ և լինելով լայնորեն կրթված անձնավորություն, Հախվերդյանը, իր հանդարտ ու հաստատակամ բնավորության շնորհիվ, կարողացավ հարթել Ռազմական նախարարության աշխատանքում հանդիպող շատ ու շատ տարբեր տեսակի անհարթություններ:

Ձորքերի հրամանատար, գեներալ Նազարբեկյանը, ով ուներ մարտական մեծ փորձ ու ռուսական բանակում վայելում էր շատ բարձր հեղինակություն և իր բացառիկ մարտական նվաճումների համար պազևատրվել էր ոչ միայն ռուսական, այլև ֆրանսիական ու անգլիական շքանշաններով, Հայաստանում չունեի բացառիկ հեղինակություն: Մի կողմից դա կարելի է վերագրել նրա ծերունական տարիքին, իսկ մյուս կողմից՝ այն հանգամանքին, որ Նազարբեկյանը Հայաստանի ապագայի հանդեպ ուներ բավականին ժխտողական-նիհիլիստական տեսակետ:

Ձորքերի հրամանատարի շտաբը և գլխավոր վարչությունը անում էին իրենց գործը: Գլխավոր համբարակային վարչությունը իր գործունեությունը սկսեց բավականին ակտիվացնել 1920 թ. սկզբներից:

Հաշվի առնելով այն դերը, որ ունեցավ Կարսը պատերազմում Հայաստանի պարտվելու հարցում, անհրա-

Ժեշտ է անդրադառնալ նաև Կարսի ռազմաճակատի բարձրագույն զինվորական գործիչներին: Ինչպես արդեն նշվել է նախորդիվ, Ալեքսանդրապոլի գորաջոկատի պետն ու միաժամանակ Կարսի բերդի պարետը գեներալ-լեյտենանտ Դանիել բեկ Փիրումյանն էր: Փիրումյանը փոքրիկ ջոկատի մարտական հրամանատար էր, ուներ անհանգիստ և կամակոր բնավորություն: Նա բավարար չափով չէր կողմնորոշվում մեծ ռազմաճակատի ռազմավարական հարցերում և օպերատիվ իրավիճակներում: Հաճախակի հետապնդելով իր անձնական շահերը, նա ձգտում էր իր շուրջը ստեղծել հարմարավետության , պճնանքի ու փայլքի մթնոլորտ, որոնց միջոցով ասես ձգտում էր, որ ավելի ընդգծվեր իր զբաղեցրած պաշտոնի բացառիկությունը: Բայց, որպես կանոն, այդ ձգտումներից նա ավելի շատ կորցնում էր, քան շահում: Զորքերի և ամրոցի կառավարման համար Փիրումյանը ի գորու չէղավ ստեղծել անհրաժեշտ ու պատշաճ մի աշխատակազմ՝ գորախմբի կամ ամրոցի գործող շտաբի տեսքով¹⁷⁵: Այդ իսկ պատճառով ինքն, ասես, օպերատիվ ենթակայության շղթայում մի ավելորդ օղակ լինեք, որը խոչընդոտում էր օպերատիվ աշխատանքների կազմակերպմանն ու դրանց ընթացքին:

¹⁷⁵ Առկա են մի շարք այլ հեղինակավոր վկայություններ (Նազարբեկյան, Սիլիկյան, Հախվերդյան, Ռ.Տեր-Մինասյան, Վահան Տեր-Առաքելյան), որոնցում նույնպես ուղղակիորեն շեշտվում է Փիրումյանի անձի անհամապատասխանությունը այդ կարևոր ու պատասխանատու պաշտոնին: Տե՛ս Վ. Հարությունյան, Կարսի վերջնախաղը, էջ 48-51:

Թե ինչպես էին վերսնություն հիմնավորում գորախմբի պետի պաշտոնի գոյությունը, երբ այն չէր միավորում մեկ անձում քաղաքացիական և զինվորական իշխանություններն ու իրավասու չէր իր հայեցողությամբ օգտագործել Ալեքսանդրապոլի կայազորի ուժերն ու հնարավորությունները, մնում է գաղտնիք: Դա ոչմի կերպ հնարավոր չէ բացատրել և արդարացնել, երբ նույն գորախմբի գլխին նշանակված են երկու օպերատիվ պետեր (Կարսի ջոկատի հրամանատար և գորախմբի պետ), որոնք, բացի ամենից, Կարսում էլ ունեն ընդհանուր գորակայան: Դաշտային և ամրոցային հրամանատարության կենտրոնացումը նույն անձի ձեռքում բացասաբար ադրադարձավ ռազմական գործողությունների ընթացքին, հասկապես, երբ դրանք մոտեցան արդեն Կարսին:

Ռազմական նախարարը պայման էր դրել, թե Կարսը հանձնել միայն այն դեպքում, եթե զորքն ունեցավ 70 % կորուստ: Գեներալ Փիրումյանը, որպես Կարս ամրոցի պարետ, այդ պահանջը կատարեց այնքանով, որ հենց ինքը եղավ այդ կորստի տոկոսներում առաջիններից մեկը: Թեև այդ փաստը լուսաբանվում էր որպես զինվորական պարտքի կատարման օրինակ, սակայն բացասաբար անդրադարձավ Կարսի պաշտպանության վրա, քանզի, Մազրայի փոխարեն գտնվելով Կարսում, գորախմբի պետ Փիրումյանը չէր կարող պատշաճ խորությամբ հասկանալ և տիրապետել օպերատիվ իրավիճակին ու հոկտեմբերի 28-ի իր հրամանին համապատասխան կառավարել դաշտային զորքերի գործողությունները: Բացի դրանից, գորախմբի պետի ներկայութ-

յունը Կարսում շարունակում էր զորքերի մոտ պահպանել այն մտայնությունը, թե Կարսը այն հենակետն է, որը ապահովելու է զորքերն ամեն ինչով: Մինչդեռ դա արդեն այդպես չէր:

Ինչ վերաբերում է Կարսի ջոկատի պետ գեներալ Հովսեփյանին, ապա, չնայած այն մեծ դժգոհությանը, որ արտահայտում էին նրա հանդեպ ինչպես բարձրագույն զինվորական, այնպես էլ նախարարական շրջանները, անհրաժեշտ է նշել նրա բացառիկ բարեխղճությունն ու ուժերը ներածին չափով իր պարտքն ազնվորեն կատարելը:

Նա մշտապես մեծ հոգատարություն էր դրսևորում իր զինվորների նկատմամբ, ինչի շնորհիվ էլ դեռևս 4-րդ հայկական հրաձգային գնդի հրամանատար եղած ժամանակ երախտապարտ զինվորները նրան հայր էին անվանում: Լինելով ջենթլմեն իր ենթակաների հետ հարաբերություններում, Հովսեփյանը միշտ չէ, որ իր պետերի, կամ էլ բարձրաստիճան քաղաքացիական պաշտոնյաների հետ շփվելիս ցուցաբերում էր բարեկրթություն: Ռուսական տիրապետության ժամանակ նա հայկական ազգային զորամիավորումների ստեղծման ջերմ կողմնակից էր, սակայն այս օրերին նա խիստ հակառակվում էր խմբապետական ջոկատների կազմավորմանը, համարելով դրանք հայկական դասավորության հարուցիչներ ու պարտակողներ, որոնք զրկում են հայերի տասարդությանը անհրաժեշտ ռազմական պատրաստությունից, կարգապահության տարրերն ընկալելուց և յուրացնելուց:

Հովսեփյանի նման կեցվածքը զինվորական և նախարարական շրջաններում նրա հանդեպ առաջ էր բերում դժգոհություն և ոչ բարյացակամ վերաբերմունք: Նման վերաբերմունքի հետևանքով Կարսի ջոկատ ուղարկվեցին խորհրդարանի անդամների մասնակցությամբ մի քանի հանձնաժողովներ, որոնք պետք է ի հայտ բերեին գեներալ Հովսեփյանի ծառայողական չարաշահումները (թալան¹⁷⁶ և այլն): Մինչև թուրքերի վերջին հարձակումը Հովսեփյանին ենթակա զորամասերում ամեն ինչ ընթացել է բարեհաջող, և Հովսեփյանը Հայաստանի բանակի հրամանատարությունից շնորհակալագրեր էր ստանում իր զորամասերի օրինակելի վիճակի և անձնուրաց աշխատանքի համար: Այնպես որ, պատրվակ չկար Հովսեփյանին մեղադրել զորքերը կառավարելու անկարողության մեջ: Այդ հանձնաժողովները որևիցե չարաշահում բացահայտել չկարողացան, իսկ բոլորի աչքում ճյուղի պես ցցված գեներալ Հովսեփյանի անվան հետ կապվող կաթի ֆերման պատկանում էր նրա եղբորը, ով օգնում էր գեներալի ընտանիքին կաթնամթերքով:

¹⁷⁶ Կան բազմաթիվ հուշեր և փաստաթղթեր, որոնք պարզորոշ վկայում են գեներալ Հովսեփյանի անմիջական առընչությունը Կարսի նահանգում իրականացվող թալանի հետ: Տե՛ս Վ.Արծրունի, Հայ-տաճկական պատերազմը, հայ սպայությունը, Երևան, 2002, էջ 59, Վ.Հարությունյան, Կարսի վերջնախաղը, էջ 73, 154; Գ. Յեազրճեան, Կարսի անկման խորքային պատճառները, Երևան, 2007, էջ 88-90; Կարսի մարզը Հայաստանի Հանրապետության կազմում (1919 ապրիլ - 1920 հոկտեմբեր), Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը, աշխատասիրութեամբ Վլադիմիր Յարութինեանի, Երևան, 2018, 642 էջ:

Նշենք, որ Վրաստանի իշխանությունները ամբողջովին ավերել էին Բելի Կլուչում¹⁷⁷ գտնվող Հովսեփյանի տնտեսությունը և գեներալի ընտանիքն ապրում էր չափազանց համեստ:

Ինչպես վերը նշվեց, մինչև թուրքերի հարձակումը ջոկատի գործունեությունը փայլուն էր: Անձամբ ձգտելով քիչ սահմանափակվող ինքնուրույնությանը, գեներալ Հովսեփյանը կարողանում էր անհրաժեշտ ինքնուրույնություն տրամադրել նաև իր ենթակա հրամանատարներին, ինչը բավականին դրականորեն էր անդրադառնում ջոկատի համակազմի ընդհանուր վիճակի վրա: Օլթիի օպերացիայի առնչությամբ գեներալ Հովսեփյանը կատարել է լուր իր զինվորական պարտքն ու իր առջև դրված խնդիրները: Օպերացիայի հետևանքների վերաբերյալ նա իր վրա որևիցե պատասխանատվություն չէր վերցրել¹⁷⁸: Ասենք, որ այդ չարաբաստիկ օպերացիայի նման ընթացքին մեծապես նպաստեց գնդապետ Մազմանյանի և 1-ին հետևակային գնդի զինվորների նվաճողական ոգին:

Թուրքերի հարձակման անցնելուց հետո գեներալ Հովսեփյանը, ցուցաբերելով նախաձեռնություն և վճռականություն, կարողացավ միավորել ռազմաճակատի մեր զորամասերն ու հակազդել Սարիղամիշ-Կարս օ-

¹⁷⁷ Բելի Կլուչը այսօրվա Վրաստանի Թեթրի Շղարո բնակավայրն է: Այդ շրջանում է գտնվում գեներալ Հարություն (Արտեմի) Հովսեփյանի ծննդավայր Դաղես Խաչեն գյուղը:

¹⁷⁸ Օլթիի շրջանի գրավմանը հաջորդած թալանի մասին արդեն խոսվել է նախորդիվ:

պերատիվ ուղղությամբ գործող հակառակորդի գերակշռող ուժերին:

Ջորամասերը միավորելուց հետո գեներալ Հովսեփյանը մշտապես զորքերում էր, քանիցս մեկնել է դիրքեր, քաջալերել զինվորներին:

Մշտապես գտնվելով թուրքերի գլխավոր հարձակման ճանապարհին և իր առջև մշտապես ունենալով հակառակորդի գերակշռող ուժեր, իսկ մեր զորամասերում էլ, հակառակ իր ցանկության, ստանալով բանակը թուլացնող ու քայքայող ոչ պիտանի համալրում, գեներալ Հովսեփյանն անում էր ամեն ինչ հաջողության հասնելու համար¹⁷⁹: Բայց հոկտեմբերի 14-ի մարտից հետո գեներալ Հովսեփյանը կորցրեց հույսը 1-ին և 5-րդ գնդերի մարտունակության նկատմամբ:

Այն հանգամանքը, որ 1-ին գունդը միշտ նախապատրաստվում էր ակտիվ մարտական գործողությունների համար, պայմանավորված էր նրանով, որ այդ գունդը մարտերից հետո շատ արագ ուղարկվում էր պահես-

¹⁷⁹ Մի շարք ակնատեսների ու դեպքերի մասնակիցների վկայությունները և հուշերը, ինչպես նաև արխիվային փաստաթղթերը ստեղծում են գեներալ Հարություն Հովսեփյանի վերաբերյալ միանգամայն այլ տպավորություն ու կարծիք: Տե՛ս Վ.Արծրունի, Հայտաճկական պատերազմը, հայ սպայությունը, Երևան, 2002, 456 էջ; Վ.Հարությունյան, Կարսի վերջնախաղը, Երևան, 2018, 180 էջ; Գ. Յեազրճեան, Կարսի անկման խորքային պատճառները, Երևան, 2007, 112 էջ; Կարսի մարզը Հայաստանի Հանրապետության կազմում (1919 ապրիլ - 1920 հոկտեմբեր), Կարսի նահանգապետ Ստեփան Դորդանեանի յուշերը, աշխատասիրութեամբ Վլադիմիր Յարութինեանի, Երևան, 2018, 642 էջ; Վ.Հարությունյան, Կարսի մարզը ՀՀ կազմում, էջ 230-232, 331,341, 344-347:

տագոր և հնարավորինս արագ կարգի բերվում: Դա էլ ասենք, որ գեներալ Հովսեփյանը ընտրության հնարավորություն ուներ միայն երեք գնդերից (*հավանաբար խոսքը 1-ին, 4-րդ և 5-րդ հետևակային գնդերի մասին-Վ.Ն.*), քանի որ պահակային գումարտակի վաշտերն առավել անմարտունակ էին, քան 1-ին գունդը:

Միակ փաստը, որ կարելի է ի ցույց դնել գեներալ Հովսեփյանին, դա այն է, որ նա չափից դուրս ինքնուրույնություն տվեց 4-րդ գնդի հրամանատար, գնդապետ Միրիմանյանին: Գնահատելով Միրիմանյանի գերազանց վարչական գործունեությունը, Հովսեփյանը չկարողացավ սանձել նրա անհնազանդ բնավորությունը: Մեր անհաջողությունների ժամանակ Միրիմանյանը դրսևորվեց, ակնհայտ կարգազանցություն, հրամանների կատարումը նա կամ ուշացնում էր, կամ ցուցադրում էր դրանք, առհասարակ, չկատարելու միտում: Նման կարգազանցությունն, անկասկած, պայմանավորված էր ընդհանուր անպատասխանատվության մթնոլորտով և այն հանգամանքով, որ ծագած այդ հարցի վերաբերյալ զեկուցելուց հետո գեներալ Հովսեփյանը չստացավ զորաջոկատի հրամանատարի և նախարարական հանձնաժողովի աջակցությունը:

Անցնենք մեր դաշտային զորքերի քննարկմանը, դիտարկենք դրանք ըստ առանձին զինատեսակների:

Թուրքերի հարձակումն սկսվելուց առաջ մեր հետևակը բաղկացած էր հետևյալ զորամիավորումներից. 3 կանոնավոր բրիգադներ, 2 գունդ ունեցող Սեպուհի բրիգադը (4 բրիգադը, որ հիմնականում համալրված էր թրքահպատակ հայերով), Դրոյի 5 բրիգադը (9 և 10

գնդեր) և 2 առանձին հետևակային գումարտակներ: Վերջիններս հետագայում համալրվեցին ու ծավալվեցին որպես 11 և 12 հետևակային գնդեր: Ընդ որում, 12 գունդը մշտապես տեղակայված է եղել Բասար-Գեչարում¹⁸⁰ և պատերազմական գործողություններին չի մասնակցել:

Հետևակային գնդերի կառուցվածքը 3-գումարտակային էր, ամեն գումարտակում՝ 4 վաշտ: Մեկ գնդի կազմը տատանվում էր 300-ից մինչև 1000 մարդ: Դա պայմանավորված էր, նախ, պատշաճ քանակով և ժամանակին անհրաժեշտ համալրում չստանալով, մյուս կողմից՝ երբևիցե չդադարող դասալքությամբ¹⁸¹, ինչը տեղական վարչական մարմինների կողմից սովորաբար կոծկվում էր:

Այսպիսով, եթե թուրքերի դեմ ռազմական գործողություններին մասնակցող հետևակը միջինն ընդունենք 700 մարդ ամեն գնդում, 10 գնդի դեպքում կունենանք մոտ 7500 մարդ: Եթե հաշվի առնենք, որ այդ սվինների մոտ 10% -ը ոչ շարային էին, ապա կստանանք մոտավորապես 6500 թիվը վրա: Թուրքերի դեմ մղված ռազմական գործողություններում 6-րդ և 12-րդ գնդերը որևիցե մասնակցություն չեն ունեցել, իսկ նոր ձևավորված 11-րդ գունդը մասնակցել է Սուրմալուի շրջանում թուրքերի դեմ մղած կռիվներին:

¹⁸⁰ Հուշերում նշվող Բասար-Գեչարը այսօրվա ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս բնակավայրն է:

¹⁸¹ Տե՛ս Վ. Հարությունյան, Կարսի վերջնախաղը, էջ 156; Վ.Հարությունյան, Կարսի մարզը ՀՀ կազմում, էջ 321-323, 334-337, 340, 342, 360, 364-368:

Հետևակի սպառազինությունը գնդերում տարբեր էր, բայց նախընտրելի էր Լեբելի 3-գծային տեսակը: Պատերազմի սկզբին տեղ հասան անգլիական Ռոսի հրացանները և Վիկերսի գնդացիները: Հարկ եղավ շատ շտապ վերազինել գնդերը, որոնք զինված էին Լեբելի 3-գծային տեսակով: Այս տեսակի փամփուշտների խիստ պակասի պատճառով գորամասերի վերազինումը շատ հաճախ ստիպված իրականացվում էր հենց մարտական գործողությունների ընթացքում և հակառակորդի աչքի առաջ: Զինվորները ծանոթ չէին այդ հրացանին, իսկ մարտական իրավիճակն էլ նոր զենքի մանրամասն ուսումնասիրության համար ժամանակ և հնարավորություն չէր տալիս: Մաքսիմ և Կոլտ տեսակի գնդացիներով զինված գնդերում առկա գնդացրային խմբերը վերազինվեցին Վիկերսի գնդացիներով, որոնք գործածման տեսակետից մոտ էին Մաքսիմի գնդացիներին: Ինչ վերաբերում է Լյուիսի ձեռքի գնդացիներին, ապա փամփուշտների և փամփշտակալ սկավառակների բացակայության պատճառով, դրանք այդպես էլ պիտանի չեղան գործածման համար:

Բեռնակիր կենդանիների և բեռնավորման հարմարանքների բացակայության պատճառով ամեն մի գունդը ի վիճակի էր ընդունել հաստիքով նախատեսվածից ավելի քիչ քանակի գնդացիներ: Ամեն գնդում միջինում կար 12 գնդացի, այսինքն՝ մեկ գնդացի մեկ վաշտի համար:

Արտասահմանից եկող մշտական օգնության շնորհիվ համազգեստի վիճակը մինչ պատերազմը բավարար էր, պատերազմն սկսվելուց հետո՝ գերազանց:

Գնդերին կից հեծյալ-հետախուզական խմբերում ձիակազմի թերի լինելու պատճառով ձիերի քանակը չէր գերազանցում 20-ը: Եթե հաշվի առնենք նաև հեծյալ հանձնակատար խմբերի բացակայությունը, ապա պարզ է դառնում, որ հետախուզական կոչվող այդ խմբերը սահմանափակված էին զուտ կազմակերպական գործառույթներով: Նման պայմաններում գնդերը փաստորեն, զրկված էին մարտական հետախուզում կատարող և կապն իրականացնող հեծելագործից:

Ձիակազմի, հեծելա- և լծասարքի, սայլերի բացակայության պատճառով հետևակային զորամասերի գումակային ծառայությունը չէր կարող լինել անգամ քննադատության առարկա: Որոշ գնդերում պահվող եզների քանակը փոքրաթիվ էր և նրանք նույնպես չէին կարող օգտագործվել արդյունավետ՝ այդ նույն սակավաթվության և դանդաղկոտության պատճառով: Բրիգադային գումակներ առհասարակ գոյություն չունեին: Գումակների նման պատկերը զրկում էր զորամասերը կուռ, բարեկանոն ու շարժունակ լինելուց, կանոնավոր և արագ կազմակերպվելուց, ինչն այդքան անհրաժեշտ է ու կարևոր գորքերի տեղաշարժի և մարտական գործողությունների ժամանակ:

Հեռախոսամալուխի բացակայության պատճառով հեռախոսակապի վիճակը խիստ անբավարար էր: Նույնիսկ գնդի շտաբը, գտնվելով գումարտակներին շատ մոտ, չէր կարողանում ունենալ նրանց հետ տեխնիկական կապ: Կապի այլ միջոցները բացակայում էին, կամ էլ լեռնային պատերազմի պայմաններում գործածման համար պարզապես պիտանի չէին:

Անդրադառնալով հրամանատարական կազմին հարկ է նշել, որ քանակում առկա էր կրտսեր սպաների համեմատաբար բավարար քանակ, սակայն զգացվում էր փորձառու հրամանատարների, մասամբ նաև վաշտերի մակարդակում, զգալի պակաս: Որոշ գորամասերի հրամանատարներ, որպես ականավոր և ճանաչված սպաներ, միանգամայն բավարարում էին քանակին: Ինչ վերաբերում է ենթասպայական (унитер-офицер) կազմին, ապա այն խիստ անբավարար էր: Պատճառն այն էր, որ հաճախակի օպերատիվ գործողություններին մասնակցելու պատճառով, ուսումնական խմբերը չկարողացան տալ շրջանավարտների գոնե մեկ նորմալ խումբ: Ամիսներով ուսումնական խմբերի ներկայությունն առաջնագծում սովորական մի երևույթ էր:

Ռուսական քանակից եկած ենթասպայական կադրերի քանակն աննշան էր, իսկ դրանցից շատերն էլ չէին անցել պատշաճ ուսումնական դասընթաց, քանզի այդ դասընթացները ընդունում էին միայն այն զինվորներին, որոնք ազատ տիրապետում էին ռուսերենին:

Մշտական օպերատիվ տեղափոխումներով հագեցած ծանր ծառայության, սպիտակեղենի և քնապիտույքների բացակայության հետևանքով, ժամանակավորապես պահեստագոր ուղարկվող սպաները չէին կարողանում լիարժեք հանգստանալ:

Հայաստանը պահում էր ավելի մեծ քանակով գորք, քան ինքն իրականում ի վիճակի էր պահել: Այդ պատճառով էլ գորքերում սնունդը բավարար քանակի չէր: Զգացվում էր նաև բժշկական միջոցների պակաս, զինվորական հոսպիտալների սարքավորումը խիստ աղ-

քատիկ էր, գորքին մշտապես հետապնդում էր մալարիան՝ նույնիսկ Կարսի մարզի Փենյակի շրջանում: Այդ ամենը հյուծում էին շարքային զինվորներին, որոնք, բնականաբար, չէին կարող հաշտվել այն մտքի հետ, որ նման ծառայությունը, ասես, վերջ չի ունենալու: Առավելևս, որ նրանց ընտանիքները բացարձակապես ապահովված չէին: Հայկական բանակում ծառայում էին 20-ից մինչև 32 տարեկանները, ինչը ցույց է տալիս, թե որքան լարված էր Հայաստանը նույնիսկ խաղաղ պայմաններում, եթե, իհարկե, Հայաստանի գոյության գոնե մեկ օրը կարելի է համարել խաղաղ:

Շարքային զինվորների կազմը բաղկացած էր բացառապես գյուղացիներից: Մտավորականությունը, քաղաքաբնակները, ինչպես նաև ավելի հարուստ գյուղացիները ինչ-որ եղանակով կարողանում էին խուսափել զինվորական պարտականությունները կատարելուց: Իսկ այն բացառիկ դեպքերում, երբ նրանք հանկարծ զորակոչվում էին, իսկույն տեղավորվում էին տաքուկ տեղերում և թիկունքային զորամասերում:

Կառավարական քարոզչություն զինվորական մասերում չէր իրականացվում: Զորամասերի ծածուկ շարվածքը չէր կարող վաղօրոք որոշվել, քանի որ Հայաստանում գերիշխող կուսակցությունը չունեի իր քաղաքական աշխատողները զորամասերում: Կարելի է վստահաբար ասել, որ ամբողջ կանոնավոր բանակում չէր գտնվի գեթ մեկ դաշնակցական զինվոր, ինչը հատկապես զգացնել տվեց մայիսյան խռովությունների օրերին: Այդ երևույթի պատճառները պետք է փնտրել այն իրողության մեջ, որ կուսակցության բոլոր անդամները

հեշտությամբ տեղավորվում էին վճարվող պաշտոններում կամ աշխատանքի անցնում վարչական մարմիններում:

Ոչ Բարվոք վիճակում էր գտնվում նաև Հայաստանի սպայությունը: Մշտական գործող ռազմաճակատը, մշտական զրկանքները, չդադարող նյարդային լարվածությունը, ցածր վարձատրությունը, ընտանիքավորների համար՝ երկու տներում բնակվելու անհրաժեշտությունը, կյանքին սպառնացող մշտական վտանգը, վիրավորների և զոհվածների ընտանիքների համար նպաստների բացակայությունը, այս ամենը դարձնում էին զինվորական ծառայությունը այդչափ ծանր ու անհրապույր, որ ամեն մի սպա երագում էր զինվորական ծառայությունից հեռանալու մասին: Այդ պատճառով էլ ավագ հրամանատարի հետ որևիցե թյուրիմացության ի հայտ գալու պարագայում սպային բացարձակապես չէր զսպում այն հանգամանքը, որ ծագած անախորժության պատճառով կարող է տուժել իր ծառայողական առաջընթացը, կամ էլ ինքը կարող է, առհասարակ, հեռացվել զինվորական ծառայությունից: Դեպքերի նման ընթացքը չափազանց վնասակար էր ազդում զինվորական պաշտոնակարգության վրա և, եղած ընդհանուր անպատասխանատվության պայմաններում, քայքայում էր կարգապահությունը գորքերում:

Ավագ սպայական կազմում և գեներալների շարքերում չկար ոչ մի կուսակցական: Դա միանգամայն հասկանալի էր. ըստ զինվորականների շրջանում իշխող ընդհանուր տեսակետի, գործի համար խիստ վնասաբեր

է միաժամանակ ենթարկվել երկու կարգապահական համակարգերի՝ զինվորական և կուսակցական:

Անբավարար նյութական ապահովվածությունն ու խմբապետների, վարչական աշխատողների և նույնիսկ չափազանց բարձր պաշտոններ զբաղեցնող անձանց անպատիժ մնալու օրինակները առավել ճարպիկ սպաներին դրդում էին թալանի: Հայաստանում, առհասարակ, ընդունված էր, որ երկրի բարձրագույն իշխանությունը թալանին նայում է մատների արանքով: Հայաստանում սպայակազմի պահեստակազմ, որպես այդպիսին, գոյություն չուներ: Պահեստում գտնվող սպաների ոչ զգալի քանակն իրենից ներկայացնում էր զինվորական ծառայության համար ոչ պիտանի տարրերի հավաքածու: Դրանք ժամանակին ծառայությունից ազատվել էին կամ դատական կարգով, կամ չբավարարելով որակավորման տարրական պահանջներին: Այնպես որ, ռազմական ուսումնարանների բացակայության պայմաններում, զորակոչի դեպքում, սպայական կազմը չէր կարող համալրվել: Չէր տեղակալվում նաև սպանվելու, վիրավորվելու և հիվանդանալու պատճառով սպաների թվակազմի պակասումը: Կադրային մասերը վերը նշված պահեստային սպաներին ծառայության չէին ընդունում և վերջիններս խմբավորվում էին նոր ձևավորվող պահակային գումարտակի վաշտերում: Արդյունքում, նման հավերժ դասայիքներով համալրումը այդ զորամասերը դարձնում էր մարտական գործողությունների համար ոչ պիտանի, ինչի մասին քանիցս խոսվել է նախորդիվ:

Անցնելով հեծելագորի քննարկմանը, նախ անհրա-
ժեշտ է նշել, որ մեր հեծելագորի կազմը, մյուս գորատե-
սակների հետ համեմատած, խիստ անհամաչափ էր:

Հայկական բանակի հեծելագորի կազմը բաղկացած
էր համահավաք հեծյալ գնդից, որը մշտապես գտնվում
էր գնդից բրիգադի և հակառակը՝ ձևափոխման ու ձևա-
վորման փուլում և 3 հարյուրականոց համալրված ա-
ռանձին հեծյալ դիվիզիոնից: Այդ հատուկ հեծյալ ստո-
րաբաժանումը ձևավորվել էր պարտիզանական հեծյալ
հարյուրյակի հիմքով և մասնակցեց Էրիվան-Դարալագ-
յազ, Մուրմալու, Զանգեզուր-Ղարաբաղ շրջաններում
տեղի ունեցած բոլոր մարտական ընդհարումներին:

Համահավաք հեծյալ գունդը կամ բրիգադը (կախված
ժամանակահատվածից) կորցրել էր ռուսական հեծյալ
գնդերից իրեն ժառանգություն հասած ձիակազմը: 1918-
ին և 1919-ի սկզբներին ծավալված ռազմական գործո-
ղությունների, քուսի և կերի մեծ պակասի պատճառով
այդ գունդը մշտապես ձիերի այդչափ մեծ կարիք ուներ,
ի վիճակի չեղավ վերականգնել մեկ հեծելավաշտից ա-
վել: Մի կողմից Հայաստանի աղքատ լինելը ձիերի
գլխաքանակով, և հեծելագորի համար պահանջվող,
հատկապես 12-րդ հասակի ձիերով, մյուս կողմից, տե-
ղական ձիերի արտաքին տեսքով պատճառաբանվող
մեր հեծելագորային հրամանատարների անգործությու-
նը, գործնականում զրկում էր հայկական բանակը հեծե-
լագորի նույնիսկ այն նվազագույն քանակից, որ սահմա-
նել էին զինվորական շտաբները:

Հեծելագորի ստեղծման համար մեծ խոչընդոտ էր
նաև հեծելագորային սպաների սուր պահանջարկի

առկայությունը: Այդ բացը լրացնելու համար նրանց, ստիպված, տեղակալում էին հետևակային սպաներով, որոնք բացարձակ ծանոթ չէին հեծելագորային ծառայությանը: Ավագ հեծելագորային հրամանատարները, ինչպես, օրինակ՝ ռուսական բանակի նշանավոր հեծելագորային սպա, գեներալ Խաչատուրովը, բացարձակապես չկարողացավ համակերպվել հայաստանյան իրականությանը¹⁸²:

Գնդապետ Ղորղանյանը՝ խիզախ և գործունյա սպա, հաշվի նստելով տեղական իրադրության հետ, կարողացավ կազմակերպել ձիերի ընդունում ու գնում և որոշ չափով առաջ տանել գորամասի ձևավորման գործընթացը:

1-ին հեծյալ գնդի (կամ հեծելավաշտի) հրամանատար փոխգնդապետ Մելիք-Շահնազարյանին (Մելիք-Շահնազարովին) կարելի է բնաթագրել որպես հեծյալ զորամասերի ավերման հմուտ մասնագետ: Նա կազմալուծեց Բեկ Փիրումյանից ընդունած 1-ին հեծյալ գունդը, կազմալուծեց նաև որպես Կարսի հեծյալ գունդ վերաձևավորված նույն զորամասը, Հայկական բանակի ձևավորումից հետո, 1918թ. ընթացքում կորցրեց այդ նույն

¹⁸² **Գեներալ Խաչատուրով** – ռուսական բանակից եկած այս բարձրաստիճան գինվորականի անվան հետ չեն կապվում որևիցե էական դերակատարում, գործընթաց, կամ ինչ-ինչ քայլեր՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունում բանակաշինության, բանակի մարտունակության բարձրացման հարցերին: Գեներալ Խաչատուրովը առավել հայտնի է նրանով, որ Ալեքսանդրապոլում Մայիսյան հակապետական խռովության բռնկման հենց սկզբից անցել էր բոլշևիկների կողմը, ինչի պատճառով էլ սպանվել էր դաշնակցականների կողմից:

գնդի ձիերի ամբողջ գլխաքանակը և, ամենայն հավանականությամբ, այդ ամբողջ ժամանակահատվածում չկարողացավ կազմակերպել գոնե մեկ հեծելավաշտ:

Հեծելագործում 2 տարվա իր հրամանատարության ընթացքում նա չկարողացավ իր նկատմամբ հարգանք ներշնչել ո՛չ իրեն ենթակա սպաներին, ո՛չ էլ շարքային զինվորներին: Նա մշտապես լեցուն էր ինչ-ինչ միստիկ կանխագագացումներով և այլևայլ աննորմալություններով: Նա սովորություն ուներ իր ազգանունը պարտադիր գրանցել տալ համբարակային և գործնական այլ փաստաթղթերի տակ: Բացարձակ անհասկանալի է, թեայդ անձնավորությանը ինչպես էր վստահվում ղեկավարել առանձին հեծյալ զորամաս: Հայկական բանակում նրա կարիերան ավարտվեց նրանով, որ 1920 մայիսյան իրադարձությունների ժամանակ նա փախավ բոլշևիկների հետ, թեև հոգու խորքում համոզված մոնարխիստ էր¹⁸³:

¹⁸³ Գնդապետ **Մելիք-Շահնագարյան Անդրանիկ Պողոսի** (Մելիկ-Շախնագարով Անդրեյ Պավլովիչ) (1887թ., Ստավրոպոլ – 1937թ., Մինսկ) –այս զինվորականը, թեև անկուսակցական, գեներալ Խաչատուրովի նման 1920թ. մայիսյան օրերին նույնպես անցել է բոլշևիկների կողմը, Հայաստանի խորհրդայնացումից հետո իր գլխավորած զորաջոկատով մասնակցել է Վրաստանի բռնի խորհրդայնացմանը, հետագայում զբաղեցրել է տարբեր հրամանատարական պաշտոններ ԽՍՀՄ զինված ուժերում: Զինվորական կարիերան ավարտել է որպես կորպուսի հրամանատար (Բելոռուսիա): Այստեղ էլ, 1937թ. բոլշևիկյան իշխանությունները նրան ձերբակալում են և, ամբաստանելով մեկ տասնյակից ավելի պետությունների օգտին լրտեսության մեջ, գնդակահարում են:

Ինչ վերաբերում է 2-րդ հեծյալ գնդին (հեծելավաշտի հիմքով), ապա նրա հրամանատար Մերգեյ Վեկիյանը (Վեկիլովը) ռուսական գվարդիական հեծելագործի շատ ընտիր սպա էր, սակայն հեծյալ բրիգադի հրամանատար Խաչատուրովի և գնդի հրամանատար Մելիք-Շահնագարյանի միջև եղած ինչ-ինչ կնճռոտ հարաբերությունների պատճառով, նրան լիարժեք աշխատանք ծավալելու հնարավորություն չէր տրվում:

Հավանաբար, հենց ձիերի բացակայության հետևանքն էր, որ հեծյալ այդ զորամասերում ներքին կյանքն ընթանում էր ցարական բանակի ժամանակներում ձևավորված հեծելագործային ավանդույթների հունով իսկ և դրանով էլ պայմանավորված էր այն բծախնդիր ու մանրակրկիտ ուշադրությունը, որ հատկացվում էր սպայական ժողովների և փողային նվագախմբերի կազմակերպմանն ու կահավորմանը:

Ձիերի պակասի պատճառով հեծյալ զորամասերում ծառայող փոքրաթիվ շարքային զինվորները բավարար չափով վարժված չէին ձիագնացությանը, վարժ չէին տիրապետում սառը զենքին: Զգացվում էր սրերի մեծ պակաս, իսկ տեղերը հեծալագործում բացակայում էին իսպառ: Թեև, տեղական պայմաններում տեղն այնքան էլ անհրաժեշտ զինատեսակ չէր:

Դեպքերի նման դասավորության պատճառով այդ հեծյալ բրիգադը քիչ էր մասնակցում Հայաստանի մարտական գործողություններին և մեծամասամբ գտնվում էր պահեստագործում՝ Ալեքսանդրապոլ քաղաքում:

Մայիսյան դեպքերի ժամանակ գեներալ Խաչատուրովի սպանությունից հետո, բրիգադի հրամանատար

րությունը հանձնվեց գնդապետ Ղորղանյանին: Թուրքական պատերազմն սկսվելուց հետո այդ բրիգադը վերաձևավորվեց հեծյալ գնդի և ռազմաճակատ բերվեց մոտ 400 հեծյալ: Ճիշտ է, հեծյալներն այնքան էլ լավ վարժեցված չէին, սակայն գնդի կազմում շատ լավ էին իրենց գործին տիրապետում երկու հեծյալ գնդացրային խմբերը:

Ինչ վերաբերում է հատուկ հեծյալ դիվիզիոնին, ապա որպես այդ գորամասի նախկին հրամանատար, չեմ ցանկանում շատ տարածվել: Նշեմ միայն, որ նա համարվում էր առանձնակի հուսալի հեծյալ գորամաս և մարտի էր նետվում առավել կրիտիկական պահերին՝ առավել դժվար առաջադրանքներ ու խնդիրներ կատարելու համար: Չնայած իր անընդմեջ մասնակցությանը մարտական գործողություններին և հաճախակի արշավներին, այդ դիվիզիոնը ձիերի ու մարտիկների քանակով միշտ գերազանցել է հեծյալ բրիգադի կազմը:

1920թ. փորձ արվեց թրքահպատակ հայերից՝ իրենց սեփական ձիերով և առանց բանակային սպաների մասնակցության կազմել 6 առանձին պարտիզանական հարյուրյակներ: Այդ կարգով կազմավորված 6 հարյուրյակից միայն Փիլոսի 2-րդ հարյուրյակն էր, որ բավարար ներքին կարգապահության առկայությամբ իրականացնում էր փոքրիշատե բավարար աշխատանք: Բայց այդ հարյուրյակն էլ քանիցս կատարեց կարգապահական խախտումներ:

.....
Մյուս պարտիզանական հարյուրյակները չէին դիմանում ոչ մի քննադատության: Դժվար պահերին, երբ

զգացվում էր կենդանի ուժի չափազանց խիստ կարիք, ռազմական իշխանությունները դիմում էին այդ խմբերին: Նրանք, սովորաբար, գալիս էին իրենց ձեռքի վրա և իրենց ամբողջ կազմով՝ խմբապետից մինչև շարքային չափազանց անհուսալի էին: Նրանք դեպի առաջնագիծ էին գալիս, հիմնականում, թալանի նպատակով և չէին ցուցաբերում ո՛չ կապվածություն, ո՛չ պարտքի զգացողություն: Հայաստանի այն հատվածի հանդեպ, որն իրենք՝ նախկին թրքահպատակ հայերը, իրենց համար հայրենիք չէին համարում:

Իրական հետաքրքրություն ցուցաբերելով միայն կանխավարձերի վճարման նկատմամբ, իրենց կայանման տեղերում՝ հատկապես ռուսական և մոլոկոնական գյուղերում, կազմակերպելով անկարգություններ և թալան, այդ խմբերն այդպես էլ չկատարեցին իրենց վրա դրված ու ոչ մի հանձնարարություն և չկարողացան լրացնել մեր բանակում այն տեղը, որը թափուր էր հեծելագործի սակավաթիվ լինելու պատճառով: Մնում է միայն արձանագրել, որ այդ խմբերի գործունեությունից ավելի շատ վնաս էր գալիս, քան օգուտ:

Երջանիկ բացառություն էին երկու փոքրատիվ հեծյալ խմբերը: Մեկը՝ 20 ձիավորներով աչքի ընկավ Կուլնի օպերացիայի ժամանակ և նրա խմբապետին շնորհվեց կրտսեր-ենթասպայի զինվորական կոչում: Իսկ մյուսը՝ 12 ձիավորներից կազմված խումբը դեպի Վեզենկոյ արշավող թուրքական շարասյունից երկու գերի բերեց 2-րդ բրիգադի շտաբ, որտեղ, ինչպես արդեն նշվել է, գերիները կարևոր տեղեկություններ հաղորդեցին Վե-

զենկոյի ուղղությամբ թուրքերի հարձակման ժամկետների վերաբերյալ (հոկտեմբերի 27-ը):

Չնայած իր աղքատությանը, Հայաստանը հաջողաբեց ձևավորել թեթև հաուրիցային և մխոցային հրանոթներով համալրված մի քանի լեռնային մարտկոցներ: Մարտկոցները համալրված էին նաև անգլիական հրետանավոր ընտիր գրաստների բավարար գլխաքանակով և ռուսական ժամանակներից մնացած շատ լավ պահպանվող ձիերով: Այնպես որ, ձիաքարշի կազմը շատ մոտ էր բավարար լինելուն, սակայն հետևակային զորամասերում այդ նույնի բացակայության պատճառով չէր հաջողվում տեղադրել հաստիքներով հետևակի համար նախատեսած հրետանային շարժակազմը:

Հայկական հրետանու նյութական մասը կազմում էին ռուսական և հայկական մարտական զործողություններում բավականին մաշված թեթև հրանոթները, որոնք, բացի ամենից, արդեն հնացած համակարգի զինատեսակներ էին (1900թ. նմուշ): Բացառություն էին 1-ին մարտկոցի 1902 թ. նմուշի երկու թնդանոթները (տեղեկանքը՝ Մոսեյանցից):

Մարտկոցներում ներքին իրավիճակը լավ էր: Դա պայմանավորված էր նախ նրանով, որ մարտկոցներն ունեին իրենց կից փոքրիկ տնտեսություններ, իսկ երկրորդն էլ՝ այդ զորատեսակում ոչ կանոնավոր տարրերի, մասնավորապես, ամենուրեք կազմալուծում սփռող խմբապետների բացակայությամբ: Մեր հրետանու համեմատաբար բարվոք կացության հարցում զգալի դեր խաղաց այն հանգամանքը, որ մյուս՝ ոչ այդքան նեղ մասնագիտական զորատեսակների համեմատ, մեր

հրետանավոր զինվորականությանը արտոնված էր ավելի շատ նախաձեռնողականություն և ինքնուրույնություն: Այդ առումով թեթև դաշտային մարտկոցների աշխատանքը լինում էր միանգամայն բավարար, եթե նրան պահպանում էր կայուն հետևակը: Քրդերի և թաթարների, ու, առհասարակ, ոչ կանոնավոր հակառակորդի հետ պայքարի համար մարտկոցներին կից գտնվում էին նաև միսոցային դասակներ, որոնց հրետանին տեղափոխում էին եզներով:

Հեռախոսային պարագաների բացակայությունն իրեն խիստ զգացնել էր տալիս հատկապես հրետանու կրակը կառավարելու ժամանակ:

Հրետանու սպայական կազմը լավն էր, այդտեղ ընդգրկված էին այնպիսի հայտնի հրետանավորներ, ինչպիսիք էին գեներալ Արարատյանը (Արարատովը), գեներալ Ղամազյանը (*Գամազովը*)¹⁸⁴ և ուրիշներ: Շարքային զինվորական կազմը, ինչպես հարիր է ընտրյալ

¹⁸⁴ **Ղամազյան (Սահառունի -Ղամազյան) Կոնստանդին Միքայելի** (Գամազով Կոնստանտին Միխայլովիչ) (1866թ., Թիֆլիս – 1928 թ., Թիֆլիս) – ցարական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ-մայոր, գեներալ-լեյտենանտ, անկուսակցական: Գեներալ Ղամազյանը, Քրիստափոր Արարատյանի հետ միասին, հանդիսանում են հայկական բանակի հրետանու կազմակերպիչները, այդ զորատեսակը բանակում դարձնելով լավագույնն ու ամենամարտունակներից մեկը: Նկարագրվող ժամանակահատվածում եղել է Նոր-Բայազետի զորաջոկատի հրամանատարը: Հայաստանի խորհրդայնացումից հետո ձերբակալվել է, ուղարկվել Ռյազանի համակենտրոնացման ճամբար, տե՛ս *А.А. Григоров, А.И. Григоров, Заключенные...*, էջ 389: Ազատվելուց հետո բնակվել է Թիֆլիսում: Հետմահու արդարացվել է, տե՛ս *Список лиц, ...*:

գորատեսակի գորամասերին, որն ունի նաև իր տնտեսությունը, միանգամայն բավարար էր և աչքի ընկնելով գերազանց կարգապահությամբ, տալիս էր դասալքության ամենափոքր տոկոսը :

Արկերի պակաս չէր նկատվում: Քանաքեռում գտնվող հրետանային վարչությանը կից, բացի արկերի ու փամփուշտների պահեստներից, գործում էին նաև հրետանային արհեստանոցներ և փամփուշտների գործարանը, որտեղ ձևափոխվում էր Հայաստանում մեծ քանակությամբ առկա Լեբելի և Լյուսի փամփուշտները 3-գծայինների, որոնց պակասը զգացվում էր: Ալեքսանդրապոլում նույնպես բացվել էին մեծ հրետանու արհեստանոցներ: Վերափոխված փամփուշտները բավարար արդյունք չէին տալիս և օգտագործվում էին միայն այն դեպքում, երբ 3-գծայինները ամբողջովին սպառված էին լինում:

Ավիացիոն ջոկատը ձևավորման ընթացքում էր: Ձուկատի հրամանատար Ղուլյանը թեև ձգտող և աշխատող սպա էր, սակայն նման գորամասի կառավարման համար չունեի անհրաժեշտ փորձ: Մեր ունեցած մի քանի թռչող սարքերից Ֆրանսիայից բերած միայն երկու հատը պետանի էին թռիչքներ իրականացնելու համար: Նրանցից մեկը (ավելի փոքրը) փորձնական թռիչքների ժամանակ այնքան էր վնասվել, որ թուրքական պատերազմի ժամանակ այն նույնիսկ հնարավոր չէրավ օգտագործել: Ընդհանուր առմամբ նշենք, որ օդակայանի բացակայության և բարձր սարերի առկայության պարագայում, օդային հետախուզություն լեռնային պատերազ-

մում սավառնակից պահանջում են բարձրանալ զգալի բարձրության վրա:

Ինժեներական գորքերը բաղկացած էին մեկ գումարտակից, որը հաստիքներով ընդլայնվել էր մինչև ինժեներական գնդի: Հավանաբար, սարքավորումների բացակայության պատճառով, այդ գունդը դեռևս գտնվում էր ձևավորման փուլում, նրա կազմը հաստիքայինով նախատեսվածից փոքր էր և թուրքական պատերազմում այդ գունդը մասնակցություն չունեցավ:

Հայաստանում գտնվող մի քանի ռադիոկայանները պատերազմական գործողությունների ընթացքում որևիցե օգուտ չտվեցին, բացառությամբ Էրիվանի հզոր ռադիոկայանի, որը կապ էր պահպանում Թիֆլիսի հետ և բռնում էր Մոսկվայի, Բաքվի և այլ ռադիոգրերը:

Բոլոր այս ինժեներական գորամասերը, ինչպես նաև ավտոմեքենաների գարաժները, ենթարկվում էին գլխավոր ռազմա-տեխնիկական վարչության պետին: Ռուսական գորամասերից մնացած 40 ավտոգարաժներում առկա հին 40 մեքենաները պահպանվում և օգտագործվում էին, կարելի է ասել, կատարյալ ձևով: Ընդ որում, Էրիվանի շրջանում զինամթերքի և պարենի առբերումն իրականացվում էր բեռնատար ավտոմոբիլներով: Եթե հաշվի առնենք, որ այդ շրջանի գյուղացիությունը գործնականում զուրկ էր փոխադրամիջոցներից, ապա այդ բեռնատարների օգտագործումը ունենում էր էական նշանակություն:

Որպեսզի Հայաստանի զինուժի վերաբերյալ քննարկումը համարենք ավարտված, անհրաժեշտ է հիշատակել նաև Հայաստանում միակ ամրոց համարվող Կար-

ար: Կարսի ամրոցի մասին արդեն բավականին մանրամասնորեն խոսվել է նախորդիվ, իսկ Ալեքսանդրապոլն էլ իրենից ներկայացնում էր ընդամենը բերդապահեստ և չէր կարող համարվել դաշտային ամրություն:

Ինչ վերաբերում է Հայաստանի գորքերի սանիտարական միջոցներին, ապա դրանք բաղկացած էին 3 գնդային հոսպիտալներից, 2 լազարեթներից և մեկ սանիտարական գնացքից (տեղեկանքը՝ բժշկից):

Դիտարկելով Հայաստանի զինված ուժերը թուրքական պատերազմից առաջ և պարզելով նրանց չնչին լինելը, այժմ պարզենք, թե ում դեմ և ինչպես էին նրանք խմբավորված:

Մկսելով դիտարկումը աջ թևից, ունենք հետևյալ պատկերը.

Մեր նկատմամբ թշնամաբար տրամադրված մահմեդական և քրդական բնակչությունից Կարսի տեղական շրջանի, ինչպես նաև թուրքական սահմանի պաշտպանության համար տեղակայված էր Կարսի ջոկատը:

Նրա կազմում էին.

5-րդ գնդի թվով մեկ՝ 6-րդ վաշտը, որ գտնվում էր Արդահանում:

Գնդապետ Մազմանյանի Օլթիի ջոկատը (3 գումարտակից բաղկացած 1-ին հետևակային գունդը), որը Փանջուրի լեռնանցքից՝ Փենյակի վրայով տեղակայված էր մինչև Վասկուտը ներառյալ, Կարսի հեծյալ միլիցիան (40 մարդ), Փիլոսի պարտիզանական հարյուրյակը (մոտ 120-150 մարդ): Ռազմաճակատի հաստիքի ձգվածությունը -[?] վերստ, զինվորների թվաքանակը՝ մոտ 900 մարդ:

Մերդենեկի շրջանում տեղակայված էր գնդապետ Սարմաքեշյանի Մերդենեկյան ջոկատը, որը պաշտպանում էր Օլթիի ջոկատի թիկունքը տեղի մահմեդականներից:

Ջոկատը բաղկացած էր հիշատակված Արդահանի վաշտից, Ալեքսանդրապոլի պահակային գումարտակի 2 վաշտերից և անշարժ 8 միտցային հրանոթներից: Զինվորների թվաքանակը՝ 150 մարդ:

Գնդապետ Միրիմանյանի Սարիղամիշի ջոկատը զբաղեցնում էր Իգդիլի ագարակից ու Կարաուրգան-Քարակուրտով անցնող գիծը: Ջոկատի կազմում էին. 3 գումարտակից բաղկացած 4-րդ հետևակային գունդը, 5-րդ մարտկոցի 2 երկու լեռնային հրանոթներ, Ալեքսանդրապոլի պահակային գումարտակից թվով մեկ՝ 2-րդ վաշտը: Ճակատային հատվածի ձգվածությունը-[-?] վերստ, զինվորների թվաքանակը՝ 1300 մարդ:

Գնդապետ Շահբուդաղյանի Կաղզմանի ջոկատը. 5-րդ հետևակային գնդի 11 վաշտերը, 2-րդ մարտկոցի 1 դասակ, Կաղզմանի հեծյալ միլիցիան: Ջոկատի աջ թևը՝ դեպի Կարակուրտ, ձախ թևը՝ դեպի Կուլնի¹⁸⁵ կողմը: Ճակատային հատվածի ձգվածությունը-[-?] վերստ, զինվորների թվաքանակը՝ 450 մարդ:

Սուրմալուի տեղական շրջանի, ինչպես նաև թուրքական սահմանի պաշտպանության համար այստեղ էր տեղակայված գնդապետ Խուդաբաշյանի (Խուդաբաշևի) ջոկատը, որը բաժանված էր Կուլնիի և Իգդի-րի մարտական տեղամասերի:

¹⁸⁵ Կուլն (Կուլպ) – ավան, գյուղաքաղաք ՀՀ Արարատյան նահանգի Սուրմալուի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991թ., էջ 266:

Ջոկատի կազմը. 9-րդ հետևակային գունդ, 8-րդ հետևակային գունդ, 8-րդ մարտկոց: Ռազմաճակատի հատվածը՝ Կուլն-Իգդիր¹⁸⁶ -Դաշբուռուն¹⁸⁷ -Թղազիվսու¹⁸⁸-Կաջար¹⁸⁹: Ճակատային հատվածի ձգվածությունը-[-?] վերստ, զինվորների թվաքանակը՝ 1600 մարդ:

Շահթաղտի¹⁹⁰ ռազմաճակատ՝ գեներալ Շելկովնիկով¹⁹¹: Ջոկատի կազմը. 2-րդ և 3-րդ հետևակային գնդերը, 11-րդ լեռնային մարտկոցը, 1-ին թեթև մարտկոցը,

¹⁸⁶ Իգդիր – ավան, քաղաք ՀՀ Արարատյան նահանգում, Սուրմալուի շրջանի (գավառի, օկրուգի, ույեզդի) կենտրոնը: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.2, Երևան, 1988թ., էջ 506,507:

¹⁸⁷ Դաշբուռուն-գյուղ ՀՀ Արարատյան նահանգի Սուրմալուի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.2, Երևան, 1988թ., էջ 28:

¹⁸⁸ Թղազիվսու: Նման գրելաձևով տեղանուն մեզ հասանելի այլ աղբյուրներում չի հայտնաբերվել:

¹⁸⁹ Կաջար: Հուշերում բերված տարածքին համապատասխանող նման գրելաձևով տեղանուն մեզ հասանելի այլ աղբյուրներում չի հայտնաբերվել:

¹⁹⁰ Շահթախտ (Շահթախտը, Շահթախտի) – գյուղ ՀՀ Արարատյան նահանգի Նախիջևանի շրջանում:

¹⁹¹ **Շելկովնիկով, Շելկովնիկյան, Մետաքսյան Գրիգոր Հարությունի** (Շելկովնիկով Գրիգորիյ Արտեմնիչ) (1867թ., Թիֆլիս – 1921թ., վայրն անհայտ է) – ռուսական և հայկական բանակների գեներալ-մայոր, անկուսակցական, եղել է Նախիջևանի ուղղությամբ գործող զորախմբի հրամանատարը: 1921-ի փետրվարի դրությամբ նրա անունը հանդիպում է ձեռքակալված հայ սպաների ցուցակում, տե՛ս Ա.Ա. Григоров, А.И. Григоров, Заключенные..., էջ 389: Ըստ որոշ տեղեկությունների, դեռևս Ռյազանի համակենտրոնացման ճամբար չհասած, ինքնասպան է եղել՝ իրեն դուռ նետելով կալանավորներին տեղափոխող գնացքից: Հետմահու արդարացվել է, տե՛ս Список лиц, ...:

գրահագնացքը Ղամարլու¹⁹² կայարանում: Ճակատային հատվածը՝ Վերին Ղաբաղլու¹⁹³-Քիվրախ¹⁹⁴- Շահթաղտի: Ճակատային հատվածի ձգվածությունը-[-?] վերստ, զինվորների թվաքանակը - [-?]մարդ:

Դարալագյազի¹⁹⁵ ջոկատ՝ Տեղեկանքը գեներալ Մելիք-Մուրադյանից¹⁹⁶:

Գեներալ Ղամազյանի Բայազետի ջոկատ: Զորակայանը՝ Բասար-Գեչար:

Բասար -Գեչարի առանձին գումարտակ

Գեներալ Խանքալամյանի (Խանկալամովի)¹⁹⁷ Դիլիջանի ջոկատը (տեղեկանքը՝ բժշկից):

¹⁹² Ղամարլու - այժմյան Արտաշատը:

¹⁹³ Ղաբաղլու (Ղաբաղլի, Ղաբախլու)- գյուղ ՀՀ Սյունյաց նահանգի Շարուր-Դարալագյազի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.3, Երևան, 1991թ., էջ 493:

¹⁹⁴ Քիվրախ- գյուղ և երկաթուղային կայարան ՀՀ Արարատյան նահանգի Նախիջևանի շրջանում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.5, Երևան, 2001թ., էջ 377:

¹⁹⁵ Դարալագյազ-վարչատարածքային շրջան ՀՀ Սյունյաց նահանգում: Տե՛ս ՀՀՇՏԲ, հ.2, Երևան, 1986թ., էջ 501:

¹⁹⁶ **Մելիք-Մուրադյան Միքայել Գևորգի** (1868թ., Շուշի – 1937թ., Թավրիզ) –ռուսական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ-մայոր, անկուսակցական: Նկարագրվող ժամանակահատվածում՝ Դարալագյազի ուղղության գործախմբի հրամանատար: Հայաստանի խորհրդայնացումից հետո ձերբակալվել է, Փետրվարյան արստամբության շնորհիվ դուրս է եկել բանտից, եղել է այդ հակաբոլշևիկյան ապստամբության զինվորական ղեկավարներից մեկը: Ապստամբության պարտությունից հետո անցել է Պարսկաստան:

¹⁹⁷ **Խանքալամյան Գևորգ Եսայու** (Խանկալամով Գևորգի Իսանիչ) (1867 – 1921-ից հետո) ցարական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ-մայոր: Նկարագրվող ժամանակահատվածում եղել է Դիլիջան-Իջևան ուղղության գործախմբի հրամանատարը: Հայաստանի խորհրդայնացումից հետո ճակատագիրն անհայտ է:

Ղազախ¹⁹⁸- Խորհրդային Ադրբեջանի սահման՝ 6-րդ գունդ և 7 -[?]:

Որպեսզի ավարտին հասցնենք մեր դիրքերի օղակը, նշենք, որ Ալեքսանդրապոլում տեղակայված էին մշտապես վերաձևավորվող հեծյալ բրիգադը և պահակային գումարտակի 2 վաշտեր:

Վրաստանի սահմանը պահպանում էր Ղարաքիլիսայի սահմանապահ բրիգադը:

Էրիվանում տեղակայված էին Էրիվանի պահակային գումարտակը, ինժեներական գունդը, Քանաքեռում հանգստի տեղավորված 10-րդ գունդը և առանձին հեծյալ դիվիզիոնը:

Այսպիսով, բոլոր զորքերը տեղակայված էին այնպիսի դիրքում, որ խիստ ձգված լինելու պատճառով բավականին նոսր էր զբաղեցված պահակակետերով և զորքը, փաստորեն, իրականացնում էր սահմանապահ ծառայություն:

Հայկական պահեստագործ բաղկացած էր 4 ½ գումարտակներից, այդ թվում նաև Էրիվանի հետևակը և 2 հեծյալ գնդի հատուկ հեծյալ դիվիզիոնը: Բոլոր սահմանները զբաղված էին և հնարավոր չէր նրանք թուլացնել բոլոր կողմերից թշնամիների հնարավոր հարձակման վտանգի առկայության պատճառով:

Թեև Կարսի հրամանատարությունը գործակալական հետախուզության միջոցներով պարզել էր թուրքերի 2 հետևակային դիվիզիայի, 2 առանձին հետևակային գումարտակների և մոտ 8 հեծելավաշտերի կենտրոնացու-

¹⁹⁸ Ղազախ – գյուղ ՀՀ Շիրակի նահանգում: Այժմ՝ շրջկենտրոն Ադրբեջանական Հանրապետությունում:

մը Բարդուսի շրջանում, սակայն գլխավոր հրամանատարությունը հնարավոր չհամարեց Կարսի գորախումբն ուժեղացնելու համար այլ ուղղություններից ուժեր տեղափոխել դեպի այդ շրջան:

Հիմնական պատճառն այն էր, որ, օրինակ՝ անմիջականորեն Էրիվանին էին սպառնում 11-րդ թուրքական դիվիզիան, Նախիջևանի թաթարները և բոլջևիկյան հեծյալ գունդը:

Դիվիզան-Քարվանսարայի կողմից մեծ էր սպառնալիքը ի դեմս խորհրդային զորքերի, որոնք անընդհատ վխտում էին ռազմաճակատում:

Բնականաբար, այդ ռազմական միջադեպը Հայաստանի համար միայն հրաշքով կարող էր բարեհաջողելք ունենալ: Նման քաղաքականություն վարելու պարագայում մնացած բոլոր դեպքերում Հայաստանի համար կանխագծված էր ավերում:

Այդ ամենն էր պատճառը, որ մենք, ունենալով բավականին հեղհեղուկ ուժեր, զրկված էինք մեր ուժերը կենտրոնացնել բացառապես թուրքերի դեմ և թուրքական հարձակման առաջին իսկ քայլերից սկսեցին պարտություններ կրել:

Համենայն դեպս, ինչ քայլեր ձեռնարկեց գլխավոր հրամանատարությունը Կարսի ուղղությամբ իրավիճակը շտկելու համար: Կրկնենք այդ մասով նախորդիվ շարադրվածը:

I. Գլխավոր հրամանատարության որոշումը՝ Կարսի զորախմբի աջ թևի ապահովման համար Կարս տեղափոխել Էրիվանի պահակային գումարտակն ու հեծյալ գունդը:

II. Սուրբաշ-դայան շրջանցելու համար 7 գնդի՝ որպես շարժական պահեստագործի ուղարկելու վատ կազմակերպումը:

III. Արդաղանի ուղղության ուժեղացումը սկզբից Սմբատի խմբով և, ի վերջո՝ 8-րդ հետևակային գնդով:

Այդ ուժերի նման՝ աստիճանաբար ուղարկելը մեր անհաջողությունների պարագայում որևիցե օգուտ չտվեց և չէր կարող տալ: Իսկ թուրքերի կողմից Կարսը գրավելու պահին 2-րդ գնդի Բաշկադիկլար հասնելը ռազմական գործողությունների առումով այլևս որևիցե նշանակություն չունեցավ:

Այդ 3 գնդերով Կարսի ուղղության ուժեղացնելը իրականացվել էր մյուս ճակատների ամրությունը թուլացնելու ռիսկով և պայմանավորված էր զուտ այն օրհասական վիճակով, որը վերջնականորեն պարզ դարձավ արդեն թուրքերի Կարսի վրա արշավելու պահին:

Կասկածից վեր է, որ եթե այդ բոլոր ուժերը առկա լինեին Կարսի ճակատում թուրքական հարձակման սկսվելու պահին, ապա, նույնիսկ մեր այն թույլ կազմակերպվածության պարագայում, ինչի մասին արդեն խոսել ենք, պատերազմի ելքը մեր համար կարող էր անհամեմատ բարեհաջող լինել: Ի վերջո, թուրքերի կանոնավոր ուժերը չէին գերազանցում 11 գունդ՝ այն էլ հաղորդակցման գծերի խիստ ձգվածության, թուրք զինվորների վատ սնվելու և վատ հանդերձված լինելու պայմաններում:

Կարսի ճակատում ժամանակին գորքեր չկենտրոնացնելու պատճառները պետք է փնտրել գլխավոր

հրամանատարության կողմից ռիսկի չդիմելու և ցուցաբերված մեծ զգուշավորության մեջ:

.....

Այժմ անդրադառնանք այն անպատասխանատվությանը, ինչի մասին խոսել ենք նախորդիվ: Այդ երևույթը հետևանքն էր Հայաստանում գոյություն ունեցող դատական հատվածի կազմակերպման ձևի ու բավանդակության:

Չխոսելով քաղաքացիական դատարանների մասին նշեմ միայն, որ հասնել դատարանի կողմից արդար վճռի կայացմանը գրեթե անհնար էր: Հատկապես այն դեպքերում, եթե գործին խառնված էին թեկուզ շատ հեռավոր ձևով իշխանության լծակներ ունեցողները:

.....

Արտակարգ դեպքերում կազմվում էին արտակարգ դատարաններ (օրինակ՝ մայիսյան դեպքերը), որոնք օժտվում էին արտակարգ լիազորություններով: Հատկանշական է, որ ապստամբության ճնշման հետևանքների վերացման հետ առնչվող այդ արտակարգ դատարաններին էր միայն կառավարությունը խիզախում իրավունք տալ կայացնել մահապատժի վճիռներ:

Զինվորական դատարանների առնչությամբ կառավարությունը ոչ մի կերպ չէր կարողանում իրեն ստիպել մահապատիժ սահմանել զինվորական բնույթի ծանր հանցագործությունների համար (օրինակ՝ դավաճանություն, դասալքություն, փոքրոգություն), ինչպես որ դա ընդունված է ամենադեմոկրատական երկրներում:

Նման խիստ միջոցների անհրաժեշտությունը թելադրված է այն պարզ հանգամանքով, որ զինվորին մարտի դաշտ ուղարկելու համար նրանք պետք է համոզված լինեն, որ փախուստը մարտի դաշտից պատժվելու է մահով:

Զինվորական իշխանությունների անընդհատ կրկնվող պնդումներից հետո, 1920 թ., վերջապես մահապատժի վերաբերյալ օրենքն ընդունվեց: Սակայն կառավարության երկչոտությունն ու տատանումները անդրադարձան այդ օրենքի վրա՝ նրա ոչ հստակ ձևակերպման և գործնականում համապատասխան § կիրառել չկարողանալու տեսքով: Ինձ, օրինակ, հայտնի չէ որևիցե դեպք, երբ զինվորական հանցագործություն կատարելու համար որևէ մեկը ենթարկվի մահապատժի: Թուրքական պատերազմի ժամանակ, իբր բնակչությանը վախեցնելու նպատակով, Էրիվանի և Կարսի հրապարակներում կառուցած կախաղանները դարձան անբանների համար զվարճանալու ու ծաղրի առարկա:

Այս փաստերը խոսուն կերպով վկայում են, թե որչափ Հայաստանում բացակայում էին ուժեղ իշխանությունն ու իրական արդարադատությունը:

Դա էլ ասենք, որ այն օրենքները, որոնց համաձայն դատապարտվել կարող են նաև դատավորները, այնքան էլ որոշակի չէին: Մինչև նոր օրենքների մշակելը հրահանգված էր ղեկավարվել ռուսական կայսերական օրենքներով, որոնք փոփոխման չէին ենթարկվել և բավականաչափ կիրառելի չէին Հայաստանում հաստատված հանրապետական կարգերի պայմաններում:

Ինձ հայտնի չէ, որ, ասենք, Հայաստանում աշխատանքներ ընթանալին քաղաքացիական և զինվորական նոր դատական օրենքների մշակման ուղղությամբ: Մինչդեռ նախկին ռուսական օրենքների անկիրառելիությունը Հայկական հանրապետությունում հենց վկայում է, թե որքան քիչ ուշադրություն էր հատկացվում Հայաստանում դատարաններին, որոնք, ինչ խոսք, քաղաքացիական և զինվորական կյանքի կարևորագույն կարգավորիչներից են:

Անցնելով Հայաստանի վարչական համակարգի քննարկմանը, ավստոսանքով պետք է նշել, որ օրինակաւնության և կարգ ու կանոնի ապահովման այդ մարմինը կատարում էր, ցավոք, միանգամայն հակառակը: Վարչակարգը Հայաստանում այն մարմինն է, որը խախտում է օրենքները, թաքցնում դասալիքներին, զբաղված է կաշառակերությամբ և ճնշում է թույլերին: Իր պարտականությունների նկատմամբ նման դրսևորում ցուցաբերելու պարագայում, բնական է, որ վարչակարգը չէր կարող գորքին աջակցել մարտական խնդիրների կատարման հարցերում, այլ հակառակը՝ դասալիքներին թաքցնելու միջոցով նպաստում էր ռազմաճակատի կազմալուծմանը:

Անհրաժեշտ է նշել, որ ռազմական նախարարության պահանջներին համապատասխան, զորամասերը վարչական մարմիններին դասալիքների վերաբերյալ գրավոր հարցումներ էին հղում: Այդ նամակները, որպես կանոն, վերադառնում էին նույն մակագրությամբ <<վերադարձվում է չհայտնաբերման պատճառով>>:

Ռազմական նախարարությունը փորձեց դասալքության դեմ պայքար մղել հատուկ եղանակով. երկրում հաստատվեց դասալիքներին հայտնաբերող կոմիսարների հատուկ ինստիտուտ: Բայց միլիցիայի ընդհանուր ծախվածության պարագայում ոչ մի միջոցառում չէր կարող բերել դրական արդյունքի: Միլիցիայի նման վիճակն ու կեցվածքը, բնականաբար, պատահական չէր և ուներ խորը բարոյական և նյութական բնույթի արմատներ ու պատճառներ: Այդ իրավիճակի ստեղծման հարցում զգալի նշանակություն ունեցավ նաև գորքերի առումով այն գերլարումը, որն առկա էր Հայաստանում՝ զինվորական ծառայության 13 տարիք (զինապարտություն 19-ից մինչև 32 տարեկանների համար):

Կարճ ասած, միլիցիայի և, առհասարակ, վարչակարգի ցածր բարոյական մակարդակը պայմանավորված էր այդ պաշտոններին համապատասխանող և ազնիվ աշխատողների բացակայությամբ, իսկ այդ մարմիններում այլանդակ չափերի հասնող կաշառակերությունը պայմանավորված էր, առաջին հերթին, խիստ անբավարար աշխատավարձով և երկրի ընդհանուր տնտեսական ճգնաժամով:

Հայաստանի վարչական մարմիններում ինձ հայտնի է ընդամենը մեկ պետական դավաճանության դեպք: Դա Կարսի նահանգապետ Ղորղանյանի առաջարկությամբ Հայաստանի կառավարության կողմից գնդապետի կոչմանն արժանացած Արդահանի գավառապետ Կադիմովի աղմկահարույց գործն է:

Աղմկահարույց այդ գործի էությունն այն էր, որ զինվորական իշխանությունները՝ զլիավորապես գեներալ

Հովսեփյանը, մեղադրում էին Արդահանի գավառապետ Կադիմովին դավաճանության և հիմնականում՝ մահմեդականներով բնակեցված այդ գավառի քրդերի և թուրքերի հակապետական քայլերին նպաստելու համար:

Կարսի նահանգապետ Ղորղանյանը, հակառակ, ապացուցում էր Կադիմովի նվիրվածությունը հայկական շահերին: Այդ ամենը միայն հաստացնում էր գորքերի հրամանատարի սեղանին և արտաքին գործերի նախարարությունում պտտվող <<Կադիմովի գործ>> վերտառությամբ թղթապանակը: Այդ գործն ավարտվեց միայն նրանից հետո, երբ Կարսի անկումից հետո թուրքերը Կադիմովին Արդահանում նշանակեցին նույն՝ գավառապետի պաշտոնում¹⁹⁹:

Հավելենք նաև, որ վարչակարգի գլխավոր աշխատողները, հիմնականում, նախկին ռուսական համակարգի ոստիկաններն ու վարչական այլ պաշտոնյաներն էին: Իսկ ինչպես հայտնի է, ռուսական կառավա-

¹⁹⁹ Հարկ է նշել հետևյալ հանգամանքը. երբ ՀՀ կառավարությունը թողարկեց պետական առաջին պարտատոմսերը, Կադիմովի ղեկավարած Արդահանի գավառը պետական գանձարան փոխանցեց 56 միլիոն ռուբլի գումար, որն ավելի շատ էր, քան երկրի մնացած բոլոր գավառների փոխանցածը միասին վերցրած, տե՛ս Վ. Հարությունյան, Կարսի վերջնախաղը: Հայտնի է նաև, որ հայկական զինուժի նահանջի օրերին գնդապետ Կադիմովը բառացիորեն իր գրպանից Արդահանի հայերին գումար է տրամադրել և նրանք բոլորը անվնաս տեղափոխվել են Վրաստան: Քեմալականների օրոք Կադիմովը շատ կարճ ժամանակ է կառավարել Արդահանում: Հետագայում նա ձեռքակալվում է, երկու տարի անցկացնում բանտում, հետո վերադառնում է Արդահան: Այստեղ նրա տան վրա զինված հարձակում է տեղի ունենում, ինչի արդյունքում սպանվում է: Տե՛ս Վ. Յարութիւնեան, Կարսի նահանգապետի յուշերը, էջ 153-154:

րությունը, չնայած իր ամուր և հզոր իշխանությանը, չէր կարողանում արդյունավետ պայքարել այդ մարմիններում ծաղկող կաշառակերության դեմ:

Հայաստանում այդ չարիքի դեմ որևիցե պայքար չէր մղվում: Հավանաբար, մարդկանց խիստ պակասը ստիպում էր վարչակարգին իրենց շարքերը գրկաբաց ընդունել սպայակազմից մաղված այն անպետք տարրը, որին գորամասերը հաջողացնում էին դուրս մղել իրենց կազմից:

Այդ քայլերը կործանարար էին թե՛ գորամասերի, թե՛ վարչակարգի համար: Մի կողմից այդ տարրերը չէին գնահատում իրենց գորամասն ու զինվորական ծառայությունը, ինչը թուլացնում էր կարգապահությունը գորամասերում, մյուս կողմից, այդ նույն տարրերը արդեն վարչական մարմիններում վարում էին հանցավոր գործունեություն, ինչը բացասաբար էր անդրադառնում դրանց գործունեության և հեղինակության վրա:

Մարդկանց պակասի պատճառով ցածր վարչական պաշտոնների սովորաբար ընդունում էին ճարպիկ դասալիք զինվորների և ենթասպանների: Մի կողմից դա զրկում էր գորամասերը համեմատաբար ուսյալ ծառայողներից, մյուս կողմից՝ դառնում էր հրապուրիչ մի խայծ հնարավոր դասալիքների համար:

Ավագակության ու թալանի դեմ պայքարելու նպատակով վարչական մարմիններում զինված խմբերի ստեղծումը որևիցե շոշափելի արդյունք չտվեց: Որպես բացառություն անհրաժեշտ է նշել գործույթ և խիզախ Մամիկոնյանի կազմավորած Կարսի շրջանային միլիցիայի ջոկատը: Մամիկոնյանն ուներ ենթասպայի կո-

չում և նրա այդ ջոկատը $\frac{1}{2}$ հարյուրյակի տեսքով մասնակցեց Կարսի գորախմբի մի քանի գործողություններին:

Միլիցիայի մյուս հեծյալ և հետիոտն խմբերը՝ իրենց խուճապայնության պատճառով, որևէ օժանդակություն զինված ուժերին չցուցաբերեցին:

Արդահանի հեծյալ միլիցիան կազմված էր Կադիմովի թիկնապահներից: Միլիցիայի կազմակերպական կառույցի ոչ լիարժեք կայացած լինելու պատճառով միլիցիայի տեսուչ Հրաչյայի դերն աննկատ էր և անորոշ:

Հայաստանի վարչակազմում ամենախոշոր և ակաճավոր դեմքերից մեկը, անկասկած, Կարսի նահանգապետ Ղորղանյանն էր: Անհերքելի վարչական ունակություններով օժտված այդ անձնավորությունը հին ռուսական կառավարման ձևի և ռուսական չինովնիկական համազգեստի կողմնակիցն ու հետևորդն էր:

Կարսի մարզը Հայաստանին հանձնելուց հետո Ղորղանյանը ենթարկվում էր գեներալ Հովսեփյանին, որին տրված էին նաև նահանգապետի լիազորություններ: Գեներալ Հովսեփյանի պահանջկոտության պատճառով Ղորղանյանը հասավ նրան, որ գեներալ-նահանգապետի պաշտոնը Կարսում չեղարկվեց և ինքը, որպես քաղաքացիական նահանգապետ, ստացավ լիակատար անկախություն:

Գեներալ –նահանգապետության շրջանին է վերաբերում այն թշնամանքը, որ առկա էր գեներալ Հովսեփյանի և Ղորղանյանի միջև: Այդ թշնամանքը թեժանում էր - Կադիմովի գործի, ինչպես նաև այլ հանգամանքներով, որոնք ի հայտ էին գալիս մարզում առկա ռազմա-օպե-

րատիվ իրավիճակում զինվորական և քաղաքացիական իշխանությունների հանդեպ միասնական վերահսկող դեկավարության բացակայության պատճառով:

Անձամբ ինքը՝ Ղորղանյանը, կրում էր ռուսական վարչակարգի պետական խորհրդականի (գնդապետի և գեներալ-մայորի միջև, զինվորական հստակ համարժեքը չկար) համազգեստ և իր ենթականերից էլ պահանջում էր կրել ցարական ժամանակների չինովնիկական տվյալ պաշտոնին համարժեք զինվորական համազգեստներ: Դրան ընդդիմանում էին զինվորականները, պատճառաբանելով, թե վարչակազմի կատարած օրինախախտումները տեղական բնակչության մոտ անդրադառնում են նաև զինվորական համազգեստ կրող զինծառայողների հեղինակության վրա: Զինվորական համազգեստ կրելը դադարեցնելու վերաբերյալ ռազմական գերատեսչության պահանջին Ղորղանյանը չենթարկվեց:

